

**«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ»**

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»

«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»



ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

О РАЗВИТИИ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

ON THE DEVELOPMENT OF THE MILITARY INDUSTRY SYSTEM

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ
ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի
և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ֆրանսիայի Հանրապետության
Նախագահ Ն. Սարկոզիի պաշտոնական հանդիպումը.

Երևան, 2011 թ. հոկտեմբերի 7



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3(69). 2011

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոբանջյան Հ. Ս.

քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Գ. Ս.

(գլխավոր խմբագիր)

Այդինյան Ռ. Ա.

Այվազյան Լ. Գ.

Ապրիամով Է. Ա.

Ավետիսյան Վ. Պ. (գլխ. խմբ. տեղակալ)

Բաբայան Ն. Մ.

Գասպարյան Տ. Շ.

Դավթյան Ա. Մ.

Թունյան Վ. Վ.

Իսախանյան Մ. Ռ.

Խաչատուրով Յու. Գ.

Կարապետյան Մ. Ն.

Մաքևոսյան Ի. Ժ.

Մարգարյան Վ. Հ.

(գլխ. խմբ. տեղակալ)

Մարտիրոսյան Ս. Ս.

Մարտիրոսով Լ. Ա.

Միրզաբեկյան Ա. Ռ.

Նազարյան Ա. Ս.

Շիրինյան Մ. Ա.

Սեդրակյան Ս. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնոյան Գ. Է.

Փարսադանյան Ա. Մ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Մ. Օհանյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր 9

Մ. Ռ. Իսախանյան, Ա. Պ. Պեդրոսյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում 18

Ա. Պ. Պեդրոսյան, Ա. Ռ. Թովմասյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման տնտեսական նախադրյալները 25

Գ. Ժ. Բաղայան, ՀՀ արդյունաբերության զարգացման համատեքստում ռազմարդյունաբերական համակարգի զարգացման հեռանկարի մասին 35

Հ. Հ. Մաքևոսյան, Ռազմարդյունաբերական համալիրը և հիմնարար գիտությունը 43

Հ. Ի. Գևորգյան, Ա. Ռ. Թովմասյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման օրենսդրական հիմքերի հարցի շուրջ 54

Մ. Վ. Մարկոսյան, Ֆ. Պ. Մոլոմոնյան, Զինված ուժերում կապի կազմակերպման հնարավոր տարբերակ 61

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մ. Ս. Ավետիսյան, Չմիացման շարժմանը Ադրբեջանի անդամակցումը և Հարավային Կովկասում դրա հնարավոր աշխարհաքաղաքական հետևանքները 71

ՈԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մ. Վ. Մարկոսյան, Հակառադարների՝ որպես ռադիոէլեկտրոնային պայքարի արդիական միջոցի կիրառման որոշ հարցեր 81

ՈԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Յ. Սայադյան, Աշխարհագրական գործոնի դերը հայ ռազմարվեստի պատմության մեջ 87

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Բեգլարյան, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում զին-վորական հոգեբանի հաստատության զարգացման անհրաժեշտությունը 98

ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Տ. Ս. Սիմյան, Գերմանիայում պատերազմական–հակապատերազմական դիսկուրսը. առաջին համաշխարհային պատերազմի արժեքավորումը 107

ՈԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ 118

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լ. Հ. Պասիկյան, Զ. Վ. Փիրոյան, Գ. Ս. Չիլինգարյան, Համարի բառարան . . . 124

ԳԻՏԱՆՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
 - Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Կ. Ս. Մոսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Յու. Ս. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Վ. Ս. Մարգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Ս. Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА

МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 3(69). 2011

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Аветисян В. П. (зам. гл. редактора), *Айвазян Л. Г.*, *Айгинян Р. А.*, *Априамов Э. А.*,
Бабаян Н. М., *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетын М. Н.*,
Маргарян В. Г. (зам. гл. редактора), *Мартirosов Л. А.*, *Мартirosян С. С.*,
Матевосян И. Ж., *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*, *Парсаганян А. М.*,
Севракян С. Г., *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Тунян В. В.*,
Хачатуров Ю. Г., *Ширинян М. А.*

СОДЕРЖАНИЕ

ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: О РАЗВИТИИ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

- С. М. Оганян.* Развитие системы военной промышленности РА
как приоритетная задача оборонных реформ 9 (15)*
- М. Р. Исаханян, А. П. Петросян.* Основные мероприятия по
развитию системы военной промышленности РА в рамках обо-
ронных реформ 18 (23)
- А. П. Петросян, А. Р. Товмасын.* Экономические предпосылки
развития системы военной промышленности РА 25 (32)
- Г. Ж. Багалян.* О перспективах развития системы военной про-
мышленности в контексте развития промышленности РА 35 (40)
- Г. Г. Матевосян.* ВПК и фундаментальная наука 43 (50)
- А. И. Геворгян, А. Р. Товмасын.* О законодательных основах раз-
вития системы военной промышленности РА 54 (58)
- М. В. Маркосян, Ф. П. Соломонян.* Возможный вариант органи-
зации связи в вооруженных силах 61 (70)

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

- М. С. Аветисян.* Вступление Азербайджана в Организацию
Движения неприсоединения и возможные геополитические по-
следствия на Южном Кавказе 71 (79)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

М. В. Маркосян. Некоторые вопросы применения антирадаров как современных средств радиоэлектронной борьбы 81 (85)

ВОЕННАЯ ГЕОГРАФИЯ

А. Я. Саядян, Роль географического фактора в истории военного искусства Армении 87 (95)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

А. С. Бегларян. О необходимости развития института военного психолога в Вооруженных силах Республики Армения 98 (105)

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

Т. С. Симян. Военный–антивоенный дискурс в Германии: оценка Первой мировой войны 107 (116)

НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ 118

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Л. Г. Папикян, К. В. Пироян, Д. С. Чилингарян. Словарь номера.. 124 (126)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, доцент;
- Н. У. Аракелян,* академик НАН РА;
- В. М. Арутюнян,* академик НАН РА;
- Г. Е. Багдасарян,* академик НАН РА;
- Г. А. Геворкян,* академик НАН РА;
- Р. Г. Геворкян,* доктор геологических наук, профессор;
- А. А. Манташян,* академик НАН РА;
- Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор;
- М. М. Мирцджанян,* доктор медицинских наук, профессор;
- К. С. Мосоян,* доктор технических наук, профессор;
- В. С. Саркисян,* академик НАН РА;
- А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор;
- Ю. С. Чилингарян,* академик НАН РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3 (69), 2011

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Apremov E. A.*,
Avetisyan V. P. (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*, *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,
Gasparyan T. Sh., *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Karapetyan M. N.*,
Khachatourov Yu. G., *Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S.*,
Martirossov L. A., *Matevossyan I. Zh.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*,
Parsadanyan A. M., *Sedrakyan S. G.*, *Shirinyan M. A.*,
Ter-Grigoryants N. G., *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

CONTENTS

THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: ON THE DEVELOPMENT OF THE MILITARY INDUSTRY SYSTEM

- S. M. Ohanyan.* The development of the RA military industry system as a foreground task of the defense reforms 9 (16)
- M. R. Isakhanyan, A. P. Petrosyan.* The main steps to develop the RA military industry system within the framework of the defense reforms 18 (24)
- A. P. Petrosyan, A. R. Tovmasyan.* Economic preconditions for the development of the RA military industry system 25 (33)
- G. Zh. Badalyan.* On the development perspective of the military industry system in the context of the RA industrial development 35 (41)
- H. H. Matevosyan.* The military industry complex and fundamental science 43 (52)
- H. I. Gevorgyan, A. R. Tovmasyan.* On the legislative basis for the development of military industry of the RA 54 (59)
- M. V. Markosyan, F. P. Solomonyan.* An option for organizing communication in the Armed Forces 61 (70)

REGIONAL SECURITY

- M. S. Avetisyan.* Accession of Azerbaijan to the Non-Aligned Movement and its possible geopolitical consequences in the South Caucasus 71 (79)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY ENGINEERING

M. B. Маркосян. Some issues on the application of radar detectors as modern means of radio-electronic war 81 (86)

MILITARY GEOGRAPHY

A. Y. Sayadyan. The role of the geographic factor in the history of Armenian military art 87 (96)

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

A. S. Beglaryan. The need for developing the institute of military psychologist in the RA Armed Forces 98 (106)

MILITARY POLITICAL HISTORY

T. S. Simyan. War–antiwar discourse in Germany: assessment of the first world war 107 (117)

SOMETHING NEW IN MILITARY FIELD 118

MILITARY TERMINOLOGY

L. H. Papikyan, Q. V. Piroyan, D. S. Chilingaryan. Volume Dictionary 124 (128)

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Docent;
 - N. H. Arakelian,* Full Member, NAS RA;
 - G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;
 - Y. S. Chilingarian,* Full Member, NAS RA;
 - H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian,* Doctor of Geological Sciences, Professor;
 - V. M. Haroutyunian,* Full Member, NAS RA;
 - A. H. Mantashian,* Full Member, NAS RA;
- E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;
 - V. S. Sargsian,* Full Member, NAS RA;
 - H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.
ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

ОБОРОННЫЕ РЕФОРМЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
О РАЗВИТИИ СИСТЕМЫ
ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

THE DEFENSE REFORMS
OF THE REPUBLIC OF ARMENIA:
ON THE DEVELOPMENT
OF THE MILITARY INDUSTRY SYSTEM

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ս. Մ. ՕՀԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար



Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության գերակա խնդիրներից է: Այդ գործում կարևոր դեր ու նշանակություն ունի ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգը (Ռ-ԱՀ): Դրա զարգացումը և կառավարումը պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից են և ենթադրում են ռազմական արդյունաբերության վերածումը տնտեսության առաջատար ոլորտի: Պետության կողմից համակարգվող, առաջադիմական ծրագրեր իրականացնող և հեռանկարային նպատակներ հետապնդող Ռ-ԱՀ-ի զարգացումն զգալի չափով կնպաստի՝

- միջազգային և տարածաշրջանային գործընթացներում պետության կողմից իրականացվող քաղաքականության կշռի և ազդեցության մեծացմանը,
- ժամանակակից գիտելիքահենք արտադրական տեխնոլոգիաների մշակմանը,
- միջազգային և տարածաշրջանային տնտեսական գործընթացներին ինտեգրմանը:

Վերջին երկու տասնամյակում ի հայտ են եկել ռազմական պայքարի նոր միջոցներ, որոնցից են, մասնավորապես, գերճշգրիտ զենքերը: Դրանց և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական բազայի վրա ստեղծված կառավարման, հետախուզման և նշանառման համակարգերի համատեղ օգտագործումը կտրուկ կերպով փոխում է ռազմական գործողությունների վարման ձևերն ու մեթոդները: Նման պատերազմում չկա դասական իմաստով ռազմաճակատ, կողմերի հպման անընդհատ գիծ: Փաստորեն, մարտական գործողությունները մղվում են հակամարտող կողմերի տարածքի խորքում, և ըստ էության վերաիմաստավորվում է թիկունքի ավանդական դերը:

Այդպիսի պատերազմներում հաղթանակի երաշխիք են հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերը և գերճշգրիտ զենքերը, որոնք ապահովում են հակառակորդի գործերի խցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խցող միջոցների անհապաղ կիրառումը: Այլ կերպ ասած՝ մոտ ապագայում պետությունների սպառազինությունների համակարգերի հզորությունը բնութագրվելու է հիմնականում ոչ թե դրանց քանակով, այլ որակական հատկանիշներով:

Մյուս կողմից՝ տեղեկատվական տեխնոլոգիաների այսպիսի արագ տեմ-

պերով զարգացումը յուրօրինակ ազդեցություն է ունենում հանրության վրա: Ապագան «հարձակվում» է նրա վրա շատ արագ, քանի որ տեղի են ունենում արագընթաց փոփոխություններ քաղաքականության, տնտեսության, մշակույթի, սոցիալական բնագավառներում, անհատական և հասարակական հարաբերություններում, ինչպես նաև կացութաձևի մոդելներում և կյանքի ստանդարտների համակարգում: Նման իրավիճակում մարդը ամեն վայրկյան առնչվում է երբեմն անհասկանալի սպագային և իր համար աննկատ կերպով հայտնվում է անհարմար հոգեբանական միջավայրում, ինչը կարող է հոգեկան ցնցումների պատճառ դառնալ:

Այսպիսով՝ համաշխարհային հասարակայնությունը կարող է դառնալ ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության ինչպես կրողը, այնպես էլ զոհը, եթե չկատարվի համապատասխան նախապատրաստում և ընտելացում նոր հետինդուստրիալ միջավայրին: Անգամ հպանցիկ հայացք նետելով աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին՝ կարող ենք նկատել, որ էսպես աճել է ինքնասպանությունների, հոգեկան խանգարումների հողի վրա կատարվող սպանությունների, պլոհոլ և թմրամիջոցներ օգտագործողների, աղանդավորների թիվը և այլն, ինչը հիմնականում իրականությունը չընկալելու և դրան չհարմարվելու արդյունք է:

Արդի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է դրանք ավելի ընկալելի դարձնել կրթության ու դաստիարակության միասնական համակարգի բարեփոխման միջոցով. դպրոցական, բուհական կրթությունը պետք է ճկուն ձևով հարմարեցվի ներկայիս մարտահրավերներին, իսկ պետական կառավարման մարմիններում աշխատելու իրավունքը պետք է վերապահվի լիարժեք բարձրագույն կրթությամբ և հաջողությամբ հատուկ դասընթացներ ավարտած անձանց, հակառակ դեպքում հասարակությունը կդառնա թերի զարգացած մարդկանց հավաքածու և անգամ ունակ չի լինի պայքարելու իր գոյության համար: Այդպիսի կրթական համալիրներ են գործում աշխարհի շատ երկրներում: Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը, որի կազմում են այլ քոլեջների և հետազոտական կենտրոնների հետ մեկտեղ ԱՄՆ-ի ՋՈՒ-ի արդյունաբերական, տեղեկատվական ռեսուրսների մենեջմենտի (կառավարման) քոլեջները, ինչպես նաև Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որը պաշտպանական համակարգի գլխամասային գիտահետազոտական կենտրոնն է և գիտական մշակումներ է կատարում միջազգային հարաբերությունների, ռազմական քաղաքականության ու ռազմավարության (տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության) բնագավառներում: Այսպիսի օրինակները բազմազան են, կարելի է նշել, որ ԽՍՀՄ-ում էլ կար պետության գերակա շահերն սպասարկող նմանատիպ կրթական համալիր:

Հաշվի առնելով ՀՀ ռազմարդյունաբերության ներկա հնարավորությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ ընկերությունների ներգրավվածության բազմազանությունը, մակարդակը և հաջողությունները, ինչպես նաև ՀՀ պաշտպանական վերանայման արդյունքներով մշակված ՀՀ ՋՈՒ-ի

2011–2015 թթ. զարգացման ծրագրի գերակա խնդիրը՝ մարտական առաջադրանքի կատարման ամբողջ ընթացքում զինվորի անհատական պաշտպանվածության և հակառակորդի նկատմամբ ռազմական գերազանցության ապահովումը, ՀՀ-ն իր ռազմական արդյունաբերության զարգացումը տեսնում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը անվտանգության լուրջ երաշխիք է խաղաղությանը ձգտող ՀՀ-ի համար՝ որպես հավանական հակառակորդի ռազմավարական զսպման կարևոր միջոց: ՌԻստի համակարգի զարգացումը պետք է դառնա ազգային անվտանգության ապահովման գերակայություն:

Սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և ռազմատեխնիկական ունեցվածքով Զինված ուժերի ինքնապահովման աղբյուրը տվյալ պետության ռազմական արդյունաբերությունն է:

ՀՀ Ռ-ԱՀ-ի արագընթաց տեխնոլոգիական զարգացումը անհրաժեշտ նախապայման է պաշտպանական անվտանգության երկարաժամկետ խնդիրների լուծման համար:

Դրա հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Ռ-ԱՀ-ը պետք է սպառազինության, ռազմական ու հատուկ տեխնիկայի մշակման և արտադրության հետ միաժամանակ լուծի քաղաքացիական նախանշանակման մրցունակ, գիտատար ու բարձր տեխնոլոգիական ապրանքների ստեղծման և արտադրության ընդլայնման խնդիրը: Այս խնդրի լուծումը տնտեսության տվյալ ոլորտի տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ կատարվող ևս մեկ առաջընթաց քայլ է:

Ռ-ԱՀ-ի՝ որպես ռազմական և քաղաքացիական արդյունաբերության բազմամասնագիտական, բարձր տեխնոլոգիական, բազմազանեցված (դիվերսիֆիկացված), տնտեսապես կայուն, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ ոլորտի զարգացումը պայմաններ է ստեղծում գիտատեխնիկական առաջընթացի առանցքային ոլորտում միջոցների շարժունակության համար:

Քաղաքացիական ոլորտում Ռ-ԱՀ-ի խնդիրներ պետք է լինեն՝

1. դիմակայումը սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ոլորտում գալիք տասնամյակի ռազմավարական մարտահրավերներին, այդ թվում՝ գլոբալ մրցակցության ուժեղացմանը, որն ընդգրկում է ապրանքների, կապիտալի, տեխնոլոգիաների, աշխատուժի շուկաները և նոր պահանջներ է ներկայացնում մրցունակությանը, նորարարությանը և ներդրումների ներգրավման ունակությանը,

2. արհեստավարժ կադրերի հաշվին (որով էլ որոշվում է մարդկային կապիտալի որակը և նրա հնարավորությունը՝ վերածվելու միջին խավի գերիշխող ուժի) համաշխարհային տնտեսությունում մրցակցային դիրքերի պահպանումը, ինչի համար պահանջվում է աշխատանքի արտադրողականության կայուն աճ, ոլորտի արդիականացում և արագացված զարգացում,

3. գերակայող ուղղություններով բարձր տեխնոլոգիական շուկաներում համընդհանուր մասնագիտացում ապահովող գիտատեխնոլոգիական համալիրի ձևավորումը,

4. տնտեսության կառուցվածքային բազմազանության ապահովումը՝ վերա-
մշակող արդյունաբերության մրցունակության մեծացման հիմքի վրա,

5. առաջնային ռեսուրսների՝ աշխատանքի, էներգակիրների, նյութերի օգ-
տագործման արդյունավետության մեծացումը,

6. բնակչության կյանքի որակի բարձրացումը:



Մի դրվագ ՀՀ-ում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար
ձեռնարկությունների և ՀՀ պաշտպանության նախարարության միջև
համագործակցության հեռանկարներին նվիրված քննարկումից.

չախից աջ՝ ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դ. Տոնոյան,
ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան, ՀՀ Պաշտպանության նախարարի
տեղակալ – ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյան,
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյան,
ԵրՄՄԳՀԻ-ի գլխավոր տնօրեն Ա. Թառոյան

Երևան, ՀՀ պաշտպանության նախարարություն, 2011 թ. ապրիլի 1

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման գերակա ուղղությունների ընտրության ժամանակ
պետք է հաշվի առնել հետևյալը.

1. ռազմական և քաղաքացիական ոլորտներում Հայաստանի կենսական
շահերի ապահովման խնդիրները,

2. առկա և կանխատեսվող սպառնալիքների համակարգում պաշտպանու-
նակության ապահովման անհրաժեշտությունը,

3. էներգետիկ խնդրի լուծման ուղիների որոնումը Հայաստանի բնակլի-
մայական պայմանների հաշվառմամբ,

4. կապի միջոցների և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կատա-
րելագործումը՝ որպես ժամանակակից բարձր տեխնոլոգիական արտադրու-
թյան զարգացման և բնակչության կյանքի որակի ապահովման անհրաժեշտ նա-
խապայմանի,

5. միջավայրի բնապահպանական մաքրության ապահովումը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման օպտիմալ տարբերակի հաջող իրականացման հիմնական ցուցանիշներ պետք է լինեն.

1. ՀՀ ՁՈՒ-ի «Սպառազինման ծրագրի» անվերապահ կատարումն ըստ ժամկետների,

2. քաղաքացիական նախանշանակման գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի ծավալների էական աճը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման տարբերակը, որը բնութագրվում է նշված ցուցանիշներով, կլինի օպտիմալ, եթե այն առավելագույնս է համապատասխանում գիտական և տեխնոլոգիական զարգացման ազգային առաջնահերթություններին, պաշտպանական անվտանգության ապահովման ոլորտում երկարաժամկետ նպատակներին և պետության իրական ներուժին:

Ոլորտի տեխնոլոգիական զարգացման այս տարբերակի իրականացմանը կարող են էական խոչընդոտել այնպիսի չլուծված համակարգային խնդիրներ, ինչպիսիք են՝

1. ՌԱՀ-ի չափի և կառուցվածքի անհամապատասխանությունը, ինչպես նաև իր կազմի մեջ մտնող ընկերությունների անբավարար տեխնոլոգիական զարգացածությունը,

2. ՌԱՀ-ի ներուժի օգտագործման անբավարարությունը քաղաքացիական նախանշանակման գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկման համար,

3. ՌԱՀ-ի ոլորտի համապատասխան կադրերի (միջին մասնագիտական, ինժեներատեխնիկական և գիտական՝ ասպիրանտական) պատրաստման համակարգի թերզարգացածությունը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման օպտիմալ տարբերակի իրականացման անհրաժեշտ ընդհանուր պայման է տնտեսության անցումը նորամուծական (ինովացիոն) համակարգի, ինչպես նաև ռազմական արդյունաբերության խորը վերակառուցումը, հայրենական կրթության և գիտության, խառը ոլորտների զարգացման բարձր տեմպերի ապահովումը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման վերջնական նպատակներին հասնելու և այդ ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները հաղթահարելու համար պետք է լուծել հետևյալ պրոբլեմները.

1. ինտեգրված կառույցների ձևավորում, ՌԱՀ-ի գիտական և տեխնոլոգիական զարգացման առանցքային ոլորտներում տեխնիկատեխնոլոգիական կենտրոնների ստեղծում,

2. ՌԱՀ-ում և հարակից ոլորտներում ինտեգրված կառույցների կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում,

3. ՌԱՀ-ի արտադրական հզորությունների օպտիմալացում,

4. ՌԱՀ-ի ընկերությունների արդիականացում, ամբողջական վերակառուցում և տեխնիկական վերազինում,

5. ռազմական և քաղաքացիական նախանշանակման մրցունակ արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ սարքավորումների մշակման ու ներմուծման կազմակերպում,

6. ՌԱՀ-ի ընկերությունների բեռնվածության մակարդակի ապահովում,
7. թողարկվող արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի նվազեցման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում,
8. ոլորտի ապահովում ներդրումներով, որոնք անհրաժեշտ են ՍՌՏ հեռանկարային նմուշների արտադրության ամբողջ փուլաշրջանի տեխնոլոգիական արդիականացման, ինչպես նաև քաղաքացիական նախանշանակման մրցունակ գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրության համար,
9. առավել կարևոր (կրիտիկական) տեխնոլոգիաների ներդրման ապահովում, ինչն անհրաժեշտ է աշխարհում մրցունակ ռազմական և քաղաքացիական նախանշանակման արտադրության ստեղծման համար,
10. ՍՌՏ և քաղաքացիական նախանշանակման նոր մրցունակ ապրանքների տեսականու ստեղծման հեռանկարային ծրագրերի մշակում և իրականացում,
11. ՌԱՀ-ի զարգացման նորմատիվ-իրավական ապահովում,
12. ՌԱՀ-ի և հարակից ոլորտների համար կադրերի ուսուցման և վերապատրաստման համակարգի զարգացում:
- Ըստ այդմ` ՀՀ ՌԱՀ-ի 2011–2015 թթ. զարգացման ուղղությունները կողմնորոշված են դեպի հետևյալ տեսակների սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակում և արտադրություն`
- խելացի (բանական) զենքեր,
 - հեռակառավարման միջոցներ,
 - կապի բանականացման (ինտելեկտուալացման) միջոցներ, այդ թվում` տեղեկատվահաղորդակցման միջոցների միավորում և ըստ օգտագործման պայմանների դրանց ավտոմատացված ընտրություն,
 - տարբեր բնույթի ակտիվ և պասիվ ռադարային միջոցներ,
 - տարբեր բնույթի էլեկտրոնային պաշտպանական ու հակապաշտպանական միջոցներ,
 - անօդաչու, հեռակառավարմամբ կամ տրված ծրագրով թռչող սարքեր` տարբեր կշռով, չափերով և նախանշանակմամբ,
 - կրակային միջոցների հզորությունների, պաշտպանվածության, ճկունության, ճշգրտության մեծացման համակարգեր,
 - բազմաբնույթ ինժեներական միջոցներ,
 - հրամանատարական կազմի վերապատրաստման համար տեսանմանարկումային մոդելավորման ու փորձագիտական համակարգեր:
- Անհրաժեշտ է Ձինված ուժերի համար ՍՌՏ ռազմական պատվերների բյուջետային հայտերի կազմման նոր մեթոդիկայի մշակում և ներդրում, ընդամին պետք է հաշվառված լինեն ռազմական գիտության և տնտեսագիտության տեսական հիմունքներն ու գործնական արդյունքները: Այլ կերպ ասած` անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորված միասնական ռազմաֆինանսական քաղաքականության արդյունավետ մոդելի մշակում, մի մոդելի, որում ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում օբյեկտիվորեն արտացոլված լինեն Ձինված ուժերի գերակա պահանջմունքները:

Պետության մասշտաբով ռազմական արդյունաբերության զարգացումը կարող է շահագրգռող հանգամանք լինել նաև մասնավոր սեկտորի համար՝ ոլորտը գործարարության օրյեկտ դարձնելու և այնտեղ ծավալուն ներդրումներ կատարելու առումով:

Այսպիսով՝ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը դիտում է որպես ոչ միայն ՋՈՒ-ի կարիքների բավարարման գերակա միջոց, այլև պետության ընդհանուր տնտեսական զարգացման արդյունավետ խթանիչ:

РАЗВИТИЕ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА КАК ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ОБОРОННЫХ РЕФОРМ

С. М. ОГАНЯН, Министр Обороны РА

РЕЗЮМЕ

Система военной промышленности (СВП) РА является одной из важнейших составляющих обеспечения военной безопасности государства. В связи с этим ее развитие и превращение в одну из ведущих сфер экономики РА являются приоритетной задачей государственной политики. Это позволит:

- повысить роль и влияние политики государства в международных и региональных процессах;
- разрабатывать производственные технологии на основе современных достижений науки;
- интегрироваться в международные и региональные экономические процессы.

При планировании направлений и механизмов развития СВП в РА необходимо учитывать мировые тенденции развития средств вооруженной борьбы и связанные с этим кардинальные изменения в способах ведения боевых действий, в частности—доминирование высокоточного оружия и многофункциональных координирующих информационных средств управления войсками, разведки и наведения и, как следствие, исчезновение таких традиционных понятий, как непрерывная линия соприкосновения с противником (фронт), тыл, суммарное преимущество над противником определяется не как простая сумма преимуществ отдельных единиц боевой техники, а в их интегральной взаимосвязи каждого бойца в ходе боевых действий.

В то же время следует учитывать, что всеускоряющийся технологический прогресс создает определенный психологический дискомфорт для индивидов, оказавшихся в непрерывно изменяющейся среде постиндустриального общества. А это означает, что соответствующим образом должна трансформироваться и система образования и воспитания подрастающих поколений.

Важным условием развития СВП в РА является продуманное совмещение производства товаров военного назначения с товарами гражданского потребления. При этом критериями должны служить:

- неуклонное выполнение в указанные сроки «Программы вооружения» ВС РА;
- существенный рост объемов наукоемкого и высокотехнологического производства продукции гражданского назначения.

Для достижения конечных целей технологической модернизации СВП и решения проблем в данной сфере необходимо:

- сформировать взаимно интегрированные структуры, в ключевых сферах научно-технологического развития СВП создать технико-технологические центры;
- создать эффективную систему корпоративного управления интегрированных структур в СВП и смежных областях;
- оптимизировать производственные мощности СВП;
- модернизировать, полностью перестроить и перевооружить компании, осуществляющие деятельность в СВП;
- организовать разработку и внедрение оборудования, необходимого для производства конкурентоспособной продукции военного и гражданского назначения;
- обеспечить СВП инвестициями, а также необходимый уровень загрузки предприятий;
- обеспечить внедрение критических технологий;
- усовершенствовать систему подготовки кадров для СВП и т.д.

THE DEVELOPMENT OF THE RA MILITARY INDUSTRY SYSTEM AS A FOREGROUND TASK OF THE DEFENSE REFORMS

S. M. OHANYAN, Minister of Defense of the RA

SUMMARY

The Military Industry System (MIS) of the RA is an essential part of ensuring the military security of the state. In these terms its development and transformation into one of the leading spheres of the RA economy is a foreground task of the public policy. It will help to:

- strengthen the role and influence of the public policy in the international and regional processes;
- develop production technologies based on modern scientific achievements;
- integrate into the international and regional economic processes.

When planning the directions and mechanisms of the MIS in the RA the global trends in the means of warfare and the dramatic changes associated with in the methods of warfare, in particular, the dominance of precision guided

weapons and multifunctional coordinating media for troops control, intelligence and guidance must be taken into account, and as a consequence the disappearance of such traditional concepts as a continuous contact line with the enemy (front), rear, total advantage over the enemy is defined not as a simple sum of the benefits of individual pieces of equipment but in their integral correlation of every soldier in combat.

At the same time it must be borne in mind that the accelerating technological progress creates certain psychological discomfort for individuals who find themselves in the constantly changing environment of post-industrial society. This means that the education system and education of future generations should be transformed properly.

An important condition for developing the MIS in the RA is the planned combination of the production of military goods with the goods of civilian consumption. At the same time the criteria should be:

- the sustained performance within a specified time of the «Armament program» of the RA Armed Forces;
- the substantial growth in the high technology production for civilian use.

To achieve the ultimate goals of the technological upgrading of the MIS and to solve the problems in this field it is necessary to:

- form mutually integrated structures in the key spheres of the scientific and technological development of the MIS, create technical and technological centers;
- establish an effective system of corporate governance of the integrated structures in the MIS and related fields;
- optimize the production capacity of the MIS;
- upgrade, completely redesign and re-equip the companies operating in the MIS;
- organize the development and implementation of equipment needed to produce competitive products for military and civil use;
- ensure that the MIS gets investments as well as the required level of enterprises' utilization;
- ensure the introduction of critical technologies;
- improve the system of training a personnel for the MIS, etc.

**ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՌԻԳՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

*Մ. Ռ. ԻՍԱԽԱՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական
վարչության պետ, Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԶՀԾ 2-րդ դասի խորհրդական,
ՀՀ ՊՆ ՌԱՎ-ի գլխավոր մասնագետ*



Չքննարկելով ՀՀ ռազմական արդյունաբերության ոլորտում մինչ այսօր իրականացված պետական քաղաքականության հարցը՝ փորձենք պաշտպանական բարեփոխումների համատեքստում գնահատել ՀՀ-ում առկա ոլորտային ներուժը և հետագա զարգացման հեռանկարները:



Հայտնի է, որ ցանկացած պետությունում ռազմաարդյունաբերության զարգացման՝

– միակ աղբյուրը պետական պատվերն է, իսկ հիմքը՝ տվյալ պետության մեքենաշինական ճյուղի բազմազանությունը և զարգացածության աստիճանը,

– չափանիշը ՌԱՀ-ի ներգրավվածությունն է պետության տնտեսության համակարգում, այսինքն՝ հնարավորինս շատ ոլորտներում ընդգրկվածությունը, քանի որ գիտության և տեխնիկայի նվաճումները նախ օգտագործվում են ռազմաարդյունաբերության ոլորտում, ապա նոր՝ քաղաքացիական արտադրության մեջ:

1991 թ. հետո նորանկախ պետությունները, ունենալով պետական կառավարման նոր մոդելին անցման շրջանին բնորոշ բազում խնդիրներ՝ հաստատութենական-կառուցվածքային, գործառության, գաղափարական, կողմնորոշումային և այլ բնույթի, իսկ որոշ դեպքերում էլ նաև զինված հակամարտություններ, սկսեցին ստեղծել իրենց ռազմական կառույցները:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ռազմական ոլորտում կատարվող աշխատանքները միայն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական բնույթի էին, ինչի հետևանքով ստեղծվող փորձանմուշները հիմնականում ընդհանուր պատրաստվածքի բաղկացուցիչ մասեր էին, իսկ ռազմական տեխնիկայի և սպառազինության նորոգման աշխատանքներ ընդհանրապես չէին կատարվում, այսինքն՝ չկային սպառազինության և ռազմական տեխնիկայի սպասարկման ու նորոգման համար անհրաժեշտ պահեստամասեր, ինչպես նաև դրանց արտադրության ու շահագործման համար շահագործողական, կոնստրուկտորական, տեխնոլոգիական և նորմատիվային փաստաթղթեր: Արդյունաբերության 97 %-ն աշխատում էր ներմուծվող հումքով

և կիսապատրաստուքներով, որոնք ՀԽՍՀ տարածք էին մտնում հիմնականում երկաթուղով, այն էլ՝ Ադրբեջանի ԽՍՀ տարածքով: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում չկար ռազմական նախանշանակյա նրևէ վերջնական սերիական արտադրություն:

Այս ամենի հետ մեկտեղ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ից ստացել էր նաև ավելի ծանր ժառանգություն, այն է՝

– 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքները, որոնք հանգեցրեցին նաև էներգետիկ ճգնաժամի,

– Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտությունը, որը ՀՀ շրջափակման պատճառ դարձավ,

– ԽՍՀՄ 7-րդ բանակի ռազմական տեխնիկական և սպառազինությունը, որոնք այդ ժամանակ արդեն ոչ բարվոք վիճակում էին:

Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք ասել, որ անկախ Հայաստանի Հանրապետությունը իր անկախ պետականության կերտումն ու Ջինված ուժերի ստեղծումն սկսեց՝ չունենալով ռազմաարդյունաբերության ստեղծման համար որևէ բազա:

Մինույն ժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական վերափոխումների հետևանքով լուրջ կորուստներ կրեց գիտական ներուժը, բարձր որակավորում ունեցող աշխատուժի վարկանիշն իջավ անթույլատրելի ցածր մակարդակի: Տնտեսության բարձր տեխնոլոգիական ոլորտի, մասնավորապես՝ մեքենաշինության, այդ թվում՝ ճշգրիտ մեքենաշինության, քիմիայի, ռադիոէլեկտրոնիկայի և այլ ճյուղերի զարգացման տեմպերն է պետ դանդաղեցին:

ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտում մինչև օրս իրականացված գործունեությունը կարելի է համարել միայն ռազմաարդյունաբերության համակարգի զարգացման համար նախադրյալների ստեղծում:

2010–2015 թթ. ՀՀ պաշտպանական բարեփոխումների ծրագրի շրջանակներում իրականացվող ՌԱՀ-ի զարգացման խնդիրների՝ հայեցակարգի և ծրագրի մշակման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ գործոնները՝

- ժամանակակից մարտահրավերները,
- Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերը ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ապահովելու հրամայականը,
- ՀՀ-ում տիրող տնտեսական իրավիճակը,
- ՀՀ աշխարհագրական դիրքը և տարածքային առանձնահատկությունները,
- աշխարհաքաղաքական իրավիճակի հնարավոր փոփոխությունները,
- ՀՀ բնական ռեսուրսների կազմը,
- ՀՀ նախկին և ներկա գիտաարտադրական ներուժը:

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման պետական քաղաքականության ռազմավարական նպատակն է ՀՀ գիտատեխնիկական և արտադրատեխնոլոգիական ներուժի ձևափոխումը պետական հովանավորությամբ գործող արդյունավետ նորա-

մուծական ռեսուրսի, որը կնպաստի պետության անվտանգության ապահովմանը:

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման պետական քաղաքականության միջնաժամկետ՝ 3–5 տարվա, ծրագրերի նպատակը պետք է լինեն ռազմաարդյունաբերական բազային, գիտական և արտադրական ներուժ ձևավորող կազմակերպությունների պահպանումն ու զարգացման ապահովումը պետական աջակցությամբ՝ անկախ դրանց սեփականության ձևից:

Հայեցակարգով ու ծրագրով խստագույնս առաջնորդվելու և դրանցում նախատեսված միջոցառումներն իրականացնելու շնորհիվ էապես կհամակարգվի ՌԱՀ-ի կառավարումը, ինչն իր հերթին կնպաստի միջազգային շուկայում հայկական արտադրանքի մրցունակության ապահովմանը: Այդ միջոցառումներից են՝

– ՌԱՀ-ի կառավարման կազմակերպական կառուցվածքի նորամուծական կատարելագործումը՝ միջազգային փորձի հաշվառմամբ,

– ռազմական պատվերներ կատարող ընկերությունների համար հարկաբյուջետային ու վարկային քաղաքականության նոր մեխանիզմների մշակումը և ներդրումը,

– ձեռնարկությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի, գիտաարտադրական ընկերությունների և գիտաուսումնական հաստատությունների նյութատեխնիկական ու մտավոր կարողությունների կենտրոնացմանն ուղղված միջոցառումների լրամշակումը և իրականացումը՝ արդիական ՍՌ-Տ և ռազմատեխնիկական գույքի ստեղծման, արտադրության, արդիականացման ու նորոգման (վերականգնման) և, համապատասխանաբար, ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և գիտության հնարավորությունները առավելագույնս օգտագործելու նպատակով,

– ռազմաարդյունաբերության ոլորտում նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի միասնական բազայի ստեղծումը,

– ՀՀ ՁՌԻ-ի սպառազինման պետական ծրագրի կատարման նպատակով ՀՀ ռազմաարդյունաբերության հնարավորությունների գնահատմամբ համապատասխան ծրագրերի մշակումը և իրագործումը,

– ընկերությունների նորամուծական տեխնոլոգիական զարգացման և տեխնիկական վերազինման ծրագրերի մշակումը, ինչը կնպաստի նաև արտաքին շուկայում հայրենական թողարկման ապրանքների մրցունակության ապահովմանը,

– ընկերություններում ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարման համակարգերի (կառավարիչների հաստատության) ներդրումը,

– տեղական հումք օգտագործող նոր բարձր տեխնոլոգիաների մշակումը և արտադրության մեջ ներդրումը,

– ռազմական պատվերներ կատարող ընկերություններում համախառն արտադրանքի մեջ քաղաքացիական նախանշանակման արտադրանքի տեսակա-

րար կշռի մեծացմանն ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը,
– ընկերությունների միջև արտադրական կոոպերացիայի կազմակերպումը և քարտազրման համակարգերի ներդրումը,

– ՌԱՀ-ի գործունեության իրավական կարգավորման նորմատիվ փաստաթղթերի լրամշակումը և ներդրումը,

– ՀՀ-ում արտադրվող և արտերկրից ձեռքբերվող զինատեսակների, արտադրատեսակների և այլ նյութական արժեքների հարաբերակցության օպտիմալացումը,

– ՌԱՀ-ի ընկերությունների մտավոր ներուժի զարգացումը և կադրերի վերապատրաստումը,

– ՌԱՀ-ի գործառնության տեղեկատվավերլուծական համակարգի զարգացումը և անվտանգության ապահովումը,

– խաղաղ և պատերազմական ժամանակ արդյունաբերության մոբիլիզացիոն առաջադրանքների կատարման համար մոբիլիզացիոն նախապատրաստության պլանների լրամշակումը՝ ըստ ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխման,



Մի դրվագ հայկական և լեհական ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների միջև համագործակցության զարգացման հեռանկարներին նվիրված քննարկումից.

Երևան, ՀՀ պաշտպանության նախարարություն, 2011 թ. հուլիսի 6

– ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական համագործակցության բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) ապահովումը՝ այլ երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության երկկողմանի ծրագրերի իրականացմամբ՝ այդ ոլորտների միաբևեռայնության և որևէ երկրից կախման աստիճանի նվազեցմամբ,

– ռազմական անվտանգության ապահովման առանցքային խնդիրների լուծման համար հիմնարար գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը,

– պաշտպանական անվտանգության համակարգի գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական հիմքերի պահպանումը, կատարելագործումն ու ընդլայնումը, ինչպես նաև նոր սերնդի առավել արդյունավետ պաշտպանական համակարգերի ստեղծումը,

– սահմանված ռազմատեխնիկական քաղաքականությանը համահունչ ծրագրերի մշակումն ու իրականացումը,

– ռազմաարդյունաբերության արդի պահանջներին համապատասխանող գիտական ներդրումային ծրագրերի, ինչպես նաև գիտատեխնիկական կադրերի պատրաստման պետական պատվերի նախագծերի մշակումն ու կենսագործումը,

– ռազմաարդյունաբերության համակարգի համալրումն ըստ ուղղությունների (ոլորտների) գլխավոր պատասխանատու մասնագետներով և այլն:

Ռազմաարդյունաբերության զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

1. ռազմաարդյունաբերական ոլորտում զարգացում կարելի է ակնկալել, եթե այն դիտվի նաև որպես գործարարության օբյեկտ, որն ունի իր նպատակները և ուրույն տնտեսական օրենքները,

2. տվյալ ոլորտում երաշխավորված զարգացում ապահովում են այն պետությունները, որտեղ առաջադրվում են հավակնոտ խնդիրներ, որոնց լուծումը կատարվում է կորպորատիվ կառավարում իրականացնող կամ կոնցեսիոն (հավատարմագրային) կառավարմամբ այլ ընկերությանը հանձնված (ինչը պետական սեփականության մասնավորեցման այլընտրանք է) պետական կազմակերպությունների միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Ռ. Իսախանյան, Ա. Պ. Թովմասյան, Ռազմատնտեսագիտության հասկացությունը և խնդիրները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀԲ», 2010, հմ. 4:

2. Յու. Գ. Խաչատրյով, Պ. Ա. Շադյան, Կ. Ա. Դադայան, Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները: «ՀԲ», 2008, հմ. 1:

3. В. Иванов. Заказчики Пентагона довольны своими поставщиками. «Независимое военное обозрение», 27 мая 2011 г.

4. Б. Н. Кузык. Военно-промышленный комплекс в экономике и политике России. М., 2004.

5. «Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие», под ред. О. Д. Бакланова, О. К. Рогозина. М., 2005.

6. Peter W. Singer. Corporate Warriors: The Rise of the Privatized Military Industry. New York, March 2004.

ОСНОВНЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО РАЗВИТИЮ
СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА
В РАМКАХ ОБОРОННЫХ РЕФОРМ

*М. Р. ИСАХАНИЯН, полковник, начальник военно-промышленного управления МО РА,
А. П. ПЕТРОСЯН, советник 2-ого класса Специальной гражданской службы,
главный специалист ВПУ МО РА*

РЕЗЮМЕ

В Республике Армения в результате экономических преобразований и ошибочности выбора приоритетов значительные потери понес научный потенциал, упал рейтинг квалифицированной рабочей силы, снизились темпы развития высокотехнологичной сферы экономики, в частности: машиностроения, в том числе – точного машиностроения, химии, радиоэлектроники и т. д.

В настоящее время стратегической целью государственной политики по развитию системы военной промышленности (СВП) РА является трансформация научно-технического и производственно-технологического потенциала в функционирующий при государственной поддержке эффективный инновационный ресурс, необходимый для обеспечения оборонной безопасности государства.

Разработанная концепция и программа развития СВП позволят систематизировать управление СВП обеспечением на международном рынке конкурентоспособности армянской продукции. В связи с этим планируется совершенствование организационной структуры управления СВП; внедрение новых механизмов налогово-бюджетной и кредитной политики для предприятий, выполняющих оборонный заказ, реализация мероприятий по консолидации материально-технических и интеллектуальных возможностей предприятий, НАН РА и научно-учебных учреждений; создание базы нормативно-технической документации в сфере оборонной промышленности; разработка программ инновационного технологического развития и технического переоснащения организаций и внедрение в них систем управления (института управляющих), соответствующих международным стандартам; разработка и внедрение в производство новых высоких технологий, базирующихся на использовании местного сырья; разработка и внедрение мер по увеличению удельного веса продукции гражданского назначения в валовой продукции организаций, выполняющих оборонные заказы; доработка нормативной документации по правовому регулированию деятельности СВП; оптимизация баланса ВВТ, производимых в РА и закупаемых за рубежом; развитие интеллектуального потенциала предприятий СВП и переподготовка кадров; обеспечение диверсификации военно-промышленного и военно-технического сотрудничества; организация целевых фундаментальных научно-исследовательских работ; создание оборонных систем нового поколения; разработка проектов госзаказа на подготовку научно-технических кадров и научных инвестиционных программ, соответствующих требованиям оборонной промышленности, и т. д.

THE MAIN STEPS TO DEVELOP
THE RA MILITARY INDUSTRY SYSTEM
WITHIN THE FRAMEWORK OF THE DEFENSE REFORMS

*M. R. ISAKHANYAN, Colonel, Head of the Military-Industry Department, MOD, RA,
A. P. PETROSYAN, 2nd Class Advisor of the Special Civil Service,
Chief Specialist in the Military-Industry Department, MOD, RA*

SUMMARY

As a result of economic reforms and wrong choice of priorities the scientific potential suffered a significant loss, the rating of a skilled workforce dropped, the rate of developing high-tech sectors of the economy decreased in the Republic of Armenia, in particular, mechanical engineering, including precision engineering, chemistry, radioelectronics, etc.

Currently, the strategic goal of the public policy in the development of the RA military industry system (MIS) is the transformation of scientific-technical and industrial-technological potential into an effective innovative resource functioning under the state support which is instrumental in ensuring the defense security of the state.

The elaborated concept and development program of the MIS will help systematize the management of the MIS by ensuring the competitiveness of Armenian the products in the international market. In these terms it is planned to upgrade the organizational structure of the MIS control; introduction of new instruments of fiscal and credit policy for the enterprises meeting the defense demand, implementation of measures to consolidate the material-technical and intellectual capabilities of enterprises of the NAS, RA and academic-educational institutions; establishment of the framework of normative-technical documentation in the defense industry sphere; development of software of innovative technological progress and technical retooling of organizations and introduction of control systems (controllers' institute) in them consistent with the international standards; development and introduction in the industry of new high technologies based on the use of local raw materials; development and implementation of measures to increase the share of civilian products in the gross output of organizations engaged in meeting the defense demand; improvement of normative documents on the legal regulation of the MIS activity; optimization of the balance of weapons and military equipment produced in the RA and procured abroad; development of intellectual potential of the MIS enterprises and retraining of the personnel; ensuring of the diversification of the military-industrial and military-technical cooperation; organization of targeted basic research activities, creation of new-generation defense systems; development of the state-order projects for training of scientific-technical personnel and research investment programs meeting the requirements of the defense industry, etc.

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

*Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԲՀԾ 2-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ ՌԱՎ-ի
գլխավոր մասնագետ, Ա. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ԲՀԾ 1-ին դասի առաջատար
ծառայող, ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական ներկայացուցչության
տնօրենագիտական բաժանմունքի առաջատար մասնագետ*



Անկախությունից հետո Հայաստանի Հանրապետությունում ընտրվեց շուկայական տնտեսությանն անցման արմատական կերպափոխումների ուղին: Ընդամին ենթադրվում էր մոնետարիստական լծակներով և միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ կրճատել արտադրության անկումն ու հասնել մակրոտնտեսական կայունության:

Սկսվեց հին կառույցների արագ վերացում և նորերի ստեղծում՝ ազատականացմամբ և մասնավորեցմամբ, համապատասխան հաստատութենական վերափոխումներով:

Պետք էր տարբերել պետության անկախությունը նրա տնտեսության անկախությունից. տնտեսությունը կառավարելու անկախությունը ամենևին էլ չի նշանակում տնտեսության անկախություն:

Տնտեսության ազատականացման ճիշտ ուղու ընտրության համար պահանջվում էր առավելագույնս հաշվի առնել հանրապետությունում ստեղծված առանձնահատուկ իրավիճակը և ազգային յուրահատկությունները, մասնավորապես՝ ազգային մտածելակերպը:

ԱՊՀ բոլոր նորանկախ հանրապետություններում տնտեսական վերափոխումների բնույթը պայմանավորող հիմնական գործոններն էին տնտեսության կառուցվածքը, ռեսուրսապահովվածությունը և նախկին կախումը արդեն գոյություն չունեցող «կենտրոնից»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը տնտեսական վերափոխումներն սկսեց՝ արտադրության մեջ կտրուկ կերպով նվազեցնելով իր դերը և գերակա դարձնելով մասնավորինը:

Սկզբնական շրջանում՝ մինչև 1993 թվականը, Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ կատարված արմատական վերափոխումները հետագայում դանդաղեցին՝ չստանալով իրենց տրամաբանական զարգացումը: Դրա պատճառն այն էր, որ տնտեսական կարգավորման կառույցների կազմալուծումից հետո առաջացած վակուումը չլցվեց նորաստեղծ հարաբերություններին համապատասխանող տնտեսական կառույցներով և չամրագրվեց իրատեսական ծրագրերով:

Արտադրության միջոցների ապապետականացումը ժամանակային առումով չէր ուղեկցվում ենթակառուցվածքների ներդաշնակ ապապետականացմամբ: Ընկերությունների ապապետականացումից հետո խզվեցին կապերը պետական մատակարարման մարմինների հետ, որոնք դեռ պահպանում էին պետական կարգավիճակը:

Կառավարման ու կառուցվածքային կերպափոխումների ասպարեզում դրսևորվեցին անիրագրելիություն ու ծայրահեղականություն, որոնք չէին կարող իրենց զգացնել չտալ և չհանգեցնել հանրապետության տնտեսության փլուզման:

Մասնավորեցման ընթացքում թույլ տրված սխալների պատճառով տնտեսության առաջատար ճյուղերը հայտնվեցին խոր ճգնաժամում: Արդյունաբերության ոլորտում մասնավորեցումը կատարվեց փուլ առ փուլ:

Սկզբում կիրառվեց 20 %-ի չափով անհատույց սեփականաշնորհում՝ փակ և բաց բաժնետիրական ընկերությունների ստեղծմամբ, ընդսմին սեփականատերեր դարձան ձեռնարկության կողեկտիվի անդամները, ինչը դրական երևույթ էր: Արդյունաբերության նախարարության հաստատած՝ ձեռնարկությունների մասնավորեցման մեթոդիկան գերծ չէր մի շարք թերություններից, որոնցից հանգուցայինը նյութական արժեքների գնահատման կարգն էր: Դրանք գնահատվում էին մնացորդային արժեքով՝ կազմելով չնչին գումարներ: Սեփականաշնորհված ձեռնարկությունների սեփականատերերի հիմնական մասի գործունեությունը եղավ արտադրության միջոցների վաճառքով ներդրված կապիտալի վերականգնումը և հետագա կուտակումը, ինչի հետևանքով այդ ձեռնարկությունները փաստացի դադարեցրին տնտեսական գործունեությունը: Շատ սեփականատերեր չէին կողմնորոշվում գործունեության նոր ոլորտի ընտրության հարցում և որոշումներն ընդունում էին ըստ տվյալ պահի իրավիճակի: Հետագայում կուտակված կապիտալը հիմնականում ներդրվեց ոչ արդյունաբերական ոլորտներում:

Վերը նշվածի պատճառները ՀՀ արդյունաբերության ոլորտի զարգացման համապատասխան ծրագրերի իրականացման անարդյունավետությունն ու հիմնականում անհետևողականությունն էին:

Եվ այսպես. ուսումնասիրելով հանրապետությունում կատարված մասնավորեցումը՝ կարող ենք արձանագրել, որ՝

– այն չի հանգեցրել տնտեսության աշխուժացման, արդյունավետության մեծացման, օտարերկրյա կապիտալի մեծ ներդրումների, հսկայական արժեք ունեցող պետական գույքի մասնավորեցման հետևանքով պետական բյուջե կատարված մուտքերը մեծ չէին,

– զանգվածային մասնավորեցումը կատարվեց առանց համապատասխան ներդրումային կառույցների ստեղծման, ինչն զգալի չափով նվազեցրեց բաժնետիրական կառավարման արդյունավետությունը,

– մասնավորեցումը չուղեկցվեց ձեռնարկատիրական գործունեությանը պետական աջակցության քաղաքականությամբ, ձեռնարկատերերն ստիպված եղան մասնավորեցումից հետո միայնակ հաղթահարել շուկայական հարաբերություններին անցման հետ կապված դժվարությունները:

Նման պայմաններում ռազմաարդյունաբերության կայացման գործընթացը չէր կարող դյուրին լինել, հատկապես, որ ժամանակային առումով համընկավ բարդ քաղաքական իրավիճակի և ի վերջո ռազմական բախման վերածված հակամարտության հետ:

Վերլուծելով ՀՀ արդյունաբերության և, մասնավորապես, ռազմաարդյունաբերության համակարգի գործունեությունն անցած տարիներին և ներկա վիճակը՝ կարող ենք համոզվել, որ՝

– Հայաստանն իր անկախ պետականության կայացման տարիներին տնտեսության վերակազմավորումն իրականացրել է առանց ռազմաարդյունաբերության գերակա ճյուղերի որոշման և առանց դրանց զարգացման ծրագրերի,

– ռազմական պատվերներ կատարող ընկերությունները, անկախ իրենց սեփականության ձևից, հիմնականում ամբողջությամբ կախված են եղել ՀՀ ՊՆ-ից, ինչը պայմանավորված էր նրանց կողմից զուտ ռազմական պատվերներ կատարելու հանգամանքով, մինչդեռ պաշտպանության նախարարությունը, լուծելով գերատեսչական խնդիրներ, ի դեմս ռազմաարդյունաբերական վարչության հանդես է եկել որպես պատվիրատու՝ միանգամյա գնորդի կարգավիճակով,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր նմուշների մշակման և ձեռքբերման ժամանակ չի իրականացվել արտադրատեսակի կյանքի փուլաշրջանի գնահաշվարկ, փոխարենը հաշվարկվել են միայն սկզբնական ձեռքբերման ծախսերը:

Մինչև 2001 թ. ռազմաարդյունաբերության գործունեության քաղաքականությունը իրականացնում էր ՀՀ վարչապետի նախագահությամբ գործող ռազմաարդյունաբերական հանձնաժողովը, որը ձևավորում էր պաշտպանական նշանակություն ունեցող աշխատանքների պետական պատվերները:

2001 թվականից մինչ այժմ պետության ռազմատեխնիկական քաղաքականության իրականացումը վերապահված է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հանձնի պաշտպանության նախարարի: ՀՀ պաշտպանության նախարարը ռազմաարդյունաբերական վարչության միջոցով սկսեց վարել այնպիսի ռազմատեխնիկական քաղաքականություն, որը նպատակաուղղված էր առկա ՍՌ-Տ-ն հնարավորինս մարտունակ վիճակում պահելուն և հնարավորության դեպքում արդիականացնելուն:

ՀՀ պաշտպանական պետական պատվերներ կատարող ընկերությունները հիմնականում ունեն իրենց կայուն գործունեության ապահովման և զարգացման հետ կապված հետևյալ պրոբլեմները.

– անհրաժեշտ ֆինանսական, արտադրական և աշխատանքային ռեսուրսների անբավարարություն ոչ միայն իրենց զարգացման, այլև շատ դեպքերում՝ նույնիսկ արդյունաբերական ու գիտատեխնիկական ներուժի պահպանման համար,

– աշխատավարձի մակարդակի ոչ մրցունակ լինելը, և, որպես հետևանք, բարձր որակավորում ունեցող կադրերի վերարտադրման փաստացի անբավարարությունը:

Վերը նշվածի հետ մեկտեղ գոյություն ունեն ճգնաժամային իրավիճակի

հաղթահարումը ձգձգող մի շարք սուբյեկտիվ գործոններ: Հիմնական գործոններից մեկը այն է, որ չկա «տնտեսավարող մարդու» մոդել, ռացիոնալության վարքագծի հայեցակարգի ստեղծման դաշտ, ինչի հետևանքով չկան ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարիչներ, տեղի են ունենում կազմակերպության ֆինանսական հոսքերի սխալ կառավարում, ոչ արտադրական ծախսերի ավելորդ աճեցում, աշխատողների թվի անհիմն մեծացում, և այլն:

Արդյունավետության մեծացման, շուկայական կարգավորման մեխանիզմների լայնածավալ կիրառման և արտադրության աճի խթանման հեռանկատ ծրագրեր չլինելու պատճառով Ռ-ԱՀ-ի կառավարման համակարգը դեռ չունի ռեսուրսների կենտրոնացման, պահանջվող ներդրումների ներգրավման հարցերը լուծելու հստակ կարողություն: Պետությունը փաստացի կառավարում է պետական պատվերով արտադրվող ապրանքների թողարկումը, մինչդեռ նպատակաուղղված կառավարչական որոշումների ոլորտից դուրս են մնում նորարարական ներուժի ավելի ամբողջական իրացման, իրացման նոր շուկաներ դուրս գալու, ծախսումների նվազեցման, պետական միջոցների օգտագործման արդյունավետության, ընկերությունների ներդրումային գրավչության մեծացման խնդիրները:

Ընկերությունների մեծ մասում պահանջվում է կառավարման համակարգի արմատական վերակառուցում, քանի որ դրանք չունեն զարգացման տնտեսապես հիմնավորված ռազմավարություն, կիրառում են բիզնեսի, արտադրության, ֆինանսական հոսքերի, մարկետինգի, կադրերի կառավարման հնացած մեխանիզմներ: Նյութական միջոցները ծախսվում են ծայրահեղ անարդյունավետ: Միավոր արտադրանքի արտադրության վրա կատարվող ծախսումները մեծ են, ուստի ինքնարժեքը բարձր է, ինչը շուկայում ապրանքը դարձնում է ոչ մրցունակ: Պետությունից ստացվող ֆինանսական միջոցները ուղղվում են ոչ թե տնտեսական գործունեության արդյունավետության մեծացմանը, այլ չհիմնավորված մեծ ծախսերի փոխհատուցմանը:

Ռեսուրսասիրելիվ և վերլուծելիվ ռազմաարդյունաբերության զարգացման միջազգային փորձը՝ կարող ենք փաստել, որ զարգացած ռազմական արդյունաբերություն ունեն այն պետությունները, որոնցում ռազմաարդյունաբերական պատվերները կատարում են կորպորատիվ կառավարմամբ կամ հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունները (ԱՄՆ, ՌԴ, Իսրայել, ՌԿրաիև և այլն):

Կորպորատիվ կառավարման էությունն այն է, որ ոլորտի միևնույն ճյուղի ընկերությունները, բաժնետիրական ընկերության կամ որևէ ընկերակցության տեսքով, պահպանելով իրենց իրավաբանական անձի կարգավիճակը, ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու նպատակով միավորվում են՝ ստեղծելով կորպորատիվ կառավարմամբ ընկերություն, որի մասնակիցները փոխկապված են մասնակցության համակարգի, արտոնագրային լիցենզիոն համաձայնությունների, ֆինանսավորման, սերտ արտադրական գործակցության միջոցով:

Վերջին քսան տարիներին՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Մառը պատերազմի կամ, մասնավորապես, սպառազինությունների մրցավազքի ավարտից հետո, աշխարհում մեծամասշտաբ պատերազմի հավանականությունը նվազել է, և գերտերությունների զինված ուժերի հիմնական խնդիրն է դարձել մասնակցությունը տեղային հակամարտություններում ընթացող մարտական գործողություններին՝ առանց զանգվածային ոչնչացման զենքի կիրառման: Ինչպես ցույց է տալիս փորձը, տեղային պատերազմներում առավել մեծ դեր ունի գերճշգրիտ, այսպես կոչված՝ «խելացի» զենքը: Դա նշանակում է, որ ռազմական պատվերները կողմնորոշված են դեպի բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ թողարկվող ապրանքների արտադրություն, ինչը անխուսափելիորեն հանգեցնում է ռազմական տեխնիկայի թանկացման: Ուստի անհրաժեշտաբար հարկ կլինի կրճատել ՋՈՒ-ի անձնակազմի թվաքանակը և, միաժամանակ, բարձրացնել զինծառայողների մասնագիտական որակը (մակարդակը):

Աշխարհում տեղի ունեցող գիտատեխնիկական սրընթաց զարգացումների և դրան չհանման չնմալու հրամայականի բերումով, անհրաժեշտ է ռազմական արդյունաբերության զարգացումն սկսել հիմնարար գիտահետազոտական աշխատանքներից՝ դրանով իսկ խթանելով Գ-ՀՓԿԱ-ների կատարման արագությունը ու որակը, ինչն էլ համապատասխան ոլորտներում նոր տեխնոլոգիաներով զենքի ստեղծման գրավականն է:

ՌԱՀ-ի զարգացման գործոններից հատուկ տեղ է տրվում տնտեսականին, որը, հատկապես մակրոտնտեսական մակարդակով, պետք է ապահովի ՌԱՀ-ի կայուն զարգացումը և նրա գործունեությունը տեղափոխի արդյունավետության հարթություն: Որպես ՌԱՀ-ի տնտեսական զարգացման ստանդարտներ պետք է դիտվեն ինչպես ռազմական գիտության զարգացման համընդհանուր միտումները, այնպես էլ արտաքին միջավայրի տնտեսաքաղաքական բնութագրերը:

Խոսելով ՌԱՀ-ի զարգացման մասին՝ անհրաժեշտ ենք համարում նշել նաև որոշ հանգամանքներ, որոնք ապագայում կփոխեն ՌԱՀ-ի դերը ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության բնագավառներում, և որոնք պետք է հաշվի առնվեն ՀՀ ՌԱՀ-ի զարգացման ծրագրերում: Դրանք են.

- ինչպես վկայում է վիճակագրական վերլուծությունը, պետության տնտեսական զարգացմանը համընթաց կփոխվեն սպառազինության համակարգերին ներկայացվող պահանջները,

- աշխարհի աշխարհաքաղաքական պատկերում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով կկատարվի ռազմական ուժի վերաբաշխում,

- ՋՈՒ-ի առջև ծառայած մարտահրավերների վերանայումը կհանգեցնի ՌԱՀ-ում արտադրվող ապրանքների արտադրության որակական մակարդակի փոփոխման,

- ռազմատնտեսագիտական մշակումների ոլորտում առանձին պետությունների ունեցած համեմատական առավելությունները նոր երանգ կստանան ռազմավարական համամասնության (պարիտետ) առումով, քանի որ սպառազինության որոշ տեսակների գծով առավելությունը ձեռք էր բերվում այլ տեսակ-

ների զարգացման հաշվին: Ավելին. սպառազինությունների արտադրության մեկ ոլորտի հետագա զարգացման դեպքում փոքր է դառնում քաղաքացիական շուկայում ձեռք բերված տեխնոլոգիաների իրացման հնարավորությունը:

Ռազմատնտեսագիտական համամասնությունն ապահովում է պետությունների Ռ-ԱՀ-երի համեմատական առավելությունը: Նման մոտեցման դեպքում համեմատության մեջ են դրվում ոչ միայն սպառազինության համապատասխան տեսակները, այլ առաջին հերթին այն տեխնոլոգիաները, որոնց կիրառմամբ ապահովվում է բավարար քանակությամբ ու որակով ՄՌՏ արտադրությունը: Հետևաբար, հետագայում իմաստ ունի խոսել ոչ թե սպառազինության տեսակների, այլ տեխնոլոգիաների համամասնության մասին: Ռ-ԱՀ-ի համեմատական առավելությունների մրցավազքը կփոխարինվի ռազմաարդյունաբերական տեխնոլոգիաների մրցավազքով: Դա կունենա մի շարք կարևոր հետևանքներ ռազմատեխնիկական քաղաքականության մշակման համար: Առաջին հերթին՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում առաջընթաց հնարավոր է միայն ծավալուն հիմնարար հետազոտությունների շնորհիվ:

Շուկայական մեխանիզմը խթանում է նոր հեռանկարային տեխնոլոգիաների զարգացումը, դրանք հարմարեցնում է քաղաքացիական ոլորտում օգտագործմանը,

– տեղի կունենա կապիտալի կենտրոնացում և մենաշնորհի ունեցող պետությունների ձևավորում, ինչը կհանգեցնի սպառազինությունների արտադրությունից «ոչ հիմնական» պետությունների դուրսմղմանը (ի դեպ, դա արդեն կատարվում է):

Փաստորեն, այդպիսով կատեղծվեն մի խումբ պետություններ (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իսրայել, Ռուսաստան, Չինաստան և այլն), որոնք համաշխարհային շուկայում հանդես կգան որպես ՄՌՏ և ՌՏՌՏ արտադրող-մատակարարներ: Այդ շուկայում մրցունակության կորուստը գործնականում կնշանակի ընդմիջտ կորցնել շուկան: ՌԻստի անհրաժեշտ է կատարել սպառազինությունների շուկաներում տիրող իրավիճակի մշտազննում և թույլ չտալ, որ հայրենական արտադրողների ապրանքները կորցնեն իրենց մրցունակությունը:

Վերը թվարկած դրույթներից հետևում է, որ մոտ ապագայում պետք է սպասել ռազմական ոլորտի զարգացման որակական նոր փուլ: Այն պայմանավորված կլինի ինչպես ծագած մարտահրավերներով, ՋՌԻ-ին համապատասխանաբար ներկայացվող նոր պահանջներով, այնպես էլ ռազմաարդյունաբերության արտադրական ուժերի շարունակական զարգացմամբ:

ՀՀ-ում պաշտպանական բարեփոխումների ծրագրով հիմք դրվեց ռազմաարդյունաբերության ոլորտում կիրառվող արտադրական տեխնոլոգիաների և դրանց ընդհանուր բնութագրերին ներկայացվող պահանջների փոփոխություններին: Դա առաջին հերթին պայմանավորված է տնտեսական պայմանների փոփոխություններով:

Այս առումով Ռ-ԱՀ-ի տնտեսական բնական զարգացման մասին խոսելիս անհրաժեշտ է տարանջատել այդ բնական զարգացումը ծնող երկու գործոն՝

– տնտեսական, որը հիմնականում մարմնավորում է ինչպես ՌԱՀ-ի, այնպես էլ տվյալ պետության ամբողջ արդյունաբերության ոլորտում իրագործվող բարեփոխումների և զարգացման քաղաքականության ուղղվածության արդյունքը: Գործոնի հաշվառումը կարող է խթանել ընկերություններում տնտեսական տեսանկյունից ավելի արդյունավետ արտադրական ենթակառուցվածքների ստեղծումը:

– քաղաքական, որը, լինելով ռազմական ոլորտի արտադրանքի վրա վերջնական պահանջարկի ազդեցություն, ձևավորվում է ըստ ներքին և արտաքին պահանջարկի: Գործոնը ապագայում կկանխորոշի ՌԱՀ-ի մասնագիտացումը ինչպես ազգային շուկայի շրջանակներում, այնպես էլ սպառազինությունների միջազգային շուկայում:

Եթե վերջնական պահանջարկի կառուցվածքի կանխատեսումը (երկրորդ գործոնը) հայրենական ՌԱՀ-ը աշխատունակ պահելու երաշխիքն է, ինչպես նաև կարող է արագ փոփոխվող աշխարհում հնարավորինս մեծացնել սպառազինությունների շուկայում ՀՀ մասնաբաժինը, ապա առաջին գործոնը կայանաավորի միջազգային շուկայում ՀՀ ռազմարդյունաբերության մրցունակությունը և էապես կնպաստի ՀՀ-ում ճկուն արտադրական կառույցների ձևավորմանը՝ միջազգային շուկաներում իրավիճակի կտրուկ վերելքներին ու վայրէջքներին որքան հնարավոր է նվազ կորուստներով հարմարեցված: Ինչպես երևում է, այս երկու գործոնները փոխլրացնող են, թեև որոշիչը տնտեսական գործոնն է:

Պաշտպանական ոլորտում անկայուն տնտեսական ենթակառուցվածքների առկայության դեպքում հնարավոր չէ երկարաժամկետ հեռանկարում պահպանել ձեռք բերված դիրքերը, նույնիսկ եթե սպառազինությունների գծով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին օգտագործողների կարիքների կանխատեսումը կատարվի հաջողությամբ: Դա բխում է այն փաստից, որ ոչ զարգացած ենթակառուցվածքի պայմաններում փոփոխվող իրադրություններին հարմարվելը կհանգեցնի այսպես կոչված տրանսակցիոն ծախսերի մեծացմանը (տեղեկատվության ապահովման, որոշումների ընդունման գործընթացի հետ կապված և այլ ծախսեր), ընդամին դրանք կարող են հասնել զգալի չափերի և երկար ժամկետում առաջ բերել ՌԱՀ-ի հատվածների սպրանքների գների աճում, ինչի հետևանքով կնվազի աշխարհում ՌԱՀ-ի մրցունակությունը:

Այսպիսով՝ կարելի է նշել ՌԱՀ-ի զարգացման հետևյալ նախապայմանները.

– ընկերությունների ու դրանց կառավարման հաստատութենական կառուցվածքի կատարելագործում, «արդյունավետ» սեփականատիրոջ ձևավորման պրոբլեմի լուծում,

– արտադրության ոչ հիմնական ոլորտների զարգացում՝ կադրերի պահպանման և արտադրական միջոցների սառեցումը կանխելու նպատակով (դա կարող է նվազեցնել վերադիր ծախսերը, ուստի և հիմնական արտադրանքի ինքնարժեքը),

– սպառազինությունների արտահանման խթանում, քանի որ դրանցում մարմնավորված են ՌԱՀ-ի մտավոր, մասնագիտական և արտադրական կարողությունները, հատկապես՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Перспективы развития российского оборонно-промышленного комплекса и ВПК». «Федеральный портал PROTOWN.RU» (<http://protown.ru/information/hide/4492.html>).
2. В. М. Буренок, Г. В. Бабкин, А. А. Косенко. Оборонно-промышленный комплекс: состояние и перспективы развития. «Военная мысль», 2005, № 6.
3. А. Л. Рыбас. Прорыв на мировой рынок вооружений. «Россия в глобальной политике», март – апрель 2008, № 2.
4. G. and M. Friedman. The Future of War. Power, Technology and Armenian World Dominance in the 21st Century. Crown, 1996.
5. Ismael Hossein-Zadeh. The Political Economy of US Militarism. New York, 2006.
6. Seymour Melman. Pentagon Capitalism. The Political Economy of War. New York, 1970.

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

А. П. ПЕТРОСЯН, советник 2-ого класса Специальной гражданской службы, главный специалист ВПУ МО РА, А. Р. ТОВМАСЯН, ведущий служащий 1-ого класса Специальной гражданской службы, ведущий специалист экономического отделения Центрального военного представительства МО РА

РЕЗЮМЕ

Анализ процесса приватизации, осуществленного в РА, позволяет выявить следующие основные упущения, отрицательно повлиявшие на развитие военной промышленности, в частности: не были обеспечены активизация экономики, повышение ее эффективности, крупные зарубежные капиталовложения и т. д., не были созданы соответствующие инвестиционные структуры, в результате чего существенно снизилась эффективность акционерного управления, не было оказано государственное содействие акционерной деятельности, предприниматели были вынуждены самостоятельно преодолевать трудности, связанные с переходом к рыночным отношениям.

В настоящее время предпринимаются целенаправленные шаги по возрождению в РА системы военной промышленности (СВП). При этом в качестве стандарта экономического развития СВП рассматриваются как глобальные тенденции развития военной науки, так и экономико-политические характеристики внешней среды.

Следует учитывать, что компаративное преимущество СВП государств обеспечивается военно-экономическим паритетом. При таком подходе в сравнение ставятся не только соответствующие виды вооружения, но в первую очередь те технологии, применением которых обеспечивается производство ВВТ в достаточных количествах и с необходимым качеством.

Программа оборонных реформ в РА практически заложила фундамент для системных изменений требований, предъявляемых к применяемым в

сфере военной промышленности производственным технологиям и к их общим характеристикам, и обусловленных с изменениями экономических и политических факторов.

С учетом вышеизложенного, в качестве необходимых предпосылок для развития СВП отмечены:

- усовершенствование институциональной структуры предприятий и системы их управления, решение проблемы актуальности формирования «эффективного» собственника,
- развитие не основных сфер производства с целью сохранения кадров и предотвращения замораживания производственных средств,
- стимулирование экспорта военной продукции.

ECONOMIC PRECONDITIONS FOR THE DEVELOPMENT OF THE RA MILITARY INDUSTRY SYSTEM

*A. P. PETROSYAN, 2nd Class Advisor of the Special Civil Service,
Chief Specialist in the Military-Industry Department, MOD, RA,*

*A. R. TOVMASYAN, 1st Class Leading Officer of the Special Civil Service,
Senior Specialist in the Economic Section of the Central Military Mission, MOD, RA*

SUMMARY

The analysis of the privatization process implemented in the RA makes it possible to reveal the following major gaps that have negatively affected the development of military industry, in particular: promotion of the economy, increase of its efficiency, large foreign investments, etc. were not provided, relevant investment structures were not established resulting in significant decrease of the corporate governance effectiveness, government promotion of the shareholder activity was not carried out, businesses were forced to overcome on their own the difficulties regarding the transition to market relations.

At present deliberate steps are being taken to revive in the RA the military industry system (MIS). At the same time as a standard of economic development of the MIS are considered both global trends of military science advancement and economic-political characteristics of external environment.

It should be noted that the comparative advantage of the states' MIS is ensured by military-economic parity. With this approach, not only the relevant weapons but also primarily those technologies are compared through application of which the production of arms and military equipment in sufficient quantity and required quality is provided.

The RA defense reforms program practically laid the basis for systemic changes of the requirements imposed for the production technologies applicable

in the field of military industry and to their general characteristics, and determined by the shifts of economic and political factors.

Taking into account the aforementioned, the indispensable preconditions for the development of the MIS are the following:

- Improvement of the institutional structure of enterprises and their management systems, solving the problem of relevance of the formation of an «effective» owner,
- Development of non-core areas of production in order to keep the personnel and to prevent freezing of production facilities,
- Encouragement of exports of military products.

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Գ. Ժ. ԲԱԴԱԼՅԱՆ, ՀՀ Էկոնոմիկայի փոխնախարար



Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետություններն ստիպված եղան ինքնուրույնաբար լուծելու իրենց տնտեսական և ռազմական անվտանգության ապահովման կարևոր խնդիրը: Հետխորհրդային պետություններում ծանր վիճակում հայտնվեցին արդյունաբերական ձեռնարկությունները և նախկինում պետության կողմից ֆինանսավորվող խոշոր գիտական կազմակերպությունները: Հատկապես ծանր էր խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում ներառված ձեռնարկությունների վիճակը, քանի որ դրանք գրեթե ամբողջովին կորցրին իրենց շուկաները: Եվ քանի որ արդյունաբերության, այդ թվում նաև ռազմաարդյունաբերական համակարգի, ձեռնարկությունների արտադրանքը Խորհրդային Հայաստանի համախառն ներքին արդյունքում ուներ բավական մեծ տեսակարար կշիռ, նորանկախ պետության առջև ծագած կարևորագույն խնդիրներից էր նոր պայմաններում արդյունաբերության վերականգնումը և ռազմաարդյունաբերական համակարգի (ՌԱՀ) ստեղծումը՝ եղած արտադրական բազայի և արտադրության կազմակերպման փորձի օգտագործմամբ:

ՀՀ անկախության տարիներին ռազմաարդյունաբերության զարգացման ուղղությունների վերաբերյալ ընդունվել են մի շարք փաստաթղթեր, կազմվել են բազմաթիվ ծրագրեր, սահմանվել են այդ ծրագրերի կատարման ժամանակացույցներ, սակայն այդ ծրագրերը ուղղված են եղել հիմնականում իրավիճակային խնդիրների լուծմանը:

Ռազմաարդյունաբերական համակարգի՝ որպես պետության ռազմական անվտանգության գերակա օղակներից մեկի զարգացման խնդիրները կարևոր տեղ են զբաղեցնում պետության անվտանգությանը վերաբերող բոլոր ռազմավարական փաստաթղթերում, իսկ վերջերս մշակվեց «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի» նախագիծը: Այդ աշխատանքներին մասնակցեցին պետական բոլոր շահագրգիռ մարմինների, և առաջին հերթին՝ ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարության ու պաշտպանության նախարարության մասնագետները:

ՌԱՀ-ի զարգացումը ընդհանուր առմամբ պետք է դիտել երկու ուղղություններով, որոնք արտացոլված են նաև ՌԱՀ-ի զարգացման հայեցակարգի նախագծում: Դրանք են.

- տնտեսության առաջատար ճյուղերի, առաջին հերթին՝ արդյունաբերության զարգացում,
- որպես պետության ռազմական անվտանգությունն ապահովող կարևոր տնտեսական ոլորտի՝ ՌԱՀ-ի զարգացմանը պետության կողմից անհրաժեշտ օժանդակության ապահովում:

ՀՀ Կառավարությունը ձեռնամուխ է եղել տնտեսության բոլոր ճյուղերի համակարգային բարեփոխումների, որոնց հիմնական նպատակը տնտեսության կայուն աճի ապահովումն է: Այս ուղղությամբ կատարվում են հետևողական քայլեր, որոնց նպատակն է.

- տնտեսության և դրա առանձին ճյուղերի զարգացմանը նպաստող օրենսդրական դաշտի կատարելագործումը,
- աջակցությունը բիզնես-միջավայրի բարելավմանը և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը,
- տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումների խթանումը, մրցակցության հավասար պայմանների ստեղծումը,
- հարկաբյուջետային քաղաքականության բարելավումը, միջազգային ստանդարտներին համապատասխանող որակի ենթակառուցվածքների ստեղծումը,
- հակակոռուպցիոն ծրագրերի իրագործումը,
- արտահանման խթանմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակումն ու իրագործումը,
- գիտատար տնտեսության զարգացմանը պետության կողմից օժանդակության մեծացումը,
- գիտության և կրթության բնագավառների հաստատութենական կարողությունների հզորացումը,
- պետական կառավարման ոլորտի բարելավումն ու օպտիմալացումը:

Միևնույն ժամանակ, խնդիր է դրված տնտեսության համընդհանուր բարեփոխումների համատեքստում որպես թիրախային ընտրել տնտեսության, այդ թվում նաև արդյունաբերության, այն ճյուղերը, որոնք առավել մեծ հնարավորություն ունեն արագ զարգանալու և իրենց հերթին նպաստելու տնտեսության հարակից ճյուղերի ու գիտության զարգացմանը: Ե՛վ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2008 թ. նախընտրական ծրագրում, և՛ ՀՀ Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերում կարևոր տեղ ունի արդյունաբերության զարգացման ակտիվ քաղաքականության իրականացումը:

Ակնհայտ է, որ արդյունաբերության զարգացումը ՀՀ Կառավարության՝ երկրի տնտեսության զարգացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերում պետք է ունենար իր առանձնահատուկ տեղը, պետք է կիրառվեին համակարգին բնորոշ մոտեցումներ՝ երկրի հումքային ռեսուրսների սահմանափակության, բարձր էներգատարություն ունեցող ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու անհրաժեշտության, առավելապես բարձր տեխնոլոգիական և գիտատար ճյուղերի զարգացմանը նպաստող միջոցառումների

մշակման պահանջի, արտադրություն–գիտություն–կրթություն կապի ոչ լիարժեքության, այդ ճյուղերում ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական աջակցության միջոցների ոչ բավարար լինելու և այլ հանգամանքների հաշվառմամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնագետների կողմից մշակվել են այս խնդիրների լուծմանն ուղղված «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները» և «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ» փաստաթղթերը, որոնք ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են, համապատասխանաբար, 2010 թ. հունվարի 11-ին և 2011 թ. փետրվարի 17-ին: Մշակման փուլում է գտնվում «Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական զարգացման ռազմավարության հայեցակարգը»:

Նշված հայեցակարգային փաստաթղթերում ներառված դրույթների և ՌԱՀ-ի զարգացման հայեցակարգում ընդգրկված ուղղությունների համադրման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում պատկերացում կազմելու ՌԱՀ-ի՝ որպես և՛ տնտեսության առաջատար ճյուղի, որի զարգացումը կնպաստի տնտեսության այլ ճյուղերի ու գիտության զարգացմանը, և՛ պետության ռազմական անվտանգության համակարգի բաղադրիչներից մեկի դերի մասին: Այդ հայեցակարգներում կատարված է արդյունաբերության հիմնական ճյուղերի ներկայիս վիճակի վերլուծություն, ի հայտ են բերված առկա խնդիրները և նախանշված են դրանց լուծման ուղիները, նկարագրված են արդյունաբերության առաջատար ճյուղերի հեռանկարները, ներկայացված են առաջարկություններ դրանց զարգացման ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ, սահմանված են նորամուծական համակարգի ձևավորման դրույթները, մշակված են նորամուծական ազգային համակարգի կազմավորման սկզբունքները և տնտեսության գիտատար ոլորտների զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Ակնհայտ է, որ մի հողվածի շրջանակներում հնարավոր չէ ամբողջովին վերլուծել այդ հայեցակարգներում արծարծված խնդիրներն ու դրանց լուծման ուղղությունները, ուստի նպատակահարմար է ներկայացնել արդյունաբերության հիմնական ճյուղերի զարգացմանն ուղղված այն կարևոր խնդիրներն ու առաջարկությունները, որոնք վերաբերում են ՌԱՀ-ի զարգացմանը:

Հանրապետության արդյունաբերության ներկայիս վիճակին բնորոշ են մի շարք խնդիրներ: Դրանցից առանձնացնենք ՌԱՀ-ի ոլորտին վերաբերող հետևյալ խնդիրները՝

- մակրո- և միկրոմակարդակներում հետազոտությունների ու վերլուծությունների պակասը, չկա համընդգրկուն տեղեկատվական բազա,
- չկան ինչպես ճյուղային զարգացման, այնպես էլ ընկերությունների՝ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր,
- ցածր մրցունակությունը,
- արտադրությունը գերազանցապես ներմուծվող հումքի կիրառմամբ,
- մեծ տրանսպորտային և էներգետիկ ծախսերը,

- հարկային ու մաքսային վարչարարության խնդիրները,
- ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարման համակարգեր և կառավարիչներ չունենալը,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակությունը,
- արտադրություն – գիտություն – կրթություն թույլ կապը,
- վարկային միջոցների դժվարամատչելիությունը,
- սպառման շուկայի սահմանափակությունը:

Այսպիսով՝ հանրապետության արդյունաբերության ճյուղերի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է տվյալ խնդիրների հաշվառմամբ իրականացնել համալիր միջոցառումներ, մասնավորապես՝

1. մշակել համապատասխան արդյունաբերական ճյուղերի զարգացման ծրագրեր, այդ նպատակով վերլուծել յուրաքանչյուր ճյուղի առկա վիճակը, այդ թվում՝ կազմակերպությունների մակարդակով, ստեղծել տեղեկության բազա, որը հնարավորություն տա կատարելու վերլուծություններ և որոշելու ճյուղի զարգացման գլխավոր ուղղությունները: Դյուղերի զարգացման ներուժն ու միտումները ավելի հստակ պատկերացնելու և զարգացման գերակա ուղղությունները որոշելու համար կազմակերպել քննարկումներ ոլորտի մասնագետների, հետազոտողների և արտադրության ներկայացուցիչների մասնակցությամբ,
2. կատարել շուկայի ուսումնասիրություն, ինչը ճյուղի ձեռնարկություններին հնարավորություն կտա մեծացնելու իրենց արտադրանքի իրացման հնարավորությունները: Շուկաների ձեռքբերման խնդրում կարևոր է միջազգային համագործակցության ընդլայնումը, իսկ Ռ-ԱՀ-ի համար այս խնդրի լուծումը պահանջում է պետական աջակցություն, ինչպես նաև անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծում: Պետական աջակցություն է անհրաժեշտ նաև միջազգային ցուցահանդեսներին Ռ-ԱՀ-ի ձեռնարկությունների մասնակցությունն ապահովելու համար,
3. ֆինանսական ռեսուրսների ապահովման խնդիրը լուծել երկու տեսակի գործիքների՝ ֆիսկալ խթանների և ֆինանսավորման այլընտրանքային ձևերի կիրառմամբ: Ֆիսկալ խթաններից են դրամական հատկացումները և հարկային արտոնությունները: Այստեղ կարևոր ենք համարում հետևյալ նկատառումը. Հայաստանի Ռ-ԱՀ-ի ձեռնարկությունները հիմնականում կատարում են պետպատվեր ու ֆինանսավորվում են պետբյուջեից, և ակնհայտ է, որ նման սահմանափակ ֆինանսավորումը չի կարող բավարար լինել նոր արտադրատեսակների ստեղծման, գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, արտադրության ծավալը մեծացնելու, միջազգային ծրագրերին մասնակցելու համար: Այս առումով կարևոր է, որ ձեռնարկություններին, ֆիսկալ խթաններից բացի, ընձեռվի ոչ բարձր տոկոսադրույքներով երկարաժամկետ վարկային միջոցներ ստանալու հնարավորություն: ՌԻստի հարկավոր է

ուղորդի գերակա ուղղությունները որոշելուց հետո բանկային համակարգի հետ քննարկել այդ ձեռնարկություններին մատչելի տոկոսադրույքներով ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցը,

4. արդյունաբերության՝ բարձր մակարդակով տեխնոլոգիական ապահովման համար ընդլայնել միջազգային համագործակցությունը և ապահովել ձեռնարկությունների ընդգրկումը վերազգային կորպորացիաներում: Ըստ այդմ՝ պետք է լուրջ քայլեր ձեռնարկվեն նման ներդրումների համար երկիրը գրավիչ դարձնելու ուղղությամբ, ինչը հնարավոր է ապահովել բարձրակարգ մարդկային կապիտալի և գիտահետազոտական աշխատուժի ուժեղացմամբ, ինչպես նաև ներդրումային միջավայրի գրավչության մեծացմամբ: Վերազգային կորպորացիաներում ՀՀ ՌԱՀ-ի ձեռնարկությունների ներգրավման հարցը, իհարկե, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, անհրաժեշտ է ապահովել համապատասխան իրավական դաշտ, ինչը, մեր կարծիքով, շատ կարևոր է ՌԱՀ-ի զարգացման համար:

Այս բոլոր առաջարկությունները լիովին չեն ընդգրկում այն անհրաժեշտ գործողությունների համալիրը, որոնք կնպաստեն արդյունաբերության տվյալ ճյուղի զարգացմանը, և այդ առումով, ինչպես արդեն նշվեց, հարկավոր է առաջին հերթին կատարել ճյուղի մակրոտնտեսական վերլուծություն և կազմել ճյուղի զարգացման ռազմավարական ծրագիր:

Արդյունաբերության զարգացման խնդիրները լուծելու և գերակա ուղղությունները որոշելու, կառավարման համակարգը բարելավելու, ռազմավարական ծրագրեր մշակելու և դրանց կատարումն ապահովելու համար հայեցակարգներում առաջարկվում է ստեղծել համապատասխան հանձնաժողով կամ խորհուրդ, որում ընդգրկվեն տվյալ ճյուղի պետական կառավարման մարմնի, շահագրգիռ այլ պետական մարմինների, գիտության և արտադրության մասնագետներ: Նման համակարգող մարմնի ստեղծումը մի շարք արդյունաբերական ճյուղերի համար համարում ենք շատ կարևոր, իսկ ՌԱՀ-ի համար՝ անհրաժեշտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4:
2. «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները», 2009 թ. (www.mineconomy.am/upload/file/Industry%20Concept.pdf):
3. «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի նիստի հմ. 6 արձանագրային որոշման հավելված (www.mineconomy.am/am/81/):

О ПЕРСПЕКТИВАХ РАЗВИТИЯ СИСТЕМЫ
ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ
В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОСТИ РА

Г. Ж. БАДАЛЯН, заместитель Министра экономики РА

РЕЗЮМЕ

Развитие системы военной промышленности РА целесообразно рассматривать в двух направлениях: развитие ведущих сфер экономики, в первую очередь – промышленности, и обеспечение необходимого содействия со стороны государства развитию СВП как важной сферы экономики, обеспечивающей военную безопасность государства.

Правительство РА приступило к реформированию всех отраслей экономики с целью обеспечения ее устойчивого роста. В этом направлении предпринимаются конкретные шаги по: усовершенствованию законодательного поля; улучшению бизнес-среды и развитию малого и среднего предпринимательства; стимулированию инвестиций и созданию равных условий для конкуренции; улучшению налогово-бюджетной политики; созданию соответствующих международным стандартам инфраструктур качества; реализации антикоррупционных программ; разработке и реализации экономической политики, нацеленной на стимулирование экспорта; росту государственной поддержки развитию экономики, основывающейся на новейших достижениях науки; развитию институциональных возможностей науки и образования; оптимизации и совершенствованию сферы государственного управления. В то же время в контексте всеобщих реформ ставится задача выбора в экономике, в том числе и в промышленности, тех целевых отраслей, которые обладают наибольшими возможностями быстрого развития и в свою очередь будут способствовать развитию других отраслей экономики и науки.

Специалистами Министерства экономики РА разработан пакет документов, включающий «Концептуальные направления развития промышленности РА» и «Концепцию стартовой стратегии формирования инновационной экономики». На стадии разработки находится «Концепция стратегии промышленного развития Армении, нацеленного на экспорт».

С учетом нынешнего состояния военной промышленности республики представляются необходимыми: увеличение числа исследований на микроуровне; развитие информационной базы; разработка программ развития сферы; разработка и реализация стратегических программ компаний, вовлеченных в сферу военной промышленности; стимулирование конкуренции производства, использующего внутреннее сырье; снижение транспортных и энергетических расходов; преодоление налоговой и таможенной бюрократических препон; внедрение систем управления и подготовки управляющих кадров, соответствующих современным международным стандартам; развитие инструментов и механизмов государственной поддержки;

укрепление связи наука–образование–производство; обеспечение доступности кредитных средств; расширение рынка сбыта.

Для обеспечения развития отраслей промышленности необходимо реализовать комплекс следующих мероприятий: разработка программы развития данной отрасли; изучение отраслевого рынка; применение фискальных стимулов и альтернативных форм финансирования; расширение международного сотрудничества и обеспечение вовлечения отечественных предприятий в транснациональные корпорации.

ON THE DEVELOPMENT PERSPECTIVE
OF THE MILITARY INDUSTRY SYSTEM
IN THE CONTEXT OF THE RA INDUSTRIAL DEVELOPMENT

G. Zh. BADALYAN, Deputy Economy Minister of the RA

SUMMARY

The RA's military industry development should be viewed in two ways: developing the advanced sectors of economy, in the first place – the industry, and providing the necessary assistance from the state for the MIS development as an important sector of the economy ensuring the state's military security.

The RA Government has launched the reform of all sectors of the economy to ensure its sustainable growth. Concrete steps are taken in this direction to: improve the legislative field, improve the business environment and develop small and medium-sized businesses, encourage investments and create equal conditions for competition, improve fiscal policies, establish quality infrastructures of appropriate international standards, implement anti-corruption programs, develop and implement economic policies aimed at stimulating exports, increase state support to economic development based on the latest scientific achievements, expand institutional capacities of science and education, optimize and improve public administration. At the same time in the context of general reforms the problem of the choice of those targeted sectors in the economy including the industry is put that have greater opportunity of rapid development and, in turn, will contribute to the development of the other sectors of economy and science.

To this end, experts from the RA Ministry of Economy developed a package of documents including «The conceptual directions of the RA's industrial development» and «The concept of starting strategy for innovation economy's formation». «The concept of industrial development strategy of Armenia aimed at export» is under development.

Taking into account the current state of the republic's military industry it is necessary: the increase of investigations' number at the micro level, the development of informational background, the elaboration of the development

programs of the sector, the development and implementation of the strategic programs of companies engaged in the sphere of military industry, the encouragement of competition and production that uses internal raw materials, the reduction of transportation and energy costs, the overcoming tax and customs bureaucratic obstacles, the introduction of management systems and executive education in compliance with the modern international standards, the development of tools and mechanisms of state support, the strengthening of the link science-education-production, the ensuring of credit accessibility, the expansion of market.

For ensuring the development of the industrial sectors the set of following activities is to be implemented: the elaboration of development program of this sector, the study of the industry market, the application of fiscal incentives and alternative forms of financing, the expansion of international cooperation and ensuring of the involvement of domestic enterprises in transnational corporations.

ՌԱԶՄԱՐԳ-ՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ
ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար



Գիտությունը միշտ էլ եղել է պետականության առանցքներից մեկը: Այդ առանցքը կոտրել նշանակում է վերացնել պետությունը: Անշուշտ, գիտությունը հաջողությամբ զարգանում է միայն այն հասարակությունում, որտեղ կա գիտական մշակումների հասարակական պատվեր, որտեղ պահանջված են բարձր որակավորում ունեցող գիտական կադրերը: ԽՍՀՄ-ում գիտության հզոր վերելքը խթանվում էր գիտատար արդյունաբերության շարունակական զարգացմամբ, ընդամին գիտական հետազոտությունները առաջին հերթին պահանջված էին ռազ-

մաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) կողմից:

ԽՍՀՄ փլուզման հետևանքով պաշտպանական հիմնարար ու որոնողական հետազոտությունների ֆինանսավորման կրճատումից առավելապես տուժեցին ճեղքումնային հեղափոխական աշխատանքները, քանի որ չկա դրանցում հաջողության հասնելու ակնհայտ երաշխիք: Դրանով իսկ ստեղծվում են ռազմական արդյունաբերության հետ մնալու հիմքերը:

Իր կայուն զարգացումը որպես գերակայություն հռչակած պետության գլխավոր առաջնահերթություններից մեկը պետք է լինի պաշտպանական-արդյունաբերական համալիրի արմատական արդիականացումը: Եվ այստեղ վճռորոշը հիմնարար գիտության դերն է: Դա, ըստ էության, մի դրույթ է, որը ապացույցներ չի պահանջում: Բավական է հիշել, որ ԽՍՀՄ միջուկային-հրթիռատիե-գերական վահանի ստեղծման գործում ամենակարևոր ներդրումն ունեցան մեր ականավոր գիտնականները՝ Մստիսլավ Կելդիշը, Իգոր Կուրչատովը, Իսահակ Ալիխանովը, Սերգեյ Կովալյովը, Ալեքսանդր Պրոխորովը, Նիկոլայ Բասովը, Սերգեյ Կորոլյովը, Սամվել Քոչարյանցը, Անդրեյ Սախարովը, Նիկոլայ Սեմյոնովը, Իգոր Տամմը, Յակով Չելդովիչը, Յուլի Խարիտոնը և էլի շատ ու շատ հայտնի մասնագետներ, որոնք դարձան մեր գիտության և տեխնիկայի հպարտությունը: Նրանց աշխատանքները ԽՍՀՄ-ը դարձրեցին առաջատար համաշխարհային տերություն:

Կարևոր է շեշտել, որ սկզբնապես զուտ պաշտպանական բնույթի նախագծերը հետագայում հույժ կարևոր դեր խաղացին ամբողջ գիտության և տեխնիկայի զարգացման գործում, զարկ տվեցին ոչ միայն կիրառական, այլև հիմնարար հետազոտություններին ժամանակակից գիտելիքի գործնականում բոլոր բնագավառներում:

1990-ական թվականների ճգնաժամը կտրուկ կերպով փոխեց իրավիճակը: Այսօր մեզ համար ավելի ու ավելի դժվար է դառնում մրցակցել համաշխարհա-

յին շուկաներում, քանի որ շատ բաներում մենք հետ ենք մնացել և՛ տեխնիկական, և՛ «մտավոր» առումով: Պատճառները մի քանիսն են: Առաջին հերթին դա պաշտպանական հիմնարար ու որոնողական հետազոտությունների ֆինանսավորման կրճատումն է: Առանձնակի տագնապ է հարուցում այն հանգամանքը, որ, ինչպես նշվեց, առավել մեծ չափով տուժում են ճեղքումնային, սկզբունքորեն նոր աշխատանքները, երբ չկա երաշխիք, որ դրանք արագ կպսակվեն հաջողությամբ. գիտության մեջ առանց ռիսկի ճեղքումներ կատարել հնարավոր չէ: Մակայն հենց դա է ներկայումս տեղի ունենում պաշտպանական արդյունաբերության ոլորտում: Զինվորականները գերադասում են կարճաժամկետ, ընդ որում՝ առավելագույնս կոնկրետ, մշակումները, որոնք հիմնված են լավ հայտնի սկզբունքների վրա: Նման մոտեցման պատճառով սկսում ենք համաշխարհային ստանդարտներից հետ մնալ արդեն պլանավորման փուլում:

Ներկայումս ձևավորվում է մի վտանգավոր իրավիճակ, երբ պաշտպանական հետազոտությունների «ժառանգված» խորհրդային համակարգն արդեն աշխատունակ չէ, իսկ արդիական համակարգը դեռ նոր է ստեղծվում: Շարունակում են չպահանջված մնալ ակադեմիական և ճյուղային գիտական կոլեկտիվների, բարձրագույն դպրոցի հեռանկարային մշակումների արդյունքները: Հիմնարար ու կիրառական հետազոտությունների (ՀԿՀ) անվանացուցակի ու թվաքանակի կրճատման բացասական միտումը անխուսափելիորեն հանգեցնում է ի շահ երկրի պաշտպանության և անվտանգության ապահովման կատարվող հետազոտությունների առանձին գիտատեխնիկական ուղղությունների կորստի, ինչպես նաև հեռանկարային մտուցների ստեղծման փուլերի ժամկետների երկարաձգմանն ու թանկացմանը: Այդ ամենի հետևանքով մենք գիտատեխնոլոգիական առումով էլ ավելի ենք հետ մնում գիտության, տեխնիկայի ու արտադրության բնագավառներում, քայքայվում են այն ակադեմիական, բուհական և ճյուղային գիտական դպրոցները, որոնք ավանդաբար կողմնորոշված էին դեպի պաշտպանական հետազոտություններ: Նվազել է պաշտպանության և անվտանգության համար կատարվող հիմնարար ու որոնողական հետազոտությունների մասնաբաժինը: Լուրջ քննադատության չի դիմանում նաև գործող մրցութային համակարգը, որը պետք է որոշի ՌԱՀ-ի համար հետազոտություններ կատարելու իրավունք ստացողներին. հաղթում է ոչ թե նա, ում նախագիծն ավելի առաջադիմական է և կոլեկտիվն էլ ավելի ուժեղ, այլ նա, ով խոստանում է աշխատանքը կատարել ավելի էժան և արագ: Մակայն ամենատագնասպալին այն է, որ այդ դեպքում մենք ստանում ենք «երկրորդ տեսակի» ռազմական տեխնիկա, իսկ առաջնակարգ մշակումները մնում են որպես մեռած տառ:

Փաստորեն բուհերում, ակադեմիական ու ճյուղային հաստատություններում աշխատող գիտնականների և ՌԱՀ-ի միջև սերտ կապերը խզվում են: Որպես հետևանք՝ գիտնականների հեռանկարային մշակումները մնում են չպահանջված, վերանում են պաշտպանական և անվտանգային ոլորտի կարևոր գիտատեխնիկական ուղղությունները: Ընդ որում, անշեղորեն նվազում են իսկապես նշանակալի, «ճեղքումնային» պաշտպանական գիտատեխնիկական նվաճումների հասնելու հնարավորությունները:

Միանգամայն այլ է պատկերը աշխարհի զարգացած երկրներում: Նոր սպառազինության ստեղծման գործում հիմնարար գիտության դերն անընդհատ աճում է: Որպես արդյունք՝ ստեղծվել են սպառազինության սկզբունքորեն նոր տեսակներ՝ գերճշգրիտ, լազերային, էլեկտրամագնիսական, կենսաբանական, տեղեկության և մի շարք այլ տեսակների զենքեր, ինչը որակապես փոխում է ժամանակակից բանակների կերպարը: Հատկանշական է, որ առաջավոր պետությունների ղեկավարները որպես պետության ոչ միայն ռազմական, այլև տեխնոլոգիական գերազանցության երաշխիք դիտում են առաջին հերթին պաշտպանական հիմնարար գիտական հետազոտությունները:

ԱՄՆ-ն իր առջև դրել է խիստ հավակնոտ նպատակներ. ոչ թե պարզապես առաջավարել ռազմական ոլորտում, այլ հասնել ճնշող գիտատեխնոլոգիական գերազանցության: Այդ գործում հանգուցային դեր տրվում է Հեռանկարային պաշտպանական հետազոտությունների և մշակումների գործակալությանը (ՀՊՀՄԳ՝ *DARPA*): Դրա տարեկան բյուջեն կազմում է ավելի քան 3,2 միլիարդ դոլար: Ի դեպ, այդ գործակալությունն ստեղծվել է 1958 թվականին՝ ԽՍՀՄ-ում Երկրի առաջին արհեստական արբանյակի արձակումից անմիջապես հետո: Հայտնի է, որ գործակալությունը շատ բաներում պատճենել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի կիրառական հետազոտությունների բաժանմունքի աշխատանքային սկզբունքները: ՀՊՀՄԳ-ում աշխատում են ամենաբարձրակարգ մասնագետները, որոնց տրված են մեծ լիազորություններ: Նրանք պարզում են պաշտպանական որոնողական հետազոտությունների զարգացման գերակայությունները, որոնք կարող են արագ փոփոխել ըստ իրավիճակի, ռեսուրսները կենտրոնացնում են ճեղքումնային ուղղություններում՝ նույնիսկ կոնկրետ ցանկալի արդյունքի չհասնելու մեծ ռիսկի դեպքում, գաղափարների մակարդակում պահպանում են կոշտ մրցակցություն, ապահովում են ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության, ՌԱՀ-ի ձեռնարկությունների և հիմնարար գիտության համագործակցությունը: Ելույթ ունենալով Գիտությունների ազգային ակադեմիայում՝ ԱՄՆ-ի Նախագահ Բարակ Օբաման հատկապես կարևորել է ՀՊՀՄԳ դերը ԱՄՆ-ի տեխնոլոգիական գերազանցության հաստատման գործում:

Ամերիկյան փորձագետների կարծիքով՝ ՀՊՀՄԳ-ն այն սակավաթիվ պետական կառույցներից է, որոնք շարունակում են օգտակար և արդյունավետ մնալ իրենց հիմնման պահից առ այսօր: Որպես ՀՊՀՄԳ արգասաբեր գործունեության օրինակներ կարելի է նշել. ՋՊՄ արբանյակային ռադիոտեղեկարական համակարգի ստեղծման համար տեխնոլոգիական որոշումների համալիրի ձևավորումը, նկատելիության նվազեցման «Ստելզ» տեխնոլոգիաների ստեղծումը, հաշվողական ցանցերում (Ինտերնետ, արագ Ինտերնետ ցանցեր) տեղեկության փոխանակման սկզբունքների և արձանագրությունների մշակումը, փուլավորված արեհավաքային վանդակով ՌՏԿ-ների ստեղծումը, գիշերային տեսանելիության չսառեցվող սարքերի և շրջանային տեսածրման ԻԿ-համակարգերի ստեղծումը, վրագետոնյա, օդային և ստորջրյա բազավորմամբ անանձնակազմ միջոցների (լրիվ ինքնագործ կամ հեռակառավարումային ռոբոտացված համալիրներ) ստեղծումը, նշանակետերի անդրիորիզոնային ռադիոտեղորոշումային հայտ-

նաբերման (անդրհորիզոնային տեղորոշում) տեխնոլոգիաների մշակումը և այլն:

Ընդ որում, ՀՊՀՄԳ-ի կողմից ի սկզբանե ռազմական նպատակներով մշակված մի շարք տեխնոլոգիաներ հետագայում լայնորեն կիրառվեցին քաղաքացիական ոլորտներում: Դրա վառ օրինակներից է ՋՊՍ արբանյակային ռադիոտեղեկարարական համակարգը, որի կիրառումը հանգեցրեց քաղաքացիական ուղեվարական սարքավորանքի մի ամբողջ ինդուստրիայի ստեղծման, ինչն էլ իր հերթին տվեց հսկայական տնտեսական էֆեկտ:

ՀՊՀՄԳ-ին նման կառույցներ ստեղծվել են նաև այլ երկրներում. Գերմանիայում՝ *DRL*, Հնդկաստանում՝ *DRDO* և այլն:

Այսօր պետք է ունենալ նոր արդիական Ռ-ԱՀ, որը թողարկի մրցունակ ռազմական տեխնիկա՝ հիմնված նոր ֆիզիկական սկզբունքների վրա: Մակայն այն չի կարող ստեղծվել հին կազմակերպական եղանակներով: Դրանք պետք է արմատապես փոխվեն: Նման միջոցներից է հեռանկարային պաշտպանական հետազոտությունների և մշակումների գործակալության ստեղծումը, մի կառույցի, որը նման լինի ԱՄՆ-ի ՀՊՀՄԳ-ին: Գործակալությունը պետք է ունենա հետևյալ հիմնական գործառնությունները. Ռ-ազմաարդյունաբերական հանձնաժողովի, ուժային գերատեսչությունների գիտական կոմիտեների և ակադեմիայի գիտական բաժանմունքների հետ համատեղ մշակել հեռանկարային պաշտպանական հիմնարար ու կիրառական հետազոտությունների գիտական քաղաքականությունը, թեմատիկան ու ծրագրերը, զբաղվել այն գիտական կոլեկտիվների ակտիվ որոնմամբ, որոնք ունեն ՀԿՀ ծրագրերի թեմատիկային վերաբերող հեռանկարային գիտական ձեռքբերումներ, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական բաժանմունքների հետ համատեղ կազմակերպել ձևավորված ծրագրերի շրջանակներում կատարվելիք պաշտպանական ՀԿՀ-ների մրցույթներ և ընդունված հայտերի փորձաքննություն, ընդ որում, մրցակցային միջավայր ստեղծելու համար նպատակահարմար է մեկ մրցույթում հաղթող ճանաչել մի քանի այլընտրանքային խմբեր՝ ղեկավարվելով ոչ թե մասնակցի առաջարկած ցածր գնով, այլ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած գիտական ձեռքբերումներով, ապահովել պաշտպանական ՀԿՀ-ների գիտատեխնիկական արգասիքների ու բյուջետային միջոցների ծախսման արդյունավետությունը և պատասխանատվություն կրել դրա համար:

Ընդհանրապես գիտության և տեխնիկայի դինամիկ զարգացումն ապահովելու համար խիստ անհրաժեշտ է վերականգնել հիմնարար ու որոնողական հետազոտությունների համապետական համակարգը՝ այն հասցնելով որակապես նոր մակարդակի, ինչով ապահովվի դրա համապատասխանությունը ՄՌՏ բնագավառում տեխնիկական առաջընթացի՝ մոտ ապագայում սպասվող իրողություններին ու մարտահրավերներին:

Մեր կարծիքով՝ նոր ֆիզիկական սկզբունքների կիրառման վրա հիմնվող հեռանկարային մշակումների գծով աշխատանքների զարգացումը պահանջում է դրանց կատարման միանգամայն նոր կազմակերպական սխեմաների ստեղծում: Քանի որ պաշտպանության և անվտանգության համար պատասխանատու են մի քանի գերատեսչություններ, գործակալությունը պետք է լինի միջ-

գերատեսչական և ենթարկվի պետության բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությանը՝ Գերագույն գլխավոր հրամանատարին: Գործակալության կազմում պետք է գործի բարձրագույն գիտատեխնիկական խորհուրդ, որում ընդգրկված լինեն հանրապետության առաջատար գիտնականներ: Հենց նրանց կարծիքի վրա հիմնվելով՝ Գերագույն գլխավոր հրամանատարը կկարողանա գործնական աջակցություն ցույց տալ ռազմական տեխնիկայի ստեղծման առավել հեռանկարային ուղղություններին, ուղղակիորեն ֆինանսավորել դրանք՝ շրջանցելով որոշումների ընդունման ներկայիս բյուրոկրատացված սխեման: Գործակալության որոնողական աշխատանքների համար հատկացվող գումարները բյուջեում պետք է նախատեսվեն առանձին տողով:

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ գիտական ճեղքումները գրեթե միշտ տեղի են ունենում անսպասելի: Ռիստի ոչ ոք կանխավ չի կարող ասել, թե որտեղ պետք է դրանք ակնկալել: Միայն լայն ճակատով շարժումը հնարավորություն կտա ստեղծելու ժամանակակից մարտահրավերներին համապատասխանող նոր ռազմական տեխնիկա:

Ցավոք, հանրապետությունում գիտելիքի վրա հիմնվող տնտեսությանն անցումը ավելի է դժվարացնում այն հանգամանքը, որ դեռ մշակված չէ երկրի գիտական քաղաքականությունը, չկա պետության զարգացման ռազմավարություն, Անվտանգության խորհուրդը չի վերլուծել որոշ իրավիճակային գործողությունների այն հեռավոր բացասական հետևանքները, որոնք կարող են ի հայտ գալ միայն շատ տարիներ անց, բայց որոնք իրենց ի հայտ գալու պահին արդեն անհնար կլինի վերացնել:

Խոսքը հիմնարար գիտության նկատմամբ եղած վերաբերմունքի մասին է: Վերջերս այդ մասին սկսել են շատ խոսել (բայց ոչ գործել): Մենք ուշադրություն ենք հրավիրում այն առավելագույն չափով սեղմ ժամկետների վրա, որոնք ունենք իրավիճակը շտկելու համար: Հարցը գիտության բյուջեի կամ Գիտությունների ազգային ակադեմիայի կարգավիճակի մասին չէ (ինչպես հաճախ ներկայացվում է): Հիմնարար գիտությունը դեռ չի կորցրել իր ուժը, բայց գնում է դեպի իր վախճանը:

Ժամանակն է թոթափելու այն վտանգավոր զաղափարի կապանքները, թե հնարավոր է ստեղծել ուժեղ պետություն առանց հզոր հիմնարար գիտության վերածննդի: Տվյալ իրավիճակը հիշեցնում է «Տիտանիկի» նավարկությունը, երբ իշխում էր այն առասպելը, թե նա իբր անխորտակելի է, և վտանգը նկատվեց չափազանց ուշ: Մենք արդեն չենք կարող խուսափել կորուստներից, բայց դեռ կարելի է պահպանել «լողունակությունը»:

Ներկայումս շատերը չեն հասկանում հիմնարար գիտության կարևոր դերը, անգամ իշխում է այն կարծիքը, և դա առավել վտանգավոր է, թե նա մեզ ընդհանրապես պետք չէ: Եթե նորամուծական գործընթացը չսնվի թարմ հիմնարար զաղափարներով, ապա արդեն 5-15 տարի հետո զաղափարների սով կզգացվի: Անիրատեսական է այն հույսը, որ տեխնոլոգիական զաղափարները կարելի է քաղել ինտերնետից կամ համաշխարհային գիտական գրականությունից: Քանի դեռ մենք չունենք համաշխարհային մակարդակի բնական գիտություններ,

ապա չենք կարող ունենալ նաև նոր տեխնոլոգիաների սաղմեր: Հիմնարար գիտությունը չլինելու պարագայում երկիրը դատապարտված կլինի միջազգային հարաբերությունների իրավիճակից իր տնտեսության ու բանակի տեխնիկական զինվածության խոր կախվածության: Եվ դա կտևի այնքան ժամանակ, քանի դեռ հիմնարար գիտության համակարգը վերականգնված չէ:

Հիմնարար գիտության փրկումը պետք է սկսել հենց այժմ. 4-5 տարի հետո արդեն ուշ կլինի: Գիտությունների դոկտորների միջին տարիքը հասել է 61-ի: Նրանց մեծ մասը չունի փոխարինող, և անհրաժեշտ է մոտ 10 տարի, որպեսզի ընտրվի և հետնորդներին փոխանցվի գիտության անընդարելի «նոու-հաուս»: Եթե սկսենք անհապաղ, ապա սերունդների փոխարինումը տեղի կունենա այն ժամանակ, երբ ղեկավարների միջին տարիքը կհասնի 71-ի: Եթե 5 տարի էլ հապաղենք, ապա՝ 76-ի: Իրենց աշխատունակությունը պահպանած անձանց մասնաբաժինը տարիքների այդ միջակայքում արագորեն նվազում է: Դեռևս գոյություն ունեցող դպրոցների մի զգալի մասը պահպանելու համար պետք է առաջիկա 1-3 տարիներին ձեռնարկել արտակարգ միջոցներ:

Որքան շուտ սկսվի և ինտենսիվ լինի հիմնարար գիտությանը ցուցաբերվող օժանդակությունը, այնքան նրա ավելի մեծ մասը կհաջողվի փրկել, ուստի այնքան ավելի հզոր կլինի տնտեսությունը, ավելի շուտ մրցունակ կդառնա արդյունաբերությունը, ուժեղ և անկախ՝ ռազմաարդյունաբերական համալիրը, ավելի լավ՝ առողջապահությունը և կենսապայմանները, և ավելի չնչին՝ սոցիալական, ժողովրդագրական և այլ բնույթի հասարակական պրոբլեմները: Կայուն կլինի երկրի մեծ հեղինակությունը:

Անհրաժեշտ են բոլոր հիմնարար գիտությունները: Պետք է փրկել հետազոտությունների բոլոր ուղղությունները: Գիտության և տեխնիկայի պատմությունը վկայում է, որ հիմնարար գիտության զարգացման տրամաբանությունն ինքն է որոշում առավել հեռանկարային ուղղությունները, և դրանցից ժամանակի ընթացքում անպատճառ ծագում են տեխնոլոգիական հավելվածներ: Ավելին. վատահորեն կարելի է պնդել, որ յուրաքանչյուր գիտություն կիրառական է, միայն թե դա ժամանակի խնդիր է:

Միջազգային փորձի և ՀՀ-ում տիրող իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է հիմնարար գիտության կազմակերպական ու տնտեսական ապահովման, կառավարման, կադրերի պատրաստման, միջազգային գործունեության ու գործիքային բազայի արդիականացման ոլորտներում ձեռնարկել հետևյալ միջոցները.

1. *գիտակցել պահի լրջությունը*. մոտակա 2-4 տարիները կվճռեն ՀՀ-ում հիմնարար գիտության ճակատագիրը, ուստի պետք է անհապաղ ձեռնարկվեն հետևյալ կազմակերպական միջոցառումները՝

- ա) հիմնարար գիտության ճգնաժամի լուծման ճանապարհների կառուցողական քննարկում և 2 տարուց ոչ ուշ նրա հաղթահարման «Գիտություն – Կրթություն – Լուսավորություն» ամբողջ համալիրն ընդգրկող ծրագրի իրագործում,
- բ) Ազգային անվտանգության ռազմավարության լրացում տնտեսական և

ռազմական անվտանգության ապահովման ռազմավարական հեռանկարների համար հիմնարար գիտության առանցքային դերի վերաբերյալ հողվածով,

2. *Կրկրեսական ապահովման ոլորտում մշակել այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն տա ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալի 1-1,5 %-ն ուղղել նորամուծությունների և ԳՀՓԿԱ-ների կատարման, այդ թվում՝ հիմնարար գիտության, ֆինանսավորմանը,*

3. *սկսել հիմնարար գիտության, կրթության ու լուսավորության կառավարման համակարգերի վերակառուցում՝ առաջնորդվելով ինքնակազմակերպման, մրցողականության, աշխատանքի հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով, այն է՝ մոտակա տարիներին ստեղծել և անընդհատ ավելացնել գիտական հիմնադրամների ու փոքր նորամուծական նախագծերին աջակցման հիմնադրամների բյուջեն՝ մեծացնելով դրանց թիվն ու լուծվող խնդիրների շրջանը և նպատակային պետծրագրերը, ստեղծել արդյունավետ կերպով գործող ծրագրերի և հիմնադրամների խորհուրդներ՝ դրանք պաշտպանելով Կառավարության ավելորդ միջամտությունից, աշխատանքներում լայնորեն ներգրավել մասնագիտական ընկերակցություններին,*

4. *գիտության համար կադրերի պատրաստման գծով՝*

- ա) շտապ ուժեղացնել գիտատեխնիկական գիտելիքների քարոզման ու ժողովրդականացման, վաղ մանկությունից անձի մտավոր զարգացման գծով աշխատանքը՝ բացասական ժողովրդագրական միտումները համակշռելով յուրաքանչյուր երեխայի մտածողության ինքնուրույնության, լայնության, ստեղծագործական բնույթի և տրամաբանականության զարգացմամբ,
- բ) ամրապնդել ուսուցչական կազմը և արտադպրոցական կրթության համակարգը (նախադպրոցական պատրաստում, խմբակներ, օլիմպիադաներ և այլն),
- գ) ընդունել գիտալուսավորչական կենտրոնների ցանցի (ներառյալ՝ երիտասարդության գիտատեխնիկական ստեղծագործության տները) զարգացման ծրագիր, մեծացնել բարձրորակ ու մատչելի գիտալուսավորչական և ուսումնական հրատարակությունների, դիտողական ձեռնարկների (ներառյալ՝ էլեկտրոնային), ռադիո- ու հեռուստատեսային հաղորդումների և ինտերնետում տեղադրվող նյութերի թողարկումը,
- դ) պահպանել և ամրապնդել կրթության հիմնարարությունը, սովորողներին (և բնակչությանը) բացատրել հիմնարար գիտության դերը ժամանակակից աշխարհում,

5. *միջազգային գործերում՝*

- ա) ընդհանրացնել կրթության և գիտության ոլորտում միջազգային կոոպերացիան ամրապնդելու մասին դրույթները, ընդհանր աշխարհային կոոպերացիան զարգացնել ընդհուպ մինչև բոլոր շահագրգիռ երկրների մասշտաբով համատեղ հաստատությունների, գիտական, կրթական, մշակութային

ծրագրերի ստեղծմամբ միասնական գիտակրթական ու մշակութային տարածության ձևավորումը,

- բ) գործադրել ջանքեր՝ ուղղված եվրոպական շրջանակային ծրագրերի նախագծերում հայ գիտնականների մասնակցության ընդլայնմանը,
- գ) պարզեցնել գիտության, կրթության, լուսավորության գործիչների համատեղ աշխատանքի ու գործնական այցերի ժամանակ թույլտվության ստացման, գրանցումային, մաքսային ռեժիմները,

6. *գիտության գործիքային բազայի գծով՝*

- ա) մեծացնել եզակի գիտական վահանակների ու սարքերի պահպանման ֆինանսավորումը,
- բ) 3-4 անգամ մեծացնել «Գիտության գործիքային բազա» ծրագրին հատկացվող միջոցների ծավալը,
- գ) գիտությանը պարբերաբար ապահովել նոր սերնդի եզակի գործիքներով:

Այսօր մեր նպատակն է պաշտպանական գիտության հիմքերի պահպանումը, հիմնարար ու կիրառական հետազոտությունների զարգացումը, առանց ինչի անհնար են ՌԱՀ-ի հետագա վերականգնումն ու զարգացումը, ինչպես նաև գիտության զարգացումն ընդհանրապես: ՌԻստի և այդ հիմքում գլխավոր «կրիչ» բլոկներից մեկը պետք է դառնա հեռանկարային պաշտպանական հետազոտությունների և մշակումների գործակալությունը, որի ստեղծումը հնարավորություն կտա սեղմ ժամկետներում կրճատելու ոչ միայն սպառազինության և ռազմական տեխնիկայի ոլորտում, այլև ընդհանուր առմամբ տեխնոլոգիական զարգացման մեջ առաջատար արտասահմանյան երկրների հետ առաջացած գիտատեխնիկական ճեղքվածքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Մ. Քրսանջյան, Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության տրամաշափի մեջ (գեկուցում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության և կրթության հանձնաժողովի լսումներում): «ՀԲ», 2008, հմ. 4:
2. В. Захаров. Наука в России и современном мире. «Континент», 2010, № 143.
3. «Нобелевский лауреат академик Жорес Алферов о XXI веке» (<http://www.nasledie.ru/politvnt/19-20>).
4. В. Обама. Выступление на ежегодном собрании Национальной академии США (<http://www.rpm-consalt.ru>).
5. Doc Dougherty, David Herrelko, Steven Koonin. How Does Basic Science Defend America? (http://www.pbs.org/kcet/closetototruth/explore/show_10.html).

ВПК И ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУКА

Г. Г. МАТЕВОСЯН, член-корреспондент НАН РА, академик-секретарь НАН РА

РЕЗЮМЕ

Военная промышленность является важным звеном в обеспечении военной безопасности государства, вследствие чего ее развитие рассматривается как один из главных приоритетов государства. В то же время анализ

мировой практики показывает, что в разработке принципиально новых видов вооружения решающая роль принадлежит фундаментальной науке, которую руководители ведущих стран считают гарантией обеспечения не только военного, но и технологического превосходства своего государства.

Развитие ВПК должно быть нацелено на выпуск конкурентоспособной военной техники с использованием новых физических принципов. Однако создание такого ВПК в старых организационных формах, оставшихся в наследие Армении от советской эпохи, практически не возможно. В этом аспекте предлагается создание специализированного агенства, аналогичного Агенству по перспективным оборонным исследованиям и разработкам (DARPA) США, основными функциями которого должны стать: формирование научной политики и соответствующих научных коллективов, организация конкурсов по оборонным фундаментальным и прикладным исследованиям и т. д.

С учетом того, что некогда соответствовавшая мировым стандартам фундаментальная наука в РА в настоящее время находится в критическом состоянии, предлагается:

- осознать серьезность момента: в ближайшие 2-4 года определится судьба фундаментальной науки, начать конструктивное обсуждение путей преодоления ее кризиса и в ближайшие два года развернуть соответствующую программу, охватывающую весь комплекс «наука–образование–просвещение»;

- дополнить Стратегию национальной безопасности РА статьей о ключевой роли фундаментальной науки для стратегических перспектив экономической и военной безопасности;

- разработать механизм, позволяющий направлять 1-1,5 % от объема реализации товаров (работ, услуг) на финансирование инноваций и НИОКР, в том числе – фундаментальной науки;

- начать реорганизацию управления фундаментальной наукой, образованием и просвещением на основе принципов самоорганизации, состязательности, гласности и прозрачности работы, создать и постоянно увеличивать бюджет научных фондов и фондов поддержки малых инновационных проектов, расширяя их число и круг решаемых ими задач и целевые госпрограммы, создать реально действующие Советы фондов и программ, защитить их от излишнего вмешательства Правительства, широко привлекать к работе профессиональные общества;

- срочно усилить работу по пропаганде и популяризации научных знаний, интеллектуальному развитию личности с раннего детства, компенсируя демографический минимум развитием самостоятельности, широты, логичности и творческого характера мышления каждого ребенка;

- укрепить учительский корпус и систему внешкольного образования (дошкольного, а также кружков, олимпиад и т. д.);

- принять программу развития сети научно-просветительских центров, увеличить выпуск добротных и доступных научно-просветительских и учебных изданий, наглядных пособий (включая электронные), радио- и телепередач, материалов в Интернете;
- сберечь и закрепить фундаментальность образования, объяснять учащимся и населению роль фундаментальных наук в современном мире;
- обобщить тезисы об укреплении международной кооперации в науке и образовании до формирования единого научно-образовательного и культурного пространства в масштабах всех заинтересованных стран на базе создания совместных учреждений, научных, образовательных, культурных программ;
- предпринять усилия к расширению участия армянских ученых в проектах европейских рамочных программ, упростить при деловых визитах и совместных работах деятелей науки, образования и просвещения визовый, регистрационный, таможенный режимы;
- увеличить финансирование на поддержание уникальных научных стендов и установок, в 3-4 раза увеличить объем средств, выделяемых на программу «приборная база науки», постоянно обеспечивать ее новым поколением уникальных приборов.

THE MILITARY INDUSTRY COMPLEX AND FUNDAMENTAL SCIENCE

*H. H. MATEVOSYAN, Corresponding Member of the NAS, RA,
Academician-Secretary of the NAS, RA*

SUMMARY

The military industry is a vital link in ensuring the military security of the state, consequently its development is considered as a top priority of the state. At the same time, the analysis of international practice shows that in the development of essentially new types of arms the decisive role belongs to the fundamental science which the heads of leading countries consider a guarantee of ensuring not only military but also the technological superiority of their state.

The development of the MIC must be designed to produce competitive military equipment using new physical principles. However, the establishment of such MIC in the old organizational forms having remained in the legacy of Armenia from the Soviet era is nearly impossible. In this respect, the establishment of a specialized agency similar to the Defense Advanced Research Projects Agency (DARPA), US, is proposed, the main function of which should be: formulation of academic policy and corresponding academic teams, organization of competitions in fundamental and applied defense studies, etc.

Given the fact that the fundamental science once complying with the world standards in the RA is currently in critical condition, it is proposed to:

- understand the seriousness of the moment: in the next 2-4 years the destiny of

the fundamental science will be determined, begin a constructive discussion of the ways to overcome its crisis, and in the coming two years launch the relevant program covering the full range of «science – education – enlightenment»;

- enhance the RA National Security Strategy with an article about the key role of the fundamental science for strategic perspectives of economic and defense security;

- develop a mechanism allowing to send 1-1,5 % from the sales volume of goods (work, services) to finance innovation, research and development (R and D), including – the fundamental science;

- begin reorganizing the management of the fundamental research, education and enlightenment based on the principles of self-organization, competitiveness, publicity and transparency of work, create and continually increase the budget of research funds and funds to support small innovative projects expanding their number and range of their tasks and targeted state programs, establish actually operating Councils of funds and programs protecting them from the excessive government intervention, widely attract professional communities to work;

- urgently step up efforts to promote and disseminate academic knowledge, intellectual development of personality from early childhood compensating for the demographic minimum with the development of independent, broad, logical and creative thinking of each child;

- strengthen teachers' corps and out-of-school education system (preschool, as well as hobby groups, contests, etc.);

- adopt a program of developing a network of academic and educational centers, increase the issue of quality and available academic and educational and training publications, visual aids (including digital), radio and television programs, content on the Internet;

- protect and consolidate the fundamental nature of education, explain the role of fundamental sciences in the contemporary world to the students and the public;

- summarize the theses on reinforcing international cooperation in science and education before creating a single academic and educational and cultural environment across all the countries concerned on the basis of joint institutions, academic, educational, and cultural programs;

- make efforts to increase participation of Armenian scientists in projects of European framework programs, streamline the visa, registration, customs regimes for business visits and joint work of men of science, education and enlightenment;

- boost the funding to maintain the unique academic desks and facilities, raise 3-4 times the resources allocated to the «instrument base of science» program, constantly provide it with new generation of unique devices.

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հ. Ի. ԳԵՎՈՐԳՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության ավագ սպա-իրավաբան, Ա Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի առաջարար ծառայող, ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական ներկայացուցչության փնտեսագիտական բաժանմունքի առաջարար մասնագետ



Ցանկացած պետության ռազմաարդյունաբերական համակարգի (Ռ-ԱՀ) կարգավիճակը հիմնականում պայմանավորված է տվյալ պետության քաղաքական ու տնտեսական կշռով, արդյունաբերական տեխնոլոգիաների ոլորտի և գիտակրթական բնագավառի զարգացածության աստիճանով:

Աշխարհի զարգացած պետությունների Ռ-ԱՀ-երի գործունեության ուսումնասիրությունը¹ ցույց է տալիս, որ ոլորտի համակարգված գործունեության կենսապահովման և զարգացման համար պարտադիր պայման է նորմատիվ-իրավական ակտերի առկայությունը, ինչով բացառվում են տվյալ ոլորտում սուբյեկտիվիզմի հնարավոր դրսևորումները: Օրինակ՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում միայն 2009 թ. ընթացքում քննարկվել է ռազմաարդյունաբերությանն առնչվող շուրջ 10 օրինագիծ:

Տնտեսագիտորեն Ռ-ԱՀ-ի զարգացման հիմնական նպատակն է Ռ-ԱՀ-ի արտադրանքի նկատմամբ պահանջարկի բավարարումն ըստ՝

- սպառագիտության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի,

- ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ ստանձնած պարտավորությունների համապատասխան՝ սպառագիտության և ռազմական տեխնիկայի արտահանման ծրագրային մշակումների,

- գորահավաքային պլանի հաշվարկային ցուցանիշների:

2008 թ. Ֆրանսիայում ընդունվել է տնտեսության արդիականացման մասին հատուկ օրենք, որում ընդգրկված են ոչ միայն արդյունաբերությունը, այլև տնտեսության բոլոր ճյուղերը: ԱՄՆ-ում գործում են ոչ միայն ծրագրեր, այլև օրենք-ծրագրեր², որոնց հիման վրա կատարվում է գիտատեխնիկական,

¹ Տես, օրինակ, *В. А. Федорович*. США: федеральная контрактная система: механизм регулирования государственного хозяйствования. М., 2010; *И. Д. Иванов*. Военно-промышленный комплекс Европейского Союза. «Перспективы» (www.perspektivy.info/oykumena/europe/voenno_promyshlennyiy_kompleks.htm); «Arm industry» (en.wikipedia.org/wiki/Arms_industry):

² Տես *Е. Никитенко*. О нормативно-правовом обеспечении развития системы вооружений. «Вооружение. Политика. Конверсия», 1998, № 3–5:

արդյունաբերական և ռազմատեխնիկական ոլորտներում իրականացվող քաղաքականությունների համապետական միջգերատեսչական համադասում³:

Այսօր ՀՀ-ում արդյունաբերության զարգացման շատ հարցեր մեր օրենսդրությամբ չեն կարգավորվում: Հայաստանում չկա արդյունաբերության զարգացման ոլորտում պետական քաղաքականությունը սահմանող հիմքային օրենք, ինչպես նաև իրավական ակտ, որով սահմանվեն արդյունաբերական, այդ թվում՝ ռազմաարդյունաբերական, ոլորտի զարգացման պետական համալիր քաղաքականությունը և դրա իրականացման տնտեսական մեխանիզմները: Այդ պատճառով ՀՀ արդյունաբերական քաղաքականությունը կառուցվում է տնտեսության առանձին հատվածներին աջակցման մասնակի ծրագրերի հիման վրա: Նման հատվածայնությունը խոչընդոտում է տնտեսության համալիր, փոխկապված, կայուն զարգացմանը և արդյունաբերության ոլորտում միասնական պետական քաղաքականության ձևավորման ու իրավական ակտերով ամրագրման անհրաժեշտության ակնհայտ վկայությունն է: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական բազա, որը հնարավորություն ընձեռի ստեղծելու մրցունակ արդյունաբերական համալիր՝ խարսխված նորանուծական մտքի վրա:

ՀՀ ռազմաարդյունաբերական ոլորտում տիրող իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքների հաշվառմամբ կարելի է փաստել, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ունենալ.

1. *ռազմաարդյունաբերության մասին օրենք*, որում պետք է հստակորեն ամրագրված լինեն ոլորտի կառուցվածքը, իրավահարաբերությունների ձևավորման ու կարգավորման հիմնական սկզբունքները, ռազմաարդյունաբերության զարգացման քաղաքականության գերակա ուղղությունները, ինչպես նաև ոլորտի անվտանգ գործառնան վերաբերյալ հայեցակարգային դրույթներ⁴:

2. *նորմատիվային սրանդարտներ՝*

- որակի կառավարման համակարգի արտոնագրման ստանդարտներ,
- բնապահպանական կամ շրջակա միջավայրի կառավարման համակարգի արտոնագրման ստանդարտներ,
- աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգի ստանդարտներ,
- արտադրանքի արտոնագրման ստանդարտներ,
- տեղեկության անվտանգության կառավարման համակարգի ստանդարտներ,

³ Stu E. *Роговский. Успех—это успеть. 23.12.2010* (www.protiv.tv/publ.materially-budu-shhego/darpa/evgenij-rogovskij-uspekhehto-uspet/87-1-0-287); *Օ. Ա. Городов. Понятие промышленной собственности и краткая история развития законодательства зарубежных стран в сфере правовой охраны ее объектов. «Юридическая Россия»* (www.law.edu.ru/doc/document.asp?docID=1181836):

⁴ Ռազմաարդյունաբերության ոլորտի անվտանգ գործունեություն ասելով հասկանում ենք ռազմաարդյունաբերական օբյեկտների և արտադրանքի արտադրության պաշտպանվածությունն արտաքին ուժերի ներգործությունից, ռազմաարդյունաբերական արտադրանքի նկատմամբ պահանջարկի ապահովումը, ինչպես նաև ոլորտի գործունեության ընթացքում աշխատողների տեխնիկական անվտանգությունն ու բնապահպանական անվտանգությունը:

– անձնակազմի արտոնագրման ստանդարտներ, և այլն,

3. *արդյունաբերության զարգացման պետական համալիր ծրագիր*, որում ներառված լինեն ռազմաարդյունաբերության ոլորտը և տնտեսության մյուս ճյուղերի հետ դրա գործակցությունը: Ծրագրում պետք է նախատեսվեն տնտեսական աճման և պետպատվերի աճման տեմպերը, նշվեն սպառազինության ու ռազմական տեխնիկայի արտադրման առաջնային ուղղությունները՝ ՀՀ «Ազգային անվտանգության ռազմավարությունում» ու «Ռազմական դոկտրինում» ամրագրված ռազմական սպառնալիքների և մի շարք այլ գործոնների հաշվառմամբ, ինչպես նաև համապատասխան օրենսդրական բազայի վերանայումը, կատարելագործումն ու զարգացումը:

ՌԱՀ-ի որոշակի առանձնահատկություններ են՝

- ներքին շուկայում պետության՝ որպես միակ պատվիրատուի գործունը,
- միջազգային ռազմատեխնիկական համագործակցության կոշտ պետական կարգավորումը,
- ռազմական տեխնիկայի մշակման և հատկապես զորքերում շահագործման ընդունման երկարատևությունը, որը պայմանավորված է կայուն երկարաժամկետ տեխնոլոգիական կոոպերացիաների՝ արտադրատեխնոլոգիական համալիրների ձևավորմամբ, պատվիրատուի ներկայացուցչության (զինվորական ներկայացուցչության) և կոնստրուկտորատեխնոլոգիական փաստաթղթերի վարման համակարգերի անկատարությամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ-ն դեռ գտնվում է շուկայական տնտեսությանն անցման ժամանակաշրջանում և չունի բավարար օրենսդրություն, ի տարբերություն անգլոսաքսոնական կամ մայրցամաքային եվրոպական պետություններից, որոնց օրենսդրության մեջ հանգամանալից կերպով կարգավորված են տնտեսական հարաբերությունները, այդ թվում՝ տարբեր տեսակի ինտեգրված կառույցների միջև:

Սակայն ՀՀ գործող օրենսդրությունը չի կարգավորում ռազմաարդյունաբերության ոլորտում այդպիսի կառույցների, մասնավորապես՝ տեխնոլոգիական համալիրների (տեխնոլոգիական կոոպերացիաների) ձևավորմանն ու գործունեությանը վերաբերող հարաբերությունները: Մինչդեռ դրանք (այդ թվում՝ մասնավորեցմամբ ստեղծումը) կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ համակարգված և համալիր են:

Այժմ արդյունաբերական (ռազմաարդյունաբերական) միջազգային գործարարական ոլորտում իրականացվում է կլանման ճանապարհով ինտենսիվ ինտեգրում՝ օֆշորային կենտրոններում կուտակված միջոցների, հարկերի նվազարկման սխեմաների օգտագործմամբ, կլանվող օբյեկտների կանխամտածված սնանկացմամբ և այլ ճանապարհով:

ՀՀ ՌԱՀ-ում, որը կենտրոնացած է պետական խնդիրների լուծման վրա, ինտեգրման գործարարական սխեմաները կիրառելի չեն, այդ իսկ պատճառով համապատասխան լուծումների նախապատրաստման և ընդունման համար անհրաժեշտ է հստակ իրավական կարգավորում:

Պետական պաշտպանական պատվերն իր նվազ շահավետության (որոշ

դեպքերում՝ նաև վնասների) պատճառով չի կարող լինել ինտեգրման արդյունավետ պետական կարգավորիչ:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ գործող իրավական ակտերը չեն ապահովում ՌԱՀ-ի կենսագործունեության ամբողջ իրավական դաշտը, իսկ նոր իրավական ակտերի ընդունումը կատարվում է բավական դանդաղ, քանի որ համակարգային մակարդակով չկա համապատասխան նախաձեռնող կառույց:

ՀՀ-ում շուկայական տնտեսությանն անցման ներկա պայմաններում անհրաժեշտ ենք համարում պետության կողմից ՌԱՀ-ի գործունեության պետական կարգավորման ուղղակի և անուղղակի մեթոդների ներդաշնակ կիրառումը⁴, ինչի համար անհրաժեշտ է «ՌԱՀ-ին պետական աջակցության մասին» օրենք, որն իր մեջ պետք է ներառի գործող օրենսդրության բոլոր իրավական մեխանիզմները և միևնույն ժամանակ ներմուծի նորերը⁵:

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագրի միջոցառումների իրականացման օրենսդրական ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, այդ թվում՝

- պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերությունների համար առանձնահատուկ հարկաբյուջետային և վարկային քաղաքականության մեխանիզմների ներդրում, ինչի համար անհրաժեշտ են փոփոխություններ հարկային, մաքսային օրենսդրություններում և պետական վարկային քաղաքականության դրույթներում,

- պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերությունների կողմից սպառազինության ու ռազմական տեխնիկայի գորահավաքային նախապատրաստման և գորահավաքային առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ օրենսդրական բազայի կատարելագործում,

- ՌԱՀ-ի գործունեությունը համակարգող միասնական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի բազայի ստեղծում,

- պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերություններին լիցենզիայի տրման կարգի լրամշակում և համապատասխան թույլտվություն տալու նպատակով ««Լիցենզիայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում,

- պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերությունների կառավարման արդյունավետությունը մեծացնելու նպատակով պետության կողմից վերահսկողության ապահովման մեխանիզմների մշակում (օրինակ՝ համապատասխան փոփոխություններ աուդիտի, հաշվապահական հաշվառման և այլ ֆինանսական գործողությունների մասին օրենքներում, ինչպես նաև կառավարության որոշումներում, մասնավորապես՝ պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների վերստուգողների վերաբերյալ),

⁴ Տես Ս. Ս. Ավերիխայն, Ռ. Ա. Թովմասայն, Տնտեսագիտության տեսություն: ՌԽումնական ձեռնարկ: Ե., 2010, էջ 284:

⁵ Տես *А. Николаев*. Многие наши беды от несовершенства законодательства. «Российская Федерация сегодня», 2002, № 15:

- Ռ-ԱՀ-ի արտադրանքի թողարկման և գնումների՝ ռազմական ու ֆինանսական տեսանկյունից օպտիմալ հաշվեկշռի հաստատում՝ արտաքին շուկա դուրս գալու անհրաժեշտության և սպառազինության ու ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի դրույթների հաշվառմամբ, որոշ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարմամբ,

- սպառազինության և ռազմական տեխնիկայի ստեղծման, արտադրության, արդիականացման, նորոգման և արտահանման ոլորտում Ռ-ԱՀ-ի կազմակերպությունների իրավասությունների ընդլայնում կառավարության որոշումներով:

Ամփոփելով հոդվածը՝ նշենք, որ ներկայումս ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում նախատեսված է ՀՀ Ռ-ԱՀ-ի զարգացման հայեցակարգի և ծրագրի ընդունում: Վերջինիս երաշխավորված իրականացման համար, բացի անհրաժեշտ ֆինանսական ու կադրային միջոցներից, պետք է ունենալ լավ մշակված ու համակարգված ամբողջական օրենսդրական բազա:

О ЗАКОНОДАТЕЛЬНЫХ ОСНОВАХ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

А. И. ГЕВОРГЯН, капитан, старший офицер-юрист военно-промышленного управления МО РА, А. Р. ТОВМАСЯН, ведущий служащий 1-ого класса Специальной гражданской службы, ведущий специалист экономического отделения Центрального военного представительства МО РА

РЕЗЮМЕ

Одним из обязательных условий для системного развития и деятельности ВПС является наличие комплекса нормативно-правовых регулятивов и утвержденных ими программных документов.

С учетом результатов анализа существующей в военно-промышленной сфере РА ситуации и ее определенной специфики (фактор государства в качестве единственного заказчика на внутреннем рынке, жесткое государственное регулирование международного военно-технического сотрудничества, длительность процессов разработки военной техники и, в особенности, ее принятия в эксплуатацию в войсках) можно констатировать, что необходимо иметь Закон РА «О военной промышленности», закрепляющий концептуальные основы правового регулирования деятельности и развития данной сферы, нормативные стандарты и комплексную государственную программу развития промышленности, охватывающую ее военный сектор, а также ее взаимодействие с другими отраслями экономики.

В переходный к рыночной экономике период законодательство РА в недостаточной мере регулирует экономические отношения и между различными интегрированными структурами, в частности – касающиеся формирования и деятельности технологических комплексов (технологических корпораций) в военно-промышленной сфере, в то время как они (в том

числе – процесс создания в результате приватизации) могут быть эффективными только при условии их системности и комплексности.

Международные бизнес-схемы интеграции (интенсивная интеграция путем поглощения с использованием схем аккумуляции средств в офшорных центрах, минимизации налогов, преднамеренного доведения поглощаемых объектов до банкротства и т. д.) в СВП РА не могут быть применены. В то же время государственный оборонный заказ (ГОЗ) вследствие своей низкой рентабельности (а в некоторых случаях и убыточности) не может служить эффективным государственным регулятором.

В подобных условиях возникает необходимость гармоничного применения прямых и косвенных методов государственного регулирования СВП, для чего необходимо иметь содержащий все действующие и инновационные механизмы Закон РА «О государственной поддержке СВП», а также структуру, координирующую совершенствование законодательной базы в данной сфере.

С точки зрения законодательного обеспечения выполнения государственной программы по развитию СВП РА необходимо решить ряд проблемных вопросов, как то:

- внедрение механизмов специальной налогово-бюджетной и кредитной политики для компаний, выполняющих ГОЗ, усовершенствование процедуры выдачи им лицензий;
- усовершенствование законодательной базы, необходимой для мобилизационной подготовки вооружения и военной техники и осуществления мобилизационных задач компаниями, выполняющими ГОЗ, а также разработка механизмов по обеспечению государственного контроля с нацелом на повышение эффективности их управления;
- создание базы единой нормативно-технической документации по координации деятельности СВП;
- обеспечение оптимального баланса производства и импорта продукции СВП с военной и финансовой точек зрения;
- расширение компетенций организаций СВП в сфере создания, производства, модернизации, ремонта и экспорта ВВТ.

ON THE LEGISLATIVE BASIS FOR THE DEVELOPMENT OF MILITARY INDUSTRY OF THE RA

H. I. GEVORGYAN, Captain, Senior Officer-Jurist of the Military-Industry Department, MOD, RA, A. R. TOVMASYAN, 1st Class Leading Officer of the Special Civil Service, Senior Specialist in the Economic Section of the Central Military Mission, MOD, RA

SUMMARY

One of the prerequisites for systemic development and operation of the MIS is the complex of standard legal norms and policy documents approved by them.

Taking into account the analysis results of the situation existing in

military-industry sector of the RA and of its definite specifics (the factor of the state as the only customer in the domestic market, strict government regulation of the international military-technical cooperation, duration of processes of developing military technology and, in particular, its start-up in the armed forces) we can say that there must be the RA Law «On the Military industry» consolidating the conceptual foundations of the legal regulation of activity and development of this sector, regulatory standards and the comprehensive state program for the development of the industry covering its military sector, as well as its interaction with other economic branches.

In the transition-to-the-market-economy period the RA legislation insufficiently regulates the economic relations between various integrated structures, in particular-regarding the establishment and activity of technological complexes (technology corporations) in the military-industry sector, while they (including the establishment process a result of privatization) can be effective only if they are systematic and all-inclusive.

International integration business-schemes (intensive integration by absorption with the use of funds accumulation schemes in offshore centers, tax minimization, premeditated leading of the absorbed objects to bankruptcy, etc.) can not be applied in the MIS of the RA. At the same time, the state defense order (SDO) due to its low profitability (and in some cases also unprofitability) can not serve as an efficient state regulator.

Under such circumstances it is necessary to the harmoniously use direct and indirect methods of state regulation of the MIS for which we need to have the RA Law containing all active and innovative mechanisms «On State Support to the MIS», as well as a structure coordinating the improvement of the legislative basis in the given field.

In terms of legislative support to the implementation of the state program on the development of the MIS, RA, it is necessary to solve a number of issues such as:

- Introduction of tools of special tax and budgetary and credit policy for companies performing SDO, improvement of their license issuing procedure;
- Enhancement of the legislative framework necessary for preparedness activity of arms and military equipment and for accomplishment of mobilization tasks by companies performing SDO, as well as development of mechanisms to ensure state control with the aim to boost the efficiency of their management;
- Creation of a database of unified normative-technical documentation to coordinate the MIS activity;
- Provision of an optimal balance of production and import of the MIS output from the military and financial point of view;
- Expansion of the MIS organizations' competencies in the sphere of creation, production, modernization, repair and export of the arms and military equipment.

ՀԱՅ ԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԸ



Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված զորահանդես.
տրիբունայում (ձախից աջ)՝

ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյան, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան,
ՀՀ Նախագահ Ս. Սարգսյան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ,
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա, ԼՂՀ Նախագահ Բ. Սահակյան

Երևան, 2011 թ. սեպտեմբերի 21



ՍՈՒ-25 գրոհային ինքնաթիռներ



«Կռունկ» անօդաչու թռչող ապարատ



9Կ79 («Տոչկա») մարտավարական հրթիռային համալիր



ՎՄ-80 («Թայֆուն») համազարկային կրակի ռեակտիվ համակարգ



U-300 զենիթահրթիռային համալիր



«Օսա-ԱԿ» զենիթահրթիռային համալիր

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿԱՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

*Մ. Վ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Կրեմնիկական գիտությունների դոկտոր,
«Երևանի կապի միջոցների գիրահեղափոխական ինստիտուտ» ՓԲԸ-ի
փնտրեն, ԵրՃՇՊՀ-ի ինֆորմատիկա, հաշվողական փեխնիկա
և կառավարման համակարգեր ամբիոնի վարիչ,
Ֆ. Պ. ՍՈՒՆՄՈՆՅԱՆ, պահեստագործի գնդապետ**



Զինված ուժերում կապի կազմակերպումը արտացոլում է նրա աստիճանակարգային կառուցվածքը: Այն ունի իր առանձնահատկությունները, որոնցով էլ հիմնականում պայմանավորված է համապատասխան հատուկ միջոցների օգտագործումը: Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում տեղեկատվահեռահաղորդակցության կազմակերպմանը: Այդ պահանջներն են. արդիականությունը, հավաստիությունը, հուսալիությունը, գաղտնիությունը (տեղեկատվության անվտանգության ապահովում), մոբիլությունը (կառուցվածքի ճկուն փոփոխություն), արագությունը (համակարգի արագ բացազատում), արագագործությունը (մեծ ծավալներով տեղեկույթի արագ հաղորդում):

Տեղեկատվահեռահաղորդակցության հիմքը կապն է, որի կազմակերպման կառուցվածքը փոփոխվում է ըստ իրավիճակի: Տարբերում ենք երկու իրավիճակ՝ խաղաղ և պատերազմական պայմաններ: Եթե խաղաղ պայմաններում գործ ունենք ֆիքսված կապուղիների և ընթացիկ տեղեկատվական խնդիրների լուծման հետ, ապա պատերազմական իրավիճակում կապի հանգույցների տեղերը փոխվում են, լուծվելիք խնդիրների շարքում ավելանում են հետախուզական և իրավիճակը պարզաբանող մեծաքանակ տվյալների ստացման ու վերլուծման և որոշումների ընդունմանը նպաստող խնդիրները: Իհարկե, որոշ հետախուզական խնդիրներ լուծվում են նաև խաղաղ պայմաններում:

Այսպիսով՝ դիտարկենք կապի կազմակերպումը տարբեր իրավիճակներում:

Տեղեկատվահաղորդակցության կազմակերպումը խաղաղ ժամանակ

Խաղաղ պայմաններում տեղեկատվահեռահաղորդակցությունը կազմակերպելու դեպքում գործերի կառավարման կետերի, հետևաբար՝ նաև կապի հանգույցների տեղակայման վայրերը հիմնականում լինում են նախապես որոշված:

* Սույն հոդվածը տպագրման ներկայացնելու պահին Ֆ. Պ. Սոլոմոնյանը զբաղեցրել է ՀՀ ՋՈՒ-ի Կապի և ԱԿՀ վարչության պետի տեղակալի պաշտոնը:

Այստեղ անհրաժեշտ է ունենալ արագագործ կապի՝ տվյալների հաղորդման ցանցեր, որոնք կապահովեն ցանցին նոր օգտագործողների արագ միացում, արտաքին հարձակումներից ցանցերի պաշտպանվածություն:

Խաղաղ ժամանակ հաճախ որպես լրացուցիչ օգտագործվում են քաղաքացիական ֆիքսված և շարժական (մոբիլ) կապի համակարգերն ու միջոցները: Այս առումով առաջարկվում է ունենալ ճկուն համակցման միջոցներ, որոնք հնարավորություն կտան համատեղելու հատուկ և քաղաքացիական կառույցների ու տեխնիկայի օգտագործումը:

Տարբեր պատկանելության ցանցերի օգտագործումը առաջադրում է նոր խնդիրներ՝ կապված տեղեկատվության անվտանգության ապահովման հետ:

Ջուզահեռաքար գործում են մի քանի տիպի ցանցեր, ընդամենն ամեն մեկը ծառայում է ուրույն նպատակի. մեկը՝ ձայնային կապի համար, մյուսը՝ տվյալների հաղորդման, երրորդը՝ ահազանգման: Որպես կանոն, ամեն մի զորատեսակ ունենում է իր կապի համակարգը, որը այս կամ այն ձևով մտնում է բանակի աստիճանակարգության մեջ: Տեսողական, ձայնային և թվային տեղեկույթի ինտեգրումը այսօրվա հրամայականն է, որը պահանջում է ներդրել արագագործ թվային կապի տեխնոլոգիաներ և ինտեգրված կոմուտացիոն սարքավորանք: Դա հնարավորություն կտա միմյանց միացնելու տարբեր սկզբունքով աշխատող համակարգեր, անհրաժեշտության դեպքում թվայնացնել, դեկավարել ռադիոկապը, գաղտնագրել, արխիվացնել տվյալների փոխանցումը, իսկ թվային հաղորդման մեջ ինտեգրել տեսաձայնաթվային տվյալներ, ինչպես նաև ՋՄՄ (GSM) կապ¹: Վերջինս պատկերված է նկ. 1-ում:

Իր հատուկ տեղն ու նշանակությունը ունի գաղտնագրման և թաքնագրման տեխնիկայի օգտագործումը: Ընդամենն ոչ ավանդական մեխանիզմների և ծրագրային ապահովման օգտագործումը հնարավորություն է տալիս մեծացնելու դրանց արդյունավետությունը:

Նույնիսկ խաղաղ պայմաններում կապը պետք է հասցվի ամեն մի զինվորի, որին այդ նպատակով տրամադրվում է հատուկ թվային, «անվանական» ցանցային ռադիոհեռախոս: Նոր ցանցային տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս դրան հասնելու բավական պարզ ձևերով: Այս եղանակով ոչ միայն կբարձրանա զորամասերի կառավարելիության մակարդակը, այլև հնարավորություն կստեղծվի վերահսկելու ամեն մի զինվորի գտնվելու վայրը և ըստ այդմ ապահովելու ծառայության անվտանգությունը:

Նշված հնարավորությունը կօգտագործվի նաև պատերազմական վիճակում, որը էլ ավելի կարևորված կլինի:


Տեղեկատվահեռահաղորդակցության կազմակերպումը պատերազմական պայմաններում

Ինչպես արդեն վերը նշվել էր՝ պատերազմական պայմանների առանձնահատկությունը իրավիճակի արագ փոփոխումն է, որը հանգեցնում է կառավարման ամբողջ համակարգի կառուցվածքի արագ դինամիկ փոփոխման,


¹ Տես «Yerevan Telecommunication Research Institute» կայքը (www.yetri.am):

իսկ դա իր հերթին հանգեցնում է մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտության: Դրանցից են՝

- տվյալների հաղորդման ապահովում կառուցվածքի դինամիկ փոփոխման ընթացքում,
- կապի հանգույցների օպերատիվ բացազատում և հավաքում՝ դինամիկ փոփոխությունների համար անհրաժեշտ ժամանակի կրճատմամբ,
- ինտեգրված տվյալների հաղորդման համար անհրաժեշտ արագության ապահովում,
- տեղեկատվության անվտանգության կազմակերպման համար տարբեր մեթոդների կիրառման ապահովում,
- տարբեր տիպի և տարբեր սկզբունքով աշխատող ցանցերի համակցում:



ա)



բ)


Նկ. 1. Թվային կապի կազմակերպում

ա) Ինտեգրող կոմուտատորի ֆունկցիոնալ կառուցվածքը. ԻԿՀ՝ ինտեգրող կոմուտացիոն համակարգ (ISC), ՀՕՀՑ՝ հասարակական օգտագործման հեռախոսային ցանց (TFOP), ՀՀԿ՝ համակողմանի հաջորդական կապուղի (USB), ՀՀՑ՝ համընդհանուր հաշվողական ցանց (WAN), ԳԲՀ՝ գերբարձրհաճախականային (VHF), ԳԿԱ՝ գերկարճալիք (UHF)

բ) ԱՀԿ-100-ի արտաքին տեսքը և օգտագործման տարբերակները. ՉՍՄ ԱԿ՝ ՉՍՄ անցման կարգավորիչ, ԱՀ՝ անհատական համակարգիչ, ՏԿ՝ տեղային կառավարում, ՀԿ՝ հեռակառավարում, ԹՀ՝ թվային հեռախոս, ՍՄ՝ տերմինալ

Թվային ցանցերում դրանց կառուցվածքի դինամիկ փոփոխությունը հանգեցնում է տվյալների հոսքերի երթուղավորման համապատասխան կազմակերպման անհրաժեշտության:

Նման ցանցերի կառուցվածքը պետք է հնարավորություն տա անկախ ստեղծված իրավիճակից ապահովելու տեղեկույթի տեղափոխումը դեպի պահանջվող կետը²: Զինված ուժերում հիմնականում կիրառվում է նկ. 2ա-ում բերված կառուցվածքը:



Նկ. 2. Ցանցային ռադիոկապի կազմակերպում

- ա) Ցանցի աստղաձև կառուցվածքը. ՏՀՑ՝ Տեղային հաշվողական ցանցեր (LAN), ՌՄ՝ ռադիոմոդեմ, ԿԿ՝ կառավարման կետ
- բ) «Էթերնետ» ճարտարապետությամբ ռադիոցանցի կառուցվածքը. ԲԿ՝ բաժանորդային կայան


Կարող է օգտագործվել նաև, այսպես կոչված, արագագործ «Էթերնետ» (Ethernet) ռադիոցանցը (նկ. 2բ), որի ճիշտ կազմակերպման դեպքում կարելի է հասնել բավականին բարձր ցուցանիշների: Թերությունն այն է, որ մեծ արագություններ ստանալու համար պետք է օգտագործվեն գերկարճալիք (ԳԿԱ) և գերբարձր հաճախականությունների (ԳԲՀ) տիրույթները, ինչի համար պահանջվում է ուղիղ տեսանելիություն, որը լեռնային պայմաններում դժվար է ապահովել:

Ամենատարածված կառուցվածքը, որը հնարավորություն է տալիս ապահովելու մեծ հուսալիություն, երկօղակային կառուցվածքով ցանցն է, որտեղ օղա-

² Steu M. V. Markosyan. Increasing the defense of C3 systems in based on adaptive structure of range wireless LAN. CSIT Proceedings of the conference «Computer Science and Information Technologies». Yerevan, 2005, PP. 572–574:

կում գտնվող տեղեկությանին կենտրոնները իրենց անմիջական երկու հարևանների հետ կապված են տվյալների հաղորդման՝ երկու տարբեր ուղղությամբ ունեցող կապուղիներով (նկ. 3ա)³:

Ընդհանուր կառուցվածքը բերված է նկ. 3բ-ում: Այն հնարավորություն է տալիս ապահովելու ցանցի անխափան աշխատանքը և՛ կապուղիների որոշակի հատվածի, և՛ հանգույցի շարքից դուրս գալու դեպքում (նկ. 3):



ա)

բ)

Նկ. 3. Ցանցային կապի կազմակերպում

ա) Երկօղականի ցանցի հուսալիության ապահովման ձևը

բ) Օղակաձև ռադիոցանցի կառուցվածքը


Բայց մնան ցանցերի ստեղծումը բավական ծախսատար է, և այդ առումով նպատակահարմար է օգտվել տարբեր տիպերի գործող քաղաքացիական ցանցերի ծառայություններից:

Մարտական գործողությունների ժամանակ կա հավանականություն, որ հակառակորդը կփորձի վերացնել բոլոր հանգույցային կետերը: Դրա համար մնան կետերը պետք է ունենան իրենց պաշտպանությունը՝ ընդհուպ մինչև հակաօդային:

Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է ունենալ պահուստային կապի միջոցներ, այդ թվում՝ շարժական: Օրինակ՝ նկ. 4-ում պատկերված է արագ բացազատվող ինտեգրված համակարգ, որը հնարավորություն կտա վերականգնելու կամ ստեղծելու լրացուցիչ մագիստրալային կապուղիներ:

Բացի մագիստրալային կապուղիներից, պակաս դեր չեն խաղում մակ գործառնիվորումներում և գնդերում տեղեկույթի փոխանակման միջոցները: Խաղաղ պայմաններում դա կարող է կատարվել լայն կիրառության ստացող օպտիկամանրաթելային մալուխների, իսկ որոշ տեղերում՝ շարժական ռադիոկապի միջոցով: Պատերազմական իրավիճակում կարելի է օգտագործել ճկուն,

³ Stu M. B. Маркосян, К. А. Саакян. Кольцевые сети как основа цифровой сети с интегральным обслуживанием. Тезисы докладов 3-ей международной научно-технической конференции «Микроэлектроника и автоматика». М., 1997, сс. 77–78; М. В. Маркосян. Сравнительный анализ возможных структур и организации вычислительных процессов вычислительных сетей на базе радиоканалов связи. «Информационные Технологии и Управление». Сборник статей, т. 2. Е., 1998, сс. 136–140:



Նկ. 4. Արագ բացազատվող ինտեգրված համակարգ

շարժական հեռահաղորդակցական միջոցներով հագեցած հրամանատարական կետեր, որոնք ունեն ցանկացած տիպի կապ ապահովելու կարողություն՝ կատարելով նաև տեղեկության հոսքերի երթուղավորում (նկ. 5):



Նկ. 5. Շարժական հրամանատարական կետ՝ տեղեկության հոսքերի երթուղավորման հնարավորությամբ

Այժմ անցնենք կապի մի այլ շատ կարևոր օղակի դիտարկմանը. այն պետք է հնարավորություն ընձեռի ապահովելու կապը մինչև վաշտ, դասակ, ջոկ և յուրաքանչյուր զինվորի հետ:

Այստեղ գործ ունենք և՛ լարային, և՛ ռադիո միջոցների հետ: Այսօր դրանք հիմնականում անալոգային են, չունեն մեծ թողումակություն⁴:

Միանգամից թվայինի անցումը կապված է էական ծախսերի հետ: Այդ առումով լուծում կարող է լինել ինտեգրված դաշտային կոմունտատորների կիրա-


⁴ Տես «Yerevan Telecommunication Research Institute» կայքը (www.yetri.am):

ռումը, որոնք հնարավորություն են տալիս օգտագործելու և՛ ինտերնետ, և՛ անալոգային միջոցներ, և՛ դաշտային Այ Փի (IP) հեռախոսներ, և՛ համակարգչային տերմինալներ, և՛ թվային ռադիոկայաններ: Հեռախոսները կոմուտատորին են միանում դաշտային լարերով:

Նման կոմուտատորը, բացի «Էթերնետ» մուտքից, պետք է ունենա նաև ռադիոմուտքի կետ (*Access point*), որով այն ստանում է ռադիոկապով ինտերնետին միանալու հնարավորություն: Այդ դեպքում զինված ուժերում կարելի կլինի լայնորեն կիրառել պլանշերային համակարգիչներ՝ դրանց ընձեռած բոլոր հնարավորություններով հանդերձ, այդ թվում՝ քարտեզի, տեղում կողմնորոշվելու միջոցների (*GPS, GLONASS*) օգտագործմամբ:

Դիցուք մարտադաշտի խորությունը չի գերազանցում 30-40 կմ-ը: Դա նշանակում է, որ պետք է ունենալ տվյալների հաղորդման ռադիոցանցային դյուրակիր մոդեմներ և դրանց համապատասխան կրկնիչներ: Նման պայմաններում հնարավոր է օգտագործել Վայ Մաքս (*Wi Max*) ստանդարտը, որը կարող է ապահովել ավելի մեծ ծածկույթ: Կարելի է օգտագործել նաև Վայ Ֆայ (*WiFi*) ստանդարտը՝ էժան կրկնիչների թվի ավելացմամբ, դրանք կարելի կլինի բառիս բուն իմաստով սփռել բավականին մեծ տարածքով և ապահովել համապատասխան ալիքներով լավ ծածկույթ: Կրկնիչներն ունեն սնման աղբյուրներ, որոնք սովորաբար նախատեսված են լինում 24-ժամյա աշխատանքի համար, իսկ որոշ կրկնիչներ կարելի է համարել արևային մարտկոցներով և համապատասխան լիցքավորման սարքավորանքով՝ վերահաղորդման սպասարկման կետեր կազմակերպելու համար: Ընդսմին պետք չէ վախենալ, որ դրանք կարող են ընկնել հակառակորդի ձեռքը, քանի որ էժան են և չեն կարող օգտագործվել որևէ նպատակով, քանի որ տեղեկատվության անվտանգությունը ապահովվում է ավելի բարձր ցանցային մակարդակով:

Այս դեպքում պետք է լուծվեն նաև դինամիկ երթուղավորման կազմակերպման հարցերը, ինչը հնարավորություն կտա համաձայնեցնելու ընդհանուր ցանցի կառուցվածքի արագ փոփոխումն ըստ իրավիճակի և ապահովելու տվյալների հաղորդման անխափանությունը (նկ. 6):




Նկ. 6. Դաշտային թվային ռադիոցանցի կազմակերպման կառուցվածքը

Պատերազմական գործողությունների կառավարման համար շատ կարևոր է ստանալ նաև տեսողական տեղեկույթ, ինչը հնարավոր է նման ցանցը համապատասխան տեսողական տվիչներով օժտելու դեպքում: Այդպիսի տվիչ կարող է տեղադրված լինել զինվորների հանդերձանքում ներառված համալիր պաշտպանիչ գլխարկին: Դա հնարավորություն կտա տեսողական տեղեկույթը հավաքելու անմիջականորեն տեղերից և համապատասխան սերվերների միջոցով հաղորդելու կառավարման կետեր՝ որոշում ընդունելու համար (նկ. 7):



Նկ. 7. Հաղորդակցման միջոցներով օժտված հանդերձանք

Մարտական գործողությունների արդյունավետ կառավարման համար կարևոր նշանակություն ունի տեղեկույթ հավաքելն ու ժամանակին տեղ հասցնելը: Որպես օրինակ կարող է դիտարկվել տվիչների ցանցը (նկ. 8):



Նկ. 8. Մարտական գործողությունների ղեկավարման տվիչների ինֆորմացիոն ցանցի օրինակ

Նման գործողությունների և ֆունկցիաների ապահովման համար մարտական գործողությունների շրջանում պետք է առկա լինեն հետևյալ գլխավոր բաղադրիչները.


– հրետանի՝ հրամանների կատարման, ղեկավարման, հաղորդակցական և կրակի կառավարման ֆունկցիաներով,

- տվիչներ, ներառված առաջապահ մեխանիզացված դիտորդներ (հետախույզներ՝ ԱՄԴ),
- հրետանու ուղեցույցներ, երկնագնման առաջապահ ռադարներ, հրետանու տեղորոշման ռադարներ, անօդաչու թռչող ապարատներ և այլն,
- տվիչներից ստացվող տեղեկույթի հիման վրա կրակային աջակցության համադասման կենտրոններ,
- կրակի բաշխման կենտրոններ,
- տարատեսակ զենքեր:

Այստեղ նպատակահարմար է օգտագործել պաշտպանված կապի միջոցներ, օրինակ՝ հաճախականության արագ փոփոխմամբ կամ լայնաշերտ թվային ռադիոկայաններ, որոնցում կապուղիների բաժանումը կողային է (CDMA), և որոնք հնարավորություն են տալիս ապահովելու հուսալի և խլացումից (գործնականում) ավելի ապահով կապուղիներ⁵:

Որպես օրինակ կարող ենք նշել ՌՄ300 մոդելը (նկ. 9):

Չինվորների տերմինալները պետք է օժտված լինեն, ձայնայինից բացի, նաև տեքստային տեղեկույթ հաղորդելու կարողությամբ:



Նկ. 9. Կապի կազմակերպումը ռադիոմոդեմի միջոցով

Նշված միջոցները չեն բացառում առանձին գորատեսակների համար կիրառվող կապի միջոցների օգտագործումը:

Այսպիսով՝ հարկ է մեկ անգամ ևս շեշտել, որ կապը գորքերի կառավարման «նյարդային» համակարգն է, ուստի այն պետք է լինի հնարավորինս ճկուն և պաշտպանված հակառակորդի ներգործությունից: Իսկ դա նշանակում է, որ անվտանգության ապահովման համար անգամ ստանդարտ (այն էլ՝ օտարերկրյա արտադրության) միջոցների կիրառման դեպքում դրանք պետք է տեղում փոփոխվեն՝ պաշտպանվածության աստիճանը մեծացնելու համար, ինչը միանգամայն հնարավոր է, եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ում կա համապատասխան գիտատեխնիկական, ներառյալ՝ կադրային, բազա:

⁵ Տե՛ս *Մ. Վ. Մարկոսյան, Գ. Վ. Բաճալյան, Գ. Ա. Շալիկյան*. Широкополосная система связи на базе акустоэлектронного конвольвера. Тезисы докладов 3-ей международной научно-технической конференции «Микроэлектроника и автоматика», сс. 75–76; *Մ. Վ. Մարկոսյան, Գ. Ա. Շալիկյան, Գ. Վ. Բաճալյան, Գ. Վ. Սիմոնյան*. Метод передачи данных. Патент Республики Армения No P20010048, 09.04.2001:

ВОЗМОЖНЫЙ ВАРИАНТ ОРГАНИЗАЦИИ СВЯЗИ
В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

*М. В. МАРКОСЯН, доктор технических наук, директор ЗАО
«Ереванский научно-исследовательский институт средств связи», заведующий
кафедрой информатики, вычислительной техники и систем управления ЕГАСУ,
Ф. П. СОЛОМОНЯН, полковник запаса*

РЕЗЮМЕ

Рассмотрены вопросы организации связи, приведены методы, которые позволяют организовать динамическое изменение структуры связи и обеспечивать гибкую реорганизацию средств сбора и передачи интегрированных данных. Предлагается ряд технических решений, обеспечивающих интеграцию различных средств и типов данных. С учетом необходимости обеспечения высокой защищенности средств связи от целенаправленного воздействия противника предлагается соответствующим образом модифицировать стандартные технические устройства, для чего в РА есть научно-техническая, в том числе кадровая, база.

AN OPTION FOR ORGANIZING COMMUNICATION
IN THE ARMED FORCES

*M. V. MARKOSYAN, Doctor of Engineering, Director of «Yerevan Telecommunication
Research Institute» Closed Corporation, Head of the Chair of Informatics,
Computer Science and Control Systems, YSUAC, F. P. SOLOMONYAN, Reserve Colonel*

SUMMARY

The article addresses the problems of communication organization, puts forward methods making it possible to streamline dynamic changes in the structure of communication and to provide flexible reorganization of the means of collecting and transmitting integrated data. A number of technical means is proposed to ensure the integration of different tools and types of data. Given the need to ensure tight security of communications against the enemy's targeted impact it is suggested appropriately modifying the standard technical devices for which there is a scientific and technical, as well as personnel facilities in the RA.

**ՉՄԻԱՑՄԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ ԱԴԻԲԵՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄԸ
ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

*Մ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային քաղաքականության և միջազգային
հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի
վերլուծական կենտրոնի թարգմանիչ*



2011 թ. մայիսի 23–27-ը Ինդոնեզիայի Բալի կղզում կայացավ Չմիացման շարժման (ՉՇ) անդամ պետությունների արտգործնախարարների 16-րդ խորհրդաժողովը, որը նվիրված էր Կազմակերպության ստեղծման 50-ամյակին, և որի որոշմամբ ՉՇ անդամ դարձան մինչ այդ դիտորդի կարգավիճակ ունեցող Ֆիջին և Ադրբեջանը: Այդպիսով Կազմակերպության անդամների թիվը հասավ 120-ի: Նախկին խորհրդային հանրապետություններից Բելառուսը, Թուրքմենստանը և ՌԻՊԵԿՍտանը մույնպես Շարժման անդամներ են, իսկ Հայաստանը, Ղազախստանը, Տաջիկստանը, Գրդգստանը և ՌԻԿ-

րաինան ունեն դիտորդի կարգավիճակ:

Սառը պատերազմի տարիներին Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մի շարք պետություններ, որոնք անկախություն էին ձեռք բերել գաղութատիրական ռեժիմի դեմ երկարատև ազատագրական պայքարից հետո, ցանկանալով զերծ մնալ երկու հակադիր բլոկների միջև տեղի ունեցող անախորժություններից, բռնեցին չեզոք քաղաքականություն վարելու ուղին: Նրանք հասկանում էին, որ ռազմական դաշինքների մեջ ներքաշվելը կարող է հանգեցնել իրենց գաղութային կախվածության վերականգնմանը: Այսպես սկիզբ առավ Չմիացման շարժումը (*Non-Aligned Movement, Движение неприсоединения*), որը հետագայում վերածվեց միջազգային կազմակերպության:

ՉՇ անդամ պետությունների հիմնական իրավունքներն ու պարտականություններն են՝ հրաժարումը ռազմական խմբավորումներին և դաշինքներին մասնակցությունից, իրենց տարածքում օտարերկրյա զորակայանների տեղակայման և ռազմական նպատակներով օդային տարածքի օգտագործման արգելումը, միջուկային զենք չունենալը, լրտեսության, ուղղակի կամ անուղղակի ագրեսիայի ձեռնարկման նպատակով իրենց տարածքի օգտագործման արգելումը, չմասնակցելը չեզոքության հետ անհամատեղելի պարտավորություններ առաջացնող պայմանագրերի և դաշինքների, իրենց կարգավիճակի, քաղաքական ու

տնտեսական ինքնիշխանության խախտման, ինքնապաշտպանության դեպքում այլ պետությունների օգնությանը դիմելու իրավունքի ճանաչումը և այլն¹:

Սառը պատերազմի ավարտից հետո Շարժման առաքելությունը փոփոխությունների ենթարկվեց. քաղաքական խնդիրներից բացի, ՉՇ-ն իր ուշադրությունը սևեռեց նաև սոցիալական և տնտեսական խնդիրների վրա՝ վերածվելով համընդհանրացման ձգտումներն արտահայտող կառույցի:

Աշխարհաքաղաքական փոփոխությունների պատճառով Կազմակերպության ձևաչափը նույնպես հարմարեցվել է ժամանակի պահանջներին: Այսօր այն ավելի «ազատական» է. եթե Սառը պատերազմի տարիներին Շարժման անդամ լինելը բացառում էր ներգրավվածությունը որևէ ռազմաքաղաքական դաշինքի մեջ, ապա դրանից հետո, օրինակ՝ հետխորհրդային հանրապետություններից Ռեգենկատանն ու Բելառուսը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ պետություններ, անդամակցեցին նաև ՉՇ-ին:

Ադրբեջանի պարագայում ՉՇ-ին անդամակցումը միանգամայն անսպասելի էր, քանի որ նա 2007 թ. ընդունած «Ազգային անվտանգության հայեցակարգում» որպես առաջնային նպատակ սահմանել էր «ինտեգրումը եվրոպական և եվրատլանտյան կառույցներին»²:

Ադրբեջանի այս քայլը կարելի է բացատրել վերջին շրջանում Արևմուտքի հետ որոշակիորեն լարված հարաբերություններով, քանի որ նա բավարարված չէ մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ Բաքվի ձեռնարկած միջոցներով: Ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ ԵՄ-ը, ԵԱՀԿ-ն և Եվրոպայի խորհուրդը տարբեր պաշտոնական հայտարարություններում հաճախ են հայտնում իրենց դժգոհությունը Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումների և ճնշող քաղաքական մթնոլորտի վերաբերյալ³: Այսպես, ԵՄ-ի արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գլխավոր հանձնակատար Քետրին Էշտոնի՝ 2011 թ. մայիսի 20-ին արված հայտարարությանը հաջորդած ԵՄ-ի խորհրդարանական բանաձևը նույնպես խիստ քննադատության էր ենթարկում Ադրբեջանում մարդու իրավունքների վիճակը⁴:

Ադրբեջանի «Ժողովրդական ճակատ» ընդդիմադիր կուսակցության նախագահ Ալի Քարիմլիի խոսքով՝ «Ադրբեջանը ոչ պաշտոնական Սառը պատերազմ էր վարում Արևմուտքի դեմ: Պետական փաստաթղթերը կրում էին հակաարևմտյան բնույթ: Եվրոպական ինտեգրման գործընթացից նահանջելու քաղաքական ուղեգիծն սկսվել էր մեկ տարի առաջ և (ՉՇ-ին անդամակցելով – Մ. Ա.)

¹ Stu Belgrade Declaration of Non-Aligned Countries, 1961 (http://www.namegypt.org/Relevant%20Documents/01st%20Summit%20of%20the%20Non-Aligned%20Movement%20-%20Final%20Document%20%28Belgrade_Declaration%29.pdf)

² «National Security Concept of the Republic of Azerbaijan» (<http://merln.ndu.edu/whitepapers/Azerbaijan2007.pdf>).

³ Stu, օրինակ, 2010 Country Reports on Human Rights Practices, 8.04.2011 (<http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2010/eur/154413.htm>)

⁴ Stu «Statement by High Representative Catherine Ashton on Azerbaijan» (A 194/11). Brussels, 20 May 2011 (http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/122137.pdf):

մոտենում է իր տրամաբանական ավարտին»⁵: Իսկ քաղաքագետ Թոմաս դը Վաալի կարծիքով՝ Ադրբեջանը ԵՄ-ին միշտ էլ որոշակի հեռավորության վրա է պահել, քանի որ «իրեն լիովին եվրոպական պետություն չի համարում»⁶:

Նման անջրպետ ստեղծվում է նաև այն պատճառով, որ Ադրբեջանի արտաքին քաղաքական նպատակները հաճախ չեն համապատասխանում ՆԱՏՕ-ի նպատակներին: Ամեն կերպ փորձելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ-ի փոխարեն ներգրավել Հյուսիսատլանտյան դաշինքը՝ Բաքուն ՆԱՏՕ-ից ստանում է նույն բացասական պատասխանը: Ըստ այդմ, Ադրբեջանում ձևավորվում է այն կարծիքը, թե ՆԱՏՕ-ն բավարար չափով հետաքրքրված չէ իր խնդիրներով, որ Դաշինքը ոչ միայն հրաժարվում է Ադրբեջանի ռազմատենչ ձգտումներին աջակցելուց, այլև կոչ է անում կրճատելու ռազմական ծախսերը, այն դեպքում, երբ «Հայաստանն սպառնում է հարվածներ հասցնել Ադրբեջանի նախալին ենթակառուցվածքներին»⁷:

Իսկ որքանով է Ադրբեջանի որոշումն արդարացված իր արտաքին քաղաքական խնդիրների լուծման տեսանկյունից, որքանով է այն համապատասխանում տարածաշրջանում ներգրավված դերակատարների ծրագրերին և, վերջապես, ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ Հայաստանի համար: Փորձենք պատասխանել այդ հարցերին:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավկովկասյան տարածաշրջանում հայտնվեցին նոր դերակատարներ՝ ի դեմս ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Թուրքիայի և Իրանի: Նրանք ձեռնարկեցին տարածաշրջանի վրա իրենց ազդեցությունը տարածելու փորձեր՝ ցանկանալով Հարավային Կովկասի երեք նորանկախ հանրապետություններին ներքաշել ռազմաքաղաքական միությունների և դաշինքների մեջ:

Ադրբեջանի աշխարհաքաղաքական դիրքը և էներգակիրների պաշարները այս ուժային կենտրոնների համար նրան դարձնում են է՛լ ավելի գրավիչ: Եթե Հայաստանն այս հարցում կողմնորոշվել է և գիտե, թե ով է իր ռազմավարական դաշնակիցը՝ մինևույն ժամանակ համագործակցության ուղիներ փնտրելով նաև Արևմուտքի հետ, ապա Ադրբեջանը փորձում է «ճկունություն» ցուցաբերել՝ «թակելով մերթ Ռուսաստանի, մերթ Արևմուտքի դուռը»: Այս ենթատեքստում ՉՇ-ին միանալը կարելի է դիտել որպես ադրբեջանական արտաքին քաղաքականության նոր այլընտրանք:

Այս քայլի ադրբեջանական պաշտոնական մեկնաբանությունները բավականին անորոշ են: Երկրի արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Էլիան Պոլուխովի խոսքով՝ «Հայտնելով Չմիացման շարժմանը միանալու մտադրությունը՝ Բաքուն ևս մեկ անգամ ցուցադրում է իր արտաքին քա-

⁵ «Azerbaijan Joins Ranks Of Non-Aligned Movement», 25.05.2011 (http://www.rferl.org/content/azerbaijan_join_nonaligned_movement/24200776.html).

⁶ Նույն տեղում:

⁷ Տես, օրինակ, «What hampers Azerbaijan to join NATO?», 15.06.2011 (<http://contact.az/docs/2011/Politics/06156388en.htm>):

դաքականության հրապարակայնությունը և ռազմական դաշինքների նկատմամբ վերաբերմունքը»⁸: Խոսնակը նաև հավաստիացրել է, որ Կազմակերպությանը միանալը չի նշանակում արտաքին քաղաքականության մեջ որևէ փոփոխություն: Ըստ նրա՝ Ադրբեջանը շարունակելու է եվրաստլանտյան կառույցներին ինտեգրման քաղաքականությունը, իսկ ինտեգրումը չի ենթադրում պարտադիր անդամակցություն որևէ կազմակերպության⁹:

Իշխանամետ պատգամավոր Մուսա Գասիմլիի կարծիքով՝ ՉՇ-ին անդամակցելը մեծացնում է Ադրբեջանի հեղինակությունը, նպաստում է երկրի նկատմամբ միջազգային հանրության վստահության ամրապնդմանը՝ ընդլայնելով ադրբեջանական դիվանագիտության հնարավորությունները: Պատգամավորը համարում է, որ Ադրբեջանը, չմիանալով որևէ դաշինքի, կարող է պահպանել լավ հարաբերություններ ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ ՀԱՊԿ-ի անդամ պետությունների հետ: Նա Թուրքիայի հետ կարող է համագործակցել ռազմական արդյունաբերության, իսկ ՀԱՊԿ-ի անդամ պետությունների հետ՝ ռազմական կրթության ոլորտներում: Մինչդեռ «այն երկիրը, որը որևէ դաշինքի անդամ է, սովորաբար չունի տարաշարժի նման հնարավորություն»¹⁰:

Ինչ վերաբերում է ադրբեջանցի ընդդիմադիր քաղաքական գործիչներին ու քաղաքագետների մի մասին, ապա նրանք քննադատաբար են մոտենում ՉՇ-ին միանալու Բաքվի որոշմանը՝ համարելով, որ այս քայլը կարող է սասանել երկրի անվտանգությունը և նրան զրկել այն երաշխիքներից, որոնք առաջարկվում են ՆԱՏՕ-ի և, հատկապես, Թուրքիայի կողմից՝ հետագայում հարցականի տակ դնելով Ադրբեջանի եվրաստլանտյան ինտեգրումն ընդհանրապես: Առանց հանրային ու խորհրդարանական քննարկումների ընդունված այս քաղաքական որոշումը նաև անտրամաբանական է համարվում Ղարաբաղյան հակամարտության չլուծվածության պարագայում:

Այս առումով քաղաքագետ Վաֆա Գուլուգադեմն նշում է. «Պաշտոնական Բաքվի այս որոշումն ինձ խորապես զարմացնում է: Նախ, մեր ԱԳՆ ներկայացուցիչը նշեց, որ Ադրբեջանի մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին ուժի մեջ է մնում, շարունակվում է ռազմական համագործակցությունը ԱՄՆ-ի և այլ երկրների հետ: Ադրբեջանը շարունակելու է իր մասնակցությունը նաև Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ռազմական առաքելությանը: Եվ դրա հետ մեկտեղ Ադրբեջանը մտադիր է միանալու ՉՇ-ին: Ադրբեջանի մուտքն այս Շարժումն ինքնին սյուրռեալիստական է թվում: Երկրի մասնակցությունն այս շարժմանը մեզ ոչինչ չի տա՝ որևէ օգուտ կամ արտոնություններ»¹¹:

Բաքվի «Ատլաս» հետազոտական կենտրոնի տնօրեն Էլիան Շահինօղլուի կարծիքով նույնպես Շարժմանը միանալու երկրի որոշումն անտրամաբանա-

⁸ «Azerbaijan to join Non-Aligned Movement», 19.05.2011 (<http://www.news.az/articles/politics/36707>).

⁹ Տես նույն տեղում:

¹⁰ «Membership of Non-Aligned Movement «to raise» country's credibility», 26.05.2011 (<http://www.news.az/articles/politics/37174>):

¹¹ «Участие в «Движении неприсоединения» ничего не даст Азербайджану – Вафа Гулузаде», 20.05.2011 (<http://www.novosti.az/international/20110520/296017552.html>).

կան է՝ հատկապես Հայաստանի հետ հարաբերություններում մարտավարության տեսանկյունից. «Լարվածությունը Հարավային Կովկասում աճում է, և Ադրբեջանը ՆԱՏՕ-ի հետ ավելի սերտորեն համագործակցելու կարիք ունի, որպեսզի կարողանա ապահովել իր անվտանգությունը: Նրան չեզոքություն պետք չէ»¹²:

Ուշագրավ է, որ հավատարիմ մնալով տարբեր միջազգային կազմակերպություններում ներգրավվելու քաղաքականությանը՝ Բաքուն որոշակի հեռավորություն է պահպանում դրանցից: Օրինակ՝ Ադրբեջանը, լինելով Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) անդամ, չմիացավ ՀԱՊԿ-ին, որպեսզի ունենա Ռուսաստանի հետ հարաբերություններում տարաշարժի հնարավորություն: Անդամակցելով ՎՈՒԱՄ-ին* և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում համագործակցելով ՆԱՏՕ-ի հետ՝ Բաքուն ՉՇ-ին միանալու որոշում կայացրեց:

Արևմուտքը՝ ի դեմս ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի խուսափեց Բաքվի այս որոշմանը որևէ գնահատական տալուց: Ադրբեջանում ԵՄ-ի պատվիրակ Ռուլանդ Կոբիան պարզապես նշեց, որ կազմակերպության անդամակցելը ինքնիշխան պետության որոշում է, և իրենք հարգանքով են վերաբերվում դրան: Ցանկացած երկիր ինքն է որոշում՝ ինտեգրվել համընդհանրացող համաշխարհային համակարգին, թե մեկուսանալ և նվազագույնի հասցնել իր մասնակցությունը միջազգային հարաբերություններին: Պատվիրակն ավելացրել է, որ ժամանակ է հարկավոր այդ որոշման ամբողջական հետևանքները վերլուծելու համար, ինչից հետո միայն հնարավոր կլինի հայտնել ԵՄ-ի պաշտոնական դիրքորոշումը¹³: Դիվանագիտորեն շարադրված այս մտքից կարելի է եզրակացնել, որ Արևմուտքում այնքան էլ բավարարված չեն Բաքվի այս որոշմամբ: Իսկ գնահատականներից խուսափելը, թերևս, փաստում է, որ Արևմուտքը չի ցանկանում ավելի սրել հարաբերությունները Ադրբեջանի հետ՝ վստահ լինելով, որ եվրաստլանտյան կառույցներին երկրի ինտեգրումն անխուսափելի է անգամ ՉՇ անդամ լինելու պարագայում:

ԱՄՆ-ը միշտ էլ շահագրգռված է եղել Հարավային Կովկասում կայունության ամրապնդման գործում, և ցանկացած արտաքին քաղաքական քայլ, որն ուղղված է եղել տարածաշրջանում խաղաղության հաստատմանը, համապատասխանել է նրա քաղաքական շահերին: Այս առումով ՉՇ անդամ դառնալու Բաքվի որոշումը կարող է ձեռնտու լինել Վաշինգտոնին, քանի որ Շարժումը չեզոքություն է քարոզում և ունի խաղաղասիրական ուղղվածություն: Սակայն Ադրբեջանի արևմտամետ քաղաքականությունն ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում Կասպյան տարածաշրջանում Արևմուտքի ազդեցության

¹² «Roadblock in Azerbaijan/NATO relationship?», 30.06.2011 (<http://energeopolitics.com/2011/06/30/roadblock-in-azerbajannato-relationship/>).

* ՎՈՒԱՄ-ը (Ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպություն) ստեղծվել է 1997 թ. Վրաստանի, Ռկրախնայի, Ադրբեջանի և Մոլդովայի նախաձեռնությամբ: Կազմակերպության նպատակն էր ԱՊՀ-ից անկախ գործելը և Ռուսաստանից քաղաքական, տնտեսական ու ռազմական կախումից ազատվելը:

¹³ Stu «Azerbaijan may remain in isolation: the head of the EU in Baku», 26.05.2011 (<http://www.bakutoday.net/azerbaijan-may-remain-in-isolation-the-head-of-the-eu-in-baku.html>):

աճման համար: ՌԻստի ԱՄՆ-ը, ինչպես նաև Եվրոպան որոշակի քայլեր կձեռնարկեն, եթե զգան, որ ՉՇ-ին անդամակցելու միջոցով Ադրբեջանը փորձում է տարածաշրջանում փոխել ուժերի հարաբերակցությունը (այսինքն՝ եթե Ադրբեջանը «չեզոքություն խաղալով» մերձեցման գնա Արևելքի հետ՝ ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերելով Իրանի, Ռուսաստանի, Չինաստանի հետ համագործակցության նկատմամբ):

ՉՇ-ին Ադրբեջանի անդամակցությունը լիովին համապատասխանում է Իրանի շահերին, քանի որ Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարվածության պատճառը միշտ էլ եղել են վերջինիս արևմտամետ դիրքորոշումը և նրա սերտ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ: Բացի այդ, Իրանին մտահոգում է ռազմական և հետախուզական ոլորտներում Ադրբեջանի համագործակցությունը Իսրայելի հետ, քանի որ Իրանը իսրայելական ներկայությունն իր սահմանի մոտ դիտում է որպես սպառնալիք իր ազգային անվտանգությանը¹⁴: Այնուամենայնիվ, Ադրբեջանի «չեզոքացումը» կարող է փոխել իր հարավային հարևանի հետ հարաբերությունների մակարդակը և վստահության մթնոլորտ ստեղծել երկու երկրների միջև՝ Իրանին որոշակիորեն հեռացնելով Հայաստանից: Նման քաղաքականությամբ Ադրբեջանը կապահովի նաև Իրանի հետ բաց սահմաններ ունենալը, ինչը կարևոր գործոն է Ադրբեջանի տնտեսական զարգացման համար: Ադրբեջանի համար կարևոր է Իրան-Ռուսաստան տարանցիկ ուղու վրա գտնվելու հանգամանքը, ինչը մեծ շահույթներ է բերում իրեն:

Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը լարվածություն առաջացրեց Թուրքիա – Ադրբեջան հարաբերություններում, իսկ դրանց տապալումը ավելի ամրապնդեց երկու երկրների միջև «եղբայրական» հարաբերությունները: ՌԻստի, անգամ ՉՇ անդամ դարձած Ադրբեջանը շարունակելու է մնալ Թուրքիայի ռազմավարական դաշնակիցը: Սակայն երկու երկրներն էլ հասկանում են, որ տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը թելադրում է իր կանոնները: Մի կողմից՝ Ռուսաստանն ու Իրանը լիովին դեմ են ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցությանը, մյուս կողմից՝ հարկավոր է ոչ միայն Թուրքիայի, այլև ՆԱՏՕ-ի անդամ բոլոր պետությունների հավանությունը:

Հետևաբար Թուրքիան, հասկանալով, որ մոտ ապագայում Ադրբեջանը չի կարող դառնալ այդ ռազմական դաշինքի անդամ, զարգացնում է հարաբերությունները երկկողմ ձևաչափով: Այսպես, 2010 թ. օգոստոսին կնքված «Ռ-ազմավարական համագործակցության և փոխօգնության մասին» թուրք-ադրբեջանական պայմանագիրը վերահաստատեց երկու երկրների միջև բարձր մակարդակի հարաբերությունների առկայությունը:

Թբիլիսիի համար Ադրբեջանի «չեզոքացումը» շահեկան չի կարելի համարել: Վրաստանը դառնում է տարածաշրջանի միակ պետությունը, որը վարում է բացահայտ արևմտամետ քաղաքականություն և լուրջ պորթլեմներ ունի Ռու-

¹⁴ Տե՛ս «Oil and geopolitics in the Caspian Sea Region». Ed. by M. P. Croissant, B. Aras. Westport, 1999, P. 167:

սաստանի հետ հարաբերություններում: Եթե ՎՈՒԱՄ-ի շրջանակներում Ադրբեջանի հետ հնարավոր էր Ռուսաստանի նկատմամբ համաձայնեցված դիրքորոշման գալ, ապա այժմ «չեզոքություն» որդեգրած Ադրբեջանին դժվար կլինի համոզել որոշ հարցերում ցուցաբերել հակառուսական դիրքորոշում:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա պետք է նշել, որ ընդհանուր առմամբ նրան ձեռնադրել է Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղեգծի նման փոփոխությունը, քանի որ այն, թեկուզ անորոշ ժամանակով, բայց նվազեցնում է ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցելու հավանականությունը: Հայաստանի հետ գոյություն ունեցող հարաբերությունների պարագայում Ադրբեջանը չի ցանկանա ներգրավվել ՀԱՊԿ-ի կողեկտիվ անվտանգության համակարգի մեջ:

ՉՇ խորհրդատուները Ադրբեջանը ներկայացնող արագորձնախարար Էլմար Մամեդյարովը իր ելույթում շեշտել էր, որ Շարժմանն անդամակցելը մասնակիցներին «միջազգային կազմակերպություններում բարձր պաշտոնների առաջադրվելու»¹⁵ հնարավորություն է ընձեռում: Նախարարն ավելացրել էր, որ Կազմակերպությունը լրացուցիչ հարթակ կարող է դառնալ Ղարաբաղյան հակամարտության հարցում Ադրբեջանի դիրքորոշումը միջազգային հանրությանը ավելի խորությամբ ներկայացնելու համար¹⁶: Բացի այդ, Է. Մամեդյարովը նշել էր, որ «Ադրբեջանը դեռ վնասներ է կրում հարևան Հայաստանի կողմից իր տարածքների քսան տոկոսի բռնազավթման պատճառով: Բաքուն բարձր է գնահատում ՉՇ անդամների մեծ մասի սկզբունքային դիրքորոշումը Ադրբեջանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարցում»¹⁷:

Այլ կերպ ասած՝ Ադրբեջանը փորձելու է օգտագործել Շարժման ներուժը՝ ՄԱԿ-ի ԳԱ-ում Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ հակահայկական որոշումների ընդունման նպատակով՝ կրկին խաղարկելով արդեն ավանդական դարձած «գոհի կերպարը»¹⁸:

Հարկ է նշել, որ ՉՇ-ին անդամակցելը նպաստեց այն բանին, որ 2011 թ. հոկտեմբերի 25-ին Ադրբեջանը դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ: Եթե նախկինում Ադրբեջանին ՄԱԿ-ում սատարում էին հիմնականում «Բալանական կոնֆերանս» կազմակերպության անդամ պետությունները, ապա այժմ Բաքվին կաջակցեն նաև Շարժման անդամները¹⁹:

Ուշագրավ է, որ Ադրբեջանը, անդամակցելով մի կազմակերպության, որի գաղափարական հենքը չեզոքությունն է, փորձում է այն օգտագործել որպես իր

¹⁵ «Azerbaijan: Facing a Choice between NATO and NAM?», 30.06.2011 (<http://www.eurasianet.org/node/63774>).

¹⁶ Տե՛ս «FM: Azerbaijan uses new platform to inform world community about position», 27.05.2011 (<http://en.trend.az/news/politics/1883018.html>):

¹⁷ «Азербайджан высоко ценит позицию Движения неприсоединения по вопросу территориальной целостности – Мамедьяров», 06.09.2011 (<http://umma.org.ua/ru/news/SNG/2011/09/06/2725>).

¹⁸ Այդ մասին ավելի հանգամանորեն տես Է. Բ. Աբսևհայան, «Զոհի կերպարը»՝ որպես Ադրբեջանի քարոզչության գործիք Ղարաբաղյան հակամարտության համատեքստում: «ՀԲ», 2010, հմ. 3:

¹⁹ Տե՛ս «Azerbaijan joins NAM to lobby for anti-Armenian resolutions adoption by UN», 27.05.2011 (<http://www.panarmenian.net/eng/news/71053/>):

ռազմատենչ արտաքին քաղաքականության հավելյալ միջոց: Հետևաբար, չենք կարծում, որ երկրի կողմից փորձ է արվում Ղարաբաղյան հակամարտության լուծման նկատմամբ «պատերազմի հարացույցի» վրա հիմնված մոտեցումը փոխարինելու «խաղաղության հարացույցով»²⁰:

Սակայն տարածքային ամբողջականության նկատմամբ Շարժման անդամ պետությունների «սկզբունքային դիրքորոշման» մասին Ադրբեջանի պատկերացումները չափազանցված են: Այդ մասին է վկայում Եգիպտոսի Շարմ-էլ-Շեյխ քաղաքում 2009 թ. հուլիսի 11–16-ը տեղի ունեցած ՉՇ 15-րդ գագաթնաժողովում ընդունված հռչակագիրը, որով հաստատվում է ազգերի ինքնորոշման սկզբունքի գերակայությունը՝ առանց տարածքային ամբողջականության սկզբունքի որևէ հիշատակման: Հռչակագրում մասնավորապես ասված է, որ Կազմակերպության անդամ պետությունները շարունակելու են աջակցել բոլոր ժողովուրդների ինքնորոշման հիմնարար և անօտարելի իրավունքին, քանի որ այն կենսական նշանակություն ունի և կարևոր գործոն է օտար տիրապետության տակ գտնվող տարածքների ազատագրման և մարդու իրավունքների սկզբունքների լիարժեք ապահովման համար²¹:

Ամեն դեպքում, Հայաստանի համար խիստ կարևոր է իր դեմ ուղղված քարոզչությանը դիմակայելը ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ հենց ՉՇ շրջանակներում: Կազմակերպությունում ունենալով դիտորդի կարգավիճակ՝ Հայաստանը կարող է անդամ պետությունների ուշադրությունը սևեռել այն հանգամանքին, որ ռազմատենչ հայտարարություններով հանդես եկող Ադրբեջանը չի կարող տեղ ունենալ խաղաղասեր պետությունների շարքում, քանի որ երկրի բացահայտ հակահայկական տրամադրվածությունը հակասում է չեզոքության տրամաբանությանը՝ վնաս հասցնելով նաև շարժման հեղինակությանը:

Ավելին. Հայաստանը կարող է, վկայակոչելով Ղարաբաղյան պրոբլեմը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու իր հաստատականությունը և այն հակադրելով ադրբեջանական իշխանությունների ռազմատենչ հայտարարություններին, ամրապնդել իր դիրքերը նաև այս Կազմակերպությունում և զսպել Ադրբեջանի ապատեղեկատվական գործունեությունը:

Ամփոփելով՝ նշենք, որ ՉՇ-ին Ադրբեջանի անդամակցությունը առաջ է բերում որոշակի փոփոխություններ տարածաշրջանում ներկայացված դերակատարների կողմից Հարավային Կովկասի՝ որպես աշխարհաքաղաքական միասնական միավորի ընկալման մեջ: «Բազմավեկտոր» Հարավային Կովկասը նոր մարտահրավերներ է նետում տարածաշրջանով հետաքրքրված ուժային կենտրոններին և տարաշարժի ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարող Հայաստանի համար:

²⁰ Տես Հ. Ս. *Քոթակցյան*, Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 4:

²¹ Տես «Ազգերի ինքնորոշման սկզբունքը՝ գերակա»: «Կապիտալ», 2011 թ. մարտի 15 (http://www.cdaily.am/home/paper/2011_03_15/news/13352/):

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

**ВСТУПЛЕНИЕ АЗЕРБАЙДЖАНА В ОРГАНИЗАЦИЮ ДВИЖЕНИЯ
НЕПРИСОЕДИНЕНИЯ И ВОЗМОЖНЫЕ ГЕОПОЛИТИЧЕСКИЕ
ПОСЛЕДСТВИЯ НА ЮЖНОМ КАВКАЗЕ**

М. С. АВETИСЯН, аспирант кафедры мировой политики и международных отношений Российско-Армянского (Славянского) университета, переводчик аналитического центра ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

В статье обсуждаются побудительные причины недавнего вступления Азербайджана в Организацию Движения неприсоединения и возможное влияние этого события на геополитическую обстановку на Южном Кавказе. Предполагается, что данный решительный шаг в азербайджанской внешней политике в направлении позитивного нейтралитета, который в основном обусловлен напряженными отношениями страны с Западом в связи с невозможностью согласовать позиции по некоторым важным для сторон вопросам, существенно не отразится на расстановке сил на Южном Кавказе, если во внешней политике страны в дальнейшем не произойдет реальный сдвиг «на Восток» вопреки интересам Западных держав в регионе. На данный момент вступление Азербайджана в Организацию можно интерпретировать как желание властей страны уклоняться от более тесной интеграции с НАТО, а также от возможного вступления в ОДКБ под давлением России.

В то же время можно ожидать некоторых изменений в восприятии региональными игроками Южного Кавказа как единого целого вследствие сильно выраженной дивергентности политических линий откровенно прозападной Грузии, Армении – союзника России и члена ОДКБ, сотрудничающего с США и НАТО, и «неприсоединившегося» Азербайджана.

REGIONAL SECURITY

**ACCESSION OF AZERBAIJAN TO THE NON-ALIGNED
MOVEMENT AND ITS POSSIBLE GEOPOLITICAL
CONSEQUENCES IN THE SOUTH CAUCASUS**

M. S. AVETISYAN, Graduate Student of the Chair of World Policy and International Relations, Russian-Armenian (Slavonic) University, Translator of the Analytical Center, INSS, MOD, RA

SUMMARY

The paper discusses the motives for the recent accession of Azerbaijan to the Non-Aligned Movement and its possible impact on the geopolitical situation in the South Caucasus. It is presumed that this decisive step in Azerbaijani foreign

policy to the direction of positive neutrality that is mainly conditioned by strained relations with the West due to the inability to coordinate positions on some important issues for the parties, will not significantly affect the alignment of forces in the South Caucasus, if in the future there is not a real shift «to the East» in its foreign policy contrary to the interests of the Western powers in the region. At the moment, the accession of Azerbaijan to the Organization can be interpreted as a desire of the authorities to evade the closer integration with NATO, as well as the possible membership in the CSTO under the pressure from Russia.

At the same time, some changes can be expected in the regional players' perception of the South Caucasus as a whole due to the vivid divergence of political lines of openly pro-western Georgia, Armenia – Russia's ally and CSTO member, cooperating with the US and NATO, and «non-aligned» Azerbaijan.

**ՀԱԿԱՌԱԴԱՐՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

*Մ. Վ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր,
«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի
տնօրեն, ԵրճՇՊՀ-ի ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման
համակարգեր ամբիոնի վարիչ*



Ռադիոէլեկտրոնային պայքարը (ՌԷՊ) օպերատիվ (մարտական) ապահովման տեսակ է: Դա զորքերի (ուժերի)՝ ըստ նպատակների, խնդիրների, տեղի ու ժամանակի փոխկապված այն միջոցառումների և գործողությունների համախումբն է, որոնք նպատակաուղղված են հակառակորդի զենքի և զորքերի կառավարման համակարգերի ռադիոէլեկտրոնային միջոցների (ՌԷՄ) հայտնաբերմանն ու ռադիոէլեկտրոնային ճնշմանը, ինչպես նաև

յուրային ռադիոէլեկտրոնային համակարգերի ու ՌԷՄ-ի ռադիոէլեկտրոնային պաշտպանությանը, հակառակորդի հետախուզական տեխնիկական միջոցներին հակազդեցությանը: ՌԷՊ-ի կազմակերպումն ու իրականացումը նախատեսված են բոլոր ժամանակակից բանակներում: Ըստ սահմանման՝ դրա հիմնական խնդիրներն են՝ հակառակորդի զորքերի (ուժերի) կառավարման խաթարումը, հետախուզման, զենքի, ռազմական տեխնիկայի կիրառման արդյունավետության նվազեցումը, ինչպես նաև յուրային զորքերի և զենքի կառավարման համակարգերի ու միջոցների աշխատանքի կայունության ապահովումը: Օտարերկրյա մասնագետների կարծիքով՝ մարտում և օպերացիայում հաղթելու վճռորոշ գործոն է ՌԷՊ-ի ուժերի և խոցման կառավարվող միջոցների զերազանցության ստեղծումը, որը նրանք երբեմն անվանում են «ռադիոէլեկտրոնային պատերազմ», կամ «եթերում գերիշխանության նվաճում»:


Յուրաքանչյուր պետություն ձգտում է զարգացնելու ռադիոէլեկտրոնային պայքարի իր միջոցները: Այս ոլորտում առաջատար դիրքերում են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Չինաստանը և այլն:

Ժամանակակից զինված հակամարտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարձակվող կողմը ձգտում է առաջին հերթին ոչնչացնելու հակառակորդի ՀՕՊ-ի միջոցները, ինչից հետո միայն ցամաքային զորքերն ու ռազմա-

օդային ուժերը շարունակում են ռազմական գործողությունները տարածքի ամբողջ խորությամբ:

Այսպիսով՝ զինված ուժերի համար առաջնահերթ խնդիրներից են յուրային ՀՕՊ-ի միջոցների պաշտպանությունը և հակառակորդի ՀՕՊ-ի միջոցները շարքից հանելը: Որպես կանոն՝ այդ խնդիրները լուծվում են համապատասխան ռադիոէլեկտրոնային խանգարումների ստեղծմամբ:

Խանգարումաստեղծիչ ռադիոէլեկտրոնային համակարգը (նկ. 1) յուրահատուկ ձևով խոչընդոտում է հակառակորդի ՀՕՊ-ի միջոցների արդյունավետ գործունեությունը: Դրա շնորհիվ այն ոչ միայն աջակցում է յուրային գորքերի մարտական գործողություններին, այլև դառնում է հակառակորդին ճնշելու հզոր միջոց:



Նկ. 1. Խանգարումաստեղծիչ ռադիոէլեկտրոնային համակարգ

Նման համակարգը կարող է աշխատել երկու հիմնական բանելակարգով՝

– յուրային ինքնաթիռների կամ հրթիռների՝ հակառակորդի կողմից հայտնաբերման համար խանգարումների ստեղծում,

– այնպիսի խանգարումների ստեղծում, որոնք էապես մեծացնում են հակառակորդի ՁՀՀ-ների հրթիռների շեղումը (նվազեցնում նշանակետերի խոցման արդյունավետությունը):

Դիտարկենք միայն առաջին բանելակարգով աշխատելու դեպքը:

1. Ռադիոէլեկտրոնային համակարգի (ՌԷՀ) ընդհանուր նկարագիրը

Տվյալ համակարգը պայմանականորեն անվանենք «հակառադար»: Կախված տեղանքից և հետապնդվող նպատակներից՝ այն կարող է տեղակայված լինել գետնի վրա, բեռնարկղում, ինքնաթիռում կամ ուղղաթիռում և աշխատել ինքնավար բանելակարգով: Այդ համակարգի յուրահատկությունն այն է, որ նա ներառում է մի քանի ֆունկցիոնալ սարքեր, օրինակ՝

- ուղղության որոշման սարք,
- ռադարի ազդանշանի ճանաչման սարք,
- խանգարումաստեղծիչ սարք:

Այսինքն՝ «Հակառադար» ՌԷՀ-ը հայտնաբերում է ՌՏԿ-ների ազդանշանը և այդ ուղղությամբ ճառագայթում է խանգարիչ աղմուկ:

Նման կառուցվածքի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՌՏԿ-ները աղմուկի նկատմամբ ունեն բարձր աստիճանի պաշտպանվածություն: Այսպես, կախված ՌՏԿ տիպից՝ դրանք մինչև 100 միլիվոլտայրկյանը մեկ վոլտում են իրենց ճառագայթման հաճախականությունը և ազդանշանի պարամետրները: Արդյունավետ խանգարումների ստեղծման համար անհրաժեշտ է մի քանի ուղղությամբ աշխատող ՌՏԿ-ներից ընտրել մեկը:

«Հակառադար» համակարգի մեջ մտնող ուղղության որոշման սարքը հնարավորություն է տալիս ճշտելու ՌՏԿ-ի տեղակայման ուղղությունը: Բացի այդ, կարելի է տվյալ ուղղությունը որոշելուց հետո ճնշման կայանի նեղ ճառագայթն ուղղել ՌՏԿ-ի վրա՝ էներգիայի ավելի մեծ խտություն ունեցող խանգարիչ ազդանշանի հաղորդմամբ:

Խանգարիչ ազդանշանը լիովին նմանարկում է տվյալ ՌՏԿ ազդանշանը այնպես, ինչպես նշանակետից անդրադարձման դեպքում: Դրա հետևանքով ՌՏԿ արտապատկերման էկրանի վրա առաջանում են կեղծ նշանակետեր, որոնք շարժվում են իր ուղղությամբ: Միաժամանակ կարող են ստեղծվել բազմաթիվ կեղծ նշանակետեր, ընդ որում, դրանք կարող են նմանարկել տարբեր թռչող սարքեր:

«Հակառադար» ՌԷՀ-ը կարող է ստեղծել տպավորություն, թե իբր ՌՏԿ-ի ուղղությամբ իրականացվում է օդուժի զանգվածային հարձակում:

Նման «խանգարումներ» ստեղծելը հնարավոր դարձավ «Հակառադար» ՌԷՀ-ում ժամանակակից հաշվողական ու թվային տեխնիկայի կիրառման շնորհիվ:

2. «Հակառադար» ՌԷՀ-ի օգտագործման ձևերից մեկը

«Հակառադար» ՌԷՀ-ը տեղակայվում է ՌՏԿ-ից ուղիղ տեսանելիության վրա: Բայց քանի որ շատ երկրներում տեղանքը կտրտված է, հաճախ հնարավոր չի լինում ապահովել ուղիղ տեսանելիություն, ուստի անհրաժեշտ է լինում համապատասխան սարքավորանքը տեղադրել կան ուղղաթիռում (նկ. 2), կան էլ ինքնաթիռում: Այդ դեպքում «Հակառադար» ՌԷՀ-ը կարող է գտնվել ՌՏԿ-ից բավական հեռավորության վրա:



Նկ. 2. «Հակառադար» ՌԷՀ-ը ուղղաթիռում

«Հակառադար» ՌԷՀ-երը կարող են համալրվել լրացուցիչ սարքավորանքով, որը հնարավորություն տա ապահովելու 3-4 համակարգի համատեղ աշխատանքը: Դա անհրաժեշտ է տարբեր ՌՏԿ-ների ճնշելու համար: Բացի

այդ, դրանց համատեղ աշխատանքը հնարավորություն կտա որոշելու ոչ միայն ՌՏԿ-ների գործողության ուղղությունը, այլև տեղակայման վայրը:

3. «Հակառադար» ՌԷՀ-ի կիրառման առաջարկվող մարտավարությունները.

ա) Աջակցում յուրային ավիացիայի մարտական գործողություններին:

Ավիացիոն կամ հրթիռային հարձակման ժամանակ միացվում են «Հակառադար» ՌԷՀ-երը: Ըստ այդմ, հակառակորդի յուրաքանչյուր ՌՏԿ-ի համար միաժամանակ ստեղծվում են բազմաթիվ կեղծ նշանակետեր: ՈՒՍտի նա չի կարողանում հասկանալ, թե որ նշանակետերը պետք է վերցնել ուղեկցման, և դրանցից որը պետք է խոցել: Այսպիսով՝ նրա պաշտպանությունում առաջանում է ճեղքվածք, որով էլ անկաշկանդ կարող են անցնել ինքնաթիռները և հրթիռները:

բ) Հոգեբանական ճնշում:

Միացվում են բոլոր կամ մի քանի «Հակառադար» ՌԷՀ-եր, և նմանարկվում են մեկ, երկու և ավելի կեղծ նշանակետեր: Հակառակորդը ստիպված է լինում մարտական տագնապ հայտարարել և նույնիսկ կեղծ նշանակետերի վրա հրթիռներ արձակել: Որոշ ժամանակ անց հակառակորդն սկսում է հասկանալ, որ նշանակետերը կեղծ էին, և որ իր ՌՏԿ-ները ի վիճակի չեն լուծելու առաջադրված խնդիրները: Իսկ ստեղծված լարվածությունը հանգեցնում է զգոնության մակարդակի նվազման: Տվյալ մարտավարությունը, որպես կանոն, կիրառելի է նախապատերազմական շրջանում:

Ամփոփում: Եվ այսպես. ժամանակակից զինված բախումների փորձը ցույց է տալիս, որ դրանք ավելի ու ավելի մեծ չափով են փոխադրվում տեղեկությանի նախընտրված վերածվելով ռադիոէլեկտրոնային պայքարի, որի արդիական և արդյունավետ միջոցներից են «հակառադարային» համակարգերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *А. Васильев*. Радиоэлектронная борьба в воздушных операциях ВВС США, 24.05.2010 (<http://www.liveinternet.ru/community/3629085/post127027585/>).
2. *Д. А. Ларин*. Электронная война в Ливане летом 2006 года (<http://www.agentura.ru/press/about/jointprojects/inside-zi/lebanon/>).
3. «РЭБ, радио-электронная борьба, джаммеры», 17.10.2008 (<http://www.wolfcreek.ru/forum/index.php?showtopic=30>).
4. «Военный энциклопедический словарь», т. 2. М., 2001.

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРИМЕНЕНИЯ АНТИРАДАРОВ
КАК СОВРЕМЕННЫХ СРЕДСТВ РАДИОЭЛЕКТРОННОЙ БОРЬБЫ**

*М. В. МАРКОСЯН, доктор технических наук, директор ЗАО
«Ереванский научно-исследовательский институт средств связи»,
заведующий кафедрой информатики, вычислительной техники
и систем управления ЕГАСУ*

РЕЗЮМЕ

Анализ опыта современных вооруженных столкновений показывает, что они в основном разворачиваются в информационном поле, вследствие чего для достижения победы над противником все большее значение приобретают средства радиоэлектронной борьбы. Одним из подобных эффективных средств является система «антирадар», представляющая собой комплекс функциональных устройств определения направления излучения РЛС противника, опознавания сигнала его радара и постановку помех. Антирадары, обнаружив сигнал, излучают в этом направлении шумовой сигнал-помеху, на экране радара создавая множество ложных целей и тем самым специфически препятствуя эффективной деятельности ПВО противника.

Необходимость использования сложной системы, состоящей из трех вышеуказанных устройств, диктуется высокой помехозащищенностью РЛС от воздействия посторонних шумов: они в течение периода времени до 100 мсек меняют частоту излучения и параметры сигнала. В целях создания эффективных помех в качестве объекта электронного воздействия выбирается одна из нескольких работающих РЛС противника, что обеспечивается устройством точного определения направления их излучения.

РЭС «Антирадар» может работать в двух основных режимах: постановка помех для обнаружения противником летящих воздушных целей, постановка помех, существенно снижающих точность наведения ракет ЗРК (эффективность поражения цели).

MILITARY ENGINEERING

**SOME ISSUES ON THE APPLICATION OF RADAR DETECTORS
AS MODERN MEANS OF RADIO-ELECTRONIC WAR**

*M. V. MARKOSYAN, Doctor of Engineering, Director of «Yerevan Telecommunication
Research Institute» Closed Corporation, Head of the Chair Informatics,
Computer Science and Control Systems, YSUAC*

SUMMARY

The analysis of the experience of contemporary armed conflicts shows that they mainly arise in the information field, therefore to achieve a victory over the enemy the means of radio-electronic war are becoming increasingly important. One of such efficient means is the system of «radar detector» which is a set of functional devices determining the direction of the radiation of the enemy's radar station, detecting the signal of its radar and jamming. The radar detectors identifying the signal emit a noise signal - interference in that direction creating numerous decoys on the radar screen and thereby specifically obstructing the effective operation of the enemy's air defense.

The need to use a complex system consisting of the above-mentioned three devices is dictated by the high interference immunity of the radar station from the impact of background noises: they for a period of time up to 100 m/sec alter the radiation frequency and the signal parameters. In order to create efficient interference one of the several operative radar stations of the enemy is selected as an object of electronic impact which is provided by the device of accurate detection of their radiation direction.

The radio-electronic means «Radar detector» can operate in two basic modes: jamming of the detection by the enemy the flying air targets, jamming which significantly reduces the precision missile guidance of the air defense missile system (efficiency of hitting the target).

**ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ
ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

*Հ. Յ. ՄԱՅԱԴՅԱՆ, գեղապետ, աշխարհագրական գիտությունների թեկնածու,
գործառնասի հրամանատարի տեղակալ*



Զինված պայքարի պատմությունը վկայում է, որ դեռ հնագույն ժամանակներից պատերազմներ և առանձին ճակատամարտեր ծրագրելիս որպես կարևոր գործոն հաշվի են առնվել ռազմական գործողությունների թատերաբեմի աշխարհագրական յուրահատկությունները: Տարածքի, կլիմայի, տեղանքի և այլ աշխարհագրական առանձնահատկությունների ճիշտ գնահատումն ու խելամիտ օգտագործումը վճռորոշ նշանակություն են ունեցել և այժմ էլ ունեն ռազմական բնույթի բազմաթիվ խնդիրների լուծման ժամանակ՝ հնարավորություն տալով առավելություն ստանալու հակառակորդի նկատմամբ:

Այս առումով Հայկական լեռնաշխարհն իր խիստ կտրտված ռելիեֆով, ուղղաձիգ բնական գոտիականությամբ, լանդշաֆտների բազմազանությամբ ու աշխարհագրական դիրքի մեծա-, միջնա- և փոքրամասշտաբ առանձնահատկություններով հանդերձ էական ազդեցություն է գործել այստեղ ընթացող ռազմական գործողությունների բնույթի, իսկ հաճախ՝ նաև դրանց ելքի վրա: Հարկ է նշել, որ Հայկական լեռնաշխարհի սահմանների, բնական պայմանների, վարչատարածքային բաժանման վերաբերյալ հանգամանալից ուսումնասիրություններ են կատարել Թ. Հակոբյանը¹ և Բ. Հարությունյանը²:

Թեև Հայկական լեռնաշխարհը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, սակայն ուղղաձիգ գոտիականության պատճառով³ նրան հիմնականում բնորոշ են խիստ ցուրտ ձմեռներ և շոգ ամառներ: Չմռանը տեղացած առատ ձյունը փակում էր նահանգներն ու գավառներն իրար կապող լեռնանցքները, և հաճախ մեկուսացման վիճակը տևում էր 3-5 ամիս: Հենց դա էր այն բանի հիմնական պատճառներից մեկը, որ այս տարածաշրջանում պատերազմները և ճակատամարտերը տեղի էին ունենում գերազանցապես գարնան երկրորդ կեսից մինչև աշնան առաջին կեսը:

Հարձակվող հակառակորդի համար լեռները բարդացնում կան ընդհան-

¹ Տես Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն: Ե., 1968:

² Տես Բ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի: Մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ): Ե., 2001:

³ Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 13: Ե., 1987, էջ 59–63:

րապես բացառում են այնպիսի հարձակողական խմբավորման ստեղծումը, որը գործի առավել նպատակահարմար մեկ ուղղությամբ, այլ ստիպում են գործել համեմատաբար սակավաթիվ ուժերով և իրարից անջատ ուղղություններով: Լեռնային տեղանքն ընդհանուր առմամբ խոչընդոտում է տեղանքում մարտական կարգի տարրերի ստեղծմանը և տեղակայմանը, նվազեցնում է հարձակման տեմպը, սահմանափակում գորքերի տարաշարժի հնարավորությունը, նվազեցնում ցամաքային գորքերի, ինչպես նաև ավիացիայի կրակային միջոցների արդյունավետությունները, դժվարացնում կապի միջոցների և նյութատեխնիկական ապահովման օղակների աշխատանքը, ավելացնում է ինժեներական միջոցառումների անցկացման ժամանակը: Հարձակումները կատարվում են առավելապես գոյություն ունեցող ճանապարհների և հովիտների երկայնքով, լեռնաշղթաների լանջերով⁴:

Հայ ռազմարվեստն ունի հազարամյակների պատմություն և զարգացման հաջողական ընթացք: Ահա թե ինչու ռազմարվեստի գլխավոր բաղադրիչներից մեկի՝ աշխարհագրական գործոնի դերի ուսումնասիրությունն սկսում ենք հնագույն ժամանակներից:

Պատմիչների տեղեկություններից երևում է, որ, ինչպես հեռավոր անցյալում, այնպես էլ միջին դարերում հայ զորավարները կարևորել են տեղանքի ճիշտ ընտրությունը, ինչը նպաստել է մարտի հաջողությանը:

Ռազմաաշխարհագրական դիրքի օգտագործման հնագույն օրինակ է Հայկի և Բելի ճակատամարտի նկարագրությունը Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատության մեջ. «Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են (խոսքը Հայկի ջոկատի մասին է, – Հ. Ս.) բարձրագույն լեռների միջև մի դաշտածև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, ... իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանցում»⁵:

Մեկ այլ օրինակ նկարագրված է Դարեհ I-ի Բեհիստունի ժայռի (Քիրմանշահի մոտ) արձանագրության այն հատվածում, որում ներկայացված են Աքեմենյան տիրակալի դեմ հայերի ապստամբությունը և նրանց կողմից պաշտպանական նպատակներով լեռնային ռելիեֆի հմուտ օգտագործումը. «Այս ճակատամարտում ապստամբները հմտորեն օգտագործել են Քյավան-դաղ լեռների հարավային լանջերը՝ ակներևաբար իրենց ձեռքում պահելով իշխող բարձունքները, իսկ դա ոչ միայն հեշտացրել է դիմադրությունը, այլև պարտության մատնել պարսից զորքերին»⁶:

⁴ Տես *И. Н. Воробьев. О тактике. «Военная мысль», 2003, № 5, № 8, Հ. Մալախյան, Լեռնային տեղանքում մարտական գործողությունների վրա ազդող գործոնների հաշվառումը՝ որպես մարտական վարպետության ապահովման միջոց: «ՀԲ», 2009, հմ. 1–2:*

⁵ *Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի: Ե., 1961, էջ 101:*

⁶ Հ. *Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա: Ե. 1945, էջ 48:*

Ռևիզիայի երրորդ ճակատամարտում ապստամբած հայերը գրավել են ժամանակակից Իլիջա լեռնաշղթայի՝ Ամիդից (Դիարբեքիր) հյուսիս գտնվող լեռների հարավային զառիվայրի իշխող բարձունքները: Այստեղ պարսից զորքը կրել է ծանր պարտություն՝ համարյա ութ ամիս չկարողանալով վերականգնել իր մարտունակությունն ու կատարել Դարեհի հրամանը: Ռևիզիայի ստիպված են եղել դիմել նրա օգնությանը: Դարեհը պատասխանել է. «Սպասել ինձ Արմենիայում»: Սակայն ապստամբած արմենների ճնշման տակ Դադարշիջն իր պարսից զորքով փախել է Հայաստանից դեպի Ասորեստան և ապաստան գտել Իզալա լեռան վրա⁷:

Հայաստանը, շնորհիվ իր ֆիզիկաաշխարհագրական պայմանների, միշտ եղել է մի հսկայական միջնաբերդ, որն իշխել է շրջապատի վրա, իսկ մեր թվարկության 7-րդ դարում, կորցնելով անկախությունը, հայտնվում է քրիստոնեական և մահմեդական աշխարհների միջև: Լեռնաշխարհ մուտք գործելու համար ամենուրեք պետք է եղել կտրել-անցնել ծայրամասային լեռները, որոնց բարձրությունը 2500-4000 մետր է: Դրա համար կային մի քանի հարմար հովիտներ ու լեռնանցքներ, որոնցից էլ մշտապես օգտվել են Հայաստանի թշնամիները: Տեղանքի այս առանձնահատկության հաշվառմամբ դեռ Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանի սկզբներին, ըստ որոշ պատմաբանների՝ Արտաշես 1-ինի օրոք, Մեծ Հայքի չորս ծայրագավառներում ստեղծվել էին այդ մուտքերը պաշտպանող ռազմավարչական միավորներ՝ բղեշխություններ^{*}: Արշակունյաց Հայաստանում բղեշխություններ էին Աղձնիքը, Կորդուքը, Նոր Շիրականը և Գուգարքը, որտեղ այդ նպատակով պահվում էր մշտական զորք: Այդ զորքերը գտնվում էին բղեշխների հրամանատարության ներքո, որոնք նաև այդ նահանգների կառավարիչներն էին⁸: Շեշտելով բղեշխների դերը՝ Ազաթանգեղոսը գրում է. «Եւ ի գինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բղեշխսն կոչին. գառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և գերկորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և գերկորդն՝ յԱրուստան կողմանէն, զչորորդն՝ ի Մաաթթաց կողմանէն...»⁹:

Առաջին բղեշխությունն Աղձնիքն էր, որի բղեշխը՝ «Իշխանն Աղձնեաց»

Հարկ է նշել, որ մի շարք հեղինակավոր գիտնականներ (օրինակ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանը) դա անվերապահորեն չեն ընդունում՝ համարելով, որ պատմական ճակատամարտերի մի զգալի մասի տեղը ճշգրիտ որոշված չէ, ուստի աշխարհագրական գործոնի հաշվառման մասին դրույթը չի կարող հիմնավոր համարվել:


⁷ Տես նույն տեղում:

^{*} Արտաշեսյան Հայաստանը բաժանված էր երկու խոշոր մասերի՝ արտաքին և ներքին աշխարհների: Արտաքին աշխարհի նահանգները կոչվում էին բղեշխություններ, որոնք կիսանկախ էին և ավատառական կախում ունեին հայ թագավորներից: Դրանք հայտնի էին նաև որպես «կողմնակալություն» կամ «սահմանակալություն» (Թ. Հակոբյան, Նշ. աշխ., էջ 99):

⁸ Տես Նիկողայոս Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Ե., 1987, էջ 315–316:

⁹ «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց»: Քննական բնագիրը Գ. Տեր-Սյրուչյանի և Ս. Կանայանցի: Ե., 1983, էջ 484, 486:

կրում էր «Բղեշխն մեծ» տիտղոսը, քանի որ Աղձնիքը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ունեւ հույժ կարևոր ռազմավարական նշանակություն. այն բնական պատմեշ էր Միջնաշխարհի և Հայկական Տավրոսի լեռնանցքների համար: Աղձնիքում էր գտնվում կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող «Չորապահակ դուռ» լեռնանցքը: Հիմնական ռազմական ուժը մարտական աշխարհագրոն էր, որը կազմված էր Սասունի լեռնականներից: Աղձնիքի բղեշխն նստավայրը Արգան քաղաքն էր¹⁰:



Մեծ Հայքի թագավորության բղեշխությունները (III–IV դարեր)¹¹

Երկրորդ բղեշխությունը Կորդոքն էր: Այն պահպանում էր Հայաստանի թիկունքը Պարսկաստանի մաս կազմող Ադիաբենեի կողմից: Կորդոքի բղեշխության կենտրոնն էր Փինիկ բերդաքաղաքը՝ Տիգրիս գետի ափին: Այստեղ հայտնի էր նաև Տնորիք գավառի Ալկի հզոր բերդը, որից արևելք գտնվում էր Միջնաշխարհը պահպանող Կրերեաց լեռնանցքը¹²:

Երրորդ բղեշխությունը Նոր Շիրականի բղեշխությունն էր, որը պաշտպանում էր Հայաստանի մատույցներն Ատրպատականի կողմից՝ Արախս, կամ Երախս, սահմանային գետով, որը հարավ-արևմուտքից թափվում է Կասպուտան

¹⁰ Տեա նիկողայոս Աղոնց, Նշ. աշխ., էջ 255–256, 260:

¹¹ Քարտեզը կազմված է ըստ Բ. Հարությունյանի «Հայաստանի պատմության ատլասի»: Ե., 2004, էջ 104:

¹² Տեա նույն տեղում, էջ 257–260:

(Ուրմիա) լինը: Արասխ գետի ափին էր գտնվում ռազմավարական կարևորություն ունեցող Չարասա (այժմ Կելիշին) լեռնանցքը, իսկ մի փոքր հարավ գտնվում էր Ջինթա ամրոցը: Չարասայի լեռնանցքով էր անցնում Հյուսիսային Միջագետքից դեպի Կասպից ծովի ափեր տանող ճանապարհը: Նոր Շիրականի քաղաքական կենտրոնը Չարեհավան գավառն էր՝ համանուն քաղաքով, իսկ ռազմական կենտրոնը գտնվում էր Մահկերտ տուն գավառում՝ Մահկերտ կենտրոնով (ներկայիս Ռևանդուզի շրջանում)¹³:

Չորրորդ բղեշխությունը Գուգարքն էր՝ Մեծ Հայքի հյուսիս-արևելքում, որը Հյուսիսային Կովկասի վաչկատուն ցեղերի և լեռնականների ներխուժումներից պաշտպանում էր պետության հյուսիսային սահմանները: Գուգարք նահանգը տարածվում էր Ճորոխ գետից մինչև Կուր գետը: Գուգարաց բղեշխի նստավայրը Գաջենքն էր՝ Գաջենագետի (Մաշավերա) և Յուրտագետի միախառնման վայրում: Նա գահով երկրորդն էր՝ Աղձնիքի բղեշխից հետո: Գուգարքի ռազմավարական կարևոր լեռնանցք էր համարվում Թռեղքի «Վիմարուրք» լեռնանցքը¹⁴:

Պատմականորեն հայոց գորքը լավ է պատրաստվել հատկապես պաշտպանական մարտերին, դրա համար կառուցվել են բերդեր, ստեղծվել ամրություններ, հարմարեցվել է լեռնային տեղանքը: Պետական նշանակություն ունեցող բոլոր բերդերը, ամրությունները կառուցվել են գլխավորապես հաղորդակցության հիմնական ուղիների վրա: Նման կառույցներ են ստեղծվել նաև Հայաստանի սահմանային գոտիներում՝ օտարերկրյա զորքերի ներխուժումներին դիմագրավելու նպատակով: Ամրոցներ կառուցելիս հայերը աշխատել են ստեղծել այնպիսի պայմաններ, որ հնարավոր լինի հետևել թշնամու զորքի տեղաշարժին և ազդանշան տալ նրանց հայտնվելու կամ ձեռնարկվող գործողությունների մասին:

Օրինակ՝ մայրաքաղաք Երվանդաշատի բերդը գտնվում էր այն վայրում, որտեղ Ախուրյան գետը թափվում է Արաքսի մեջ: Այդ մայրաքաղաքի մասին Մովսես Խորենացին գրում է. «(Երվանդը) բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլուրի հատակը, գետի (մակերևույթին) հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով»¹⁵:

Հին Հայաստանի մայրաքաղաքներից էր Արտաշատը, որի կառուցման վայրը նույնպես թելադրված էր աշխարհագրությամբ. այն կառուցված է թերակղզու նման վայրում: Նրա շուրջը, չհաշված պարանոցը, գետի առջևով ձգվում է պարիսպը: Պարանոցը շրջապատված է խրավանդներով ու թամբերով: Փոսը լցված էր լինում ջրով, որը ծառայում էր որպես հարձակվող թշնամուց ջրային պատնեշ:

Հայաստանի պաշտպանական արվեստի պատմության մեջ կարևոր դեր է

¹³ Տես *Նիկողայոս Արմնց*, էջ 257–260, 264–265:

¹⁴ Տես նույն տեղում, էջ 255–256:

¹⁵ *Մովսես Խորենացի*, Նշ. աշխ., էջ 196:

կատարել Գառնի բերդը, որի վերականգնումը Տրդատ 1-ինն ավարտել է մ. թ. 72 թվականին: Գառնին եղել է Հայաստանի անմատչելի բերդերից մեկը: Այն կառուցված է ծովի մակերևույթից ավելի քան 1400 մետր բարձրության վրա՝ Գեղամա լեռների գառավայրում: Բերդի հարավային կողմում՝ Ազատ գետի կիրճում, վեր են խոյանում հսկայական ուղղաձիգ ժայռեր, որոնց բարձրությունը տեղ-տեղ հասնում է 150 մետրի: Հյուսիսային պարսպի երկարությամբ (170 մետր) կառուցվել են աշտարակներ՝ միմյանցից 10-12 մետր հեռավորությամբ: Աշտարակների այդպիսի խտությունը բացատրվում է երկու հանգամանքով: Առաջին. հյուսիսային կողմում չկան կիրճեր և ուղղաձիգ ժայռեր, իսկ դա հակառակորդին հնարավորություն էր տալիս բերդի վրա գրոհելու հենց այդ կողմից, և երկրորդ. Գառնի բերդը չի դասվել սովորական բերդերի շարքը, այլ եղել է «արքայական ամրոց», ուստի նրա պաշտպանությունը պետք է ապահովված լիներ ավելի ուժեղ պատվարներով: Հարավարևելյան և հարավային կողմերից բերդը ոչ մի պաշտպանական կառույց չի ունեցել, որովհետև ուղղաձիգ վեր բարձրացող հսկայական ժայռերը բնական արգելքների դեր են կատարել՝ ապահովելով թշնամու համար անմատչելիությունը¹⁶: Վերը նշված ճարտարապետական տարրերի նմանակներ կան նաև Հայաստանի այլ բերդերում, օրինակ, Ամբերդում, Կաթավաբերդում, Բաղաբերդում:

Այդպիսով՝ ամբողջ Հայաստանի տարածքում բնական և արհեստական արգելքների համատեղմամբ ամրացնելով և երկրի պաշտպանունակությունը:

Լինելով փոքրաթիվ՝ հայոց զորքը վարպետորեն հարմարվել է տեղանքին և, հմտորեն օգտագործելով մարտական զենքը, ոչ միայն մղել է պաշտպանական մարտեր, այլև անցել հակահարձակման:

Դեռ Երվանդյանների օրոք զորավարներն ստեղծել են առաջապահ ջոկատներ, առանձնացրել են թևերն ու թիկունքը պահպանող ջոկատներ: Մարտական գործողությունների թատերաբեմը և դրան համապատասխան մարտավարությունն ընտրելուց հետո զորքը ամրացրել ու հարմարեցրել է տեղանքը՝ փորել խրամատներ կամ օգտագործել փոսերը, ժայռերը, մեծ ապառաժները, ծառերը և այլն: Գիշերային պայմաններում կամ մառախլապատ ցերեկով երթի ժամանակ զորքը շարժվել է լուռ, տեղեկությունները հաղորդվել են շշուկով, հեծելապարեկները շարժվել են մեկը մյուսից փոքր հեռավորության վրա, որպեսզի հեշտացնեն նոր տեղեկությունների հաղորդումը¹⁷:

Որպես լեռնային տեղանքի լավագույն կիրառման ևս մեկ օրինակ կարելի է նշել 481 թ. Ակոռիի ճակատամարտը, որը տեղի է ունեցել հայ ապստամբական ուժերի և պարսից զորքի միջև՝ Մասիսի լանջին գտնվող Ակոռի գյուղի մոտ: Արևելյան Հայաստանի պարսիկ մարզպան Ատրվշնասպը 481 թ. աշնանը 7000 հոգանոց խառնիճադանջ բանակով Ատրպատականից շարժվել է ապստամբների դեմ: 400 հոգուց կազմված հայկական մի ջոկատ՝ Վասակ Մամիկոնյանի, Բաբկեն Սյունու և այլ իշխանների գլխավորությամբ, Դվինից շտապել է դեպի

¹⁶ Տես *В. Н. Аракелян. Гарни*, т. 1. Е., 1951, с. 3:

¹⁷ Տես *Ս. Մարգարյան*, Հայ ռազմական արվեստի պատմություն: Ե., 1969, էջ 19:

Արաքս՝ Նախիջևանի մոտ թշնամու գետանցին խանգարելու նպատակով: Սակայն մինչև հայերի տեղ հասնելը պարսից զորքն անցել է գետը և ամրացել Կովակ գյուղում: Հայերը, հետախուզելով թշնամու դիրքերը, որոշել են հեռանալ դաշտավայրից ու ճակատամարտ տալ լեռնային տեղանքում: Հայկական ջոկատը դիրքավորվել է Ակոռի գյուղի մոտ, որտեղ իր թիկունքը լեռան կողմից ապահով էր, ապա հանկարծակի հարձակվել է իրեն հետապնդող պարսիկների վրա: Չդիմանալով գրոհին՝ պարսիկները խուճապահար փախուստի են դիմել՝ կրելով մեծ կորուստներ¹⁸:

Որպես պաշտպանական ամրաշինական կառույցներ հայ ժողովուրդը օգտագործել է նաև բնական քարանձավները, այդ թվում՝ հարմար տեղանքում կառուցել ժայռափոր բնակավայրեր: Ասվածի վառ ապացույցներից են Չանգեգուրի մի շարք բնակավայրեր՝ Խնձորեսկը, Տեղը և այլն¹⁹:

Տեղանքի գերազանց իմացության, դրա առանձնահատկություններն ի նպաստ ռազմական գործողությունների հաջողության կիրառելու բազմաթիվ փայլուն օրինակներ են տվել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների Արևմտյան Հայաստանում ազգային ազատագրական պայքարի նվիրյալները, որոնք հերոսաբար դիմակայել են թվապես մի քանի անգամ գերազանցող կանոնավոր զորքին: 20-րդ դարի վերջին այդ հերոսների սերունդները տվյալ հմտություններն ու գիտելիքները կիրառեցին ԼՂՀ անկախությունը պաշտպանելիս: Արցախյան գոյամարտում մույնպես հայ ժողովրդի հրամանատարները իրենց զորավարական տաղանդի շնորհիվ կարողացան ուժերի ու միջոցների սակավությունը համակշռել տեղանքի և պայմանների հմուտ օգտագործմամբ, ինչի բազմաթիվ փայլուն օրինակներից բավական է նշել Շուշիի (1992 թ. մայիս) և Քարվաճառի (1993-1994 թթ.) օպերացիաները:

Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական փորձը, ճակատագիրը, Հայաստանի բարդ աշխարհագրական դիրքը և հարևան երկրների մշտական տարածքային նկրտումները՝ արդեն 20-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի ականավոր զավակներից մեկը՝ Նժդեհը, կարևորել է ռազմարվեստին, ռազմական գիտելիքներին տիրապետելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ աշխարհագրական առանձնահատկությունները²⁰: Ահա թե ինչպես է նա դիմում Կապան-Տաթևի ճակատի զինվորներին. «Յոթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին, նա է տերը Չանգեգուրի»²¹:

Հատկապես ուշագրավ է Նժդեհի կողմից կիրառված «գրոհող ժայռեր» կոչվող մարտավարական հնարը, որի շնորհիվ նա, օգտագործելով ռելիեֆի

¹⁸ Տես «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տըր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան: Տփղիս, 1904, էջ 133:

¹⁹ Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5: Ե., 1979, էջ 62-63:

²⁰ Տես Վ. Կ. Աթոյան, Նժդեհի՝ մարտի վարման տեսության արդիականությունը: «ՀԲ», 2010, հմ. 2:

²¹ Գ. Նժդեհ, Խուստուփյան կանչեր, Ջորաշարքային կանոնադրություն: Ե., 1992, էջ 11:

առանձնահատկությունները, առավելության էր հասնում հակառակորդի գերակշիռ ուժերի նկատմամբ: Կանխատեսելով հակառակորդի գրոհի ուղղությունները՝ Նժդեհը հրամայում էր իր և թշնամու միջև գտնվող բարձունքներում՝ ժայռերի տակ, մեծ քանակությամբ պայթուցիկ տեղադրել: Հակառակորդի գրոհը դեռ չսկսված՝ դրանք պայթեցվում էին՝ առաջ բերելով, Նժդեհի խոսքով, «քարե կարկուտ» և ծխի ու փոշու ամպերով պատելով ձորերը: Դա հնարավորություն էր տալիս կանխելու հակառակորդի կազմակերպած գրոհը՝ խուճապ տարածելով նրա շարքերում: Մտանալով հոգեբանական առավելություն՝ Նժդեհի զինակիցները դիմում էին գրոհի և պարտության մատնում անակնկալի եկած թշնամուն²²:

Այսօր էլ անհնար կլինի ՀՀ ռազմավարական պաշտպանությունը պլանավորելիս չհենվել աշխարհագրական տվյալների և աշխարհագրական գործիքների վրա: Եթե երկիրը մեծ տարածք և ռեսուրսներ ունի, ապա պաշտպանություն կազմակերպելը համեմատաբար դյուրին է, իսկ եթե տարածքը փոքր է, ապա անհրաժեշտ է այն լիովին օգտագործել և տնտեսության տարածքային կառուցվածքը նմանեցնել մեղվի փեթակի բջիջներին, որտեղ, անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր բջիջ պետք է օժտված լինի առանձին գործելու կարողությամբ:

Հայաստանի Հանրապետության նման փոքր տարածք ունեցող պետությունների համար նման մոդելով տարածքային պաշտպանության համակարգի ստեղծումն ունի ավելի մեծ կարևորություն, քանի որ նրանք չունեն ռազմաճակատի բավարար խորություն և ռազմավարական թիկունք: Այս խնդրի լուծման տարբերակներից մեկը ներկայացված է գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի «Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով» հոդվածում²³: Հոդվածի հիմնական էությունն այն է, որ տարածքային պաշտպանությունը նպատակահարմար է կազմակերպել հավանական հակառակորդի հնարավոր հարձակման գլխավոր ուղղություններում ռազմականացված բնակավայրերի (կիրուցների) ստեղծմամբ:

Ռազմականացված բնակավայրեր ստեղծվում են տարածքային-գոտիական սկզբունքով՝ հակառակորդի հարձակման դեպքում տարածքային պաշտպանությունը ապահովելու նպատակով: Դրանք ունենում են մարտաբեմի անկախ ներքին օպերատիվ սարքավորում, գորահավաքային ռեսուրսներ, մարտը վարելու միջոցներ, կարող են կազմակերպված ձևով հակահարված հասցնել հակառակորդին՝ հիմնական ուժերին հնարավորություն տալով ռազմական գործողությունների վայր հասնելու, վերադասավորվելու, ապա համատեղ գործողություններ վարելու:

Ներկայումս Արցախում հայկական հենակետերը ադրբեջանական դիրքերի նկատմամբ հիմնականում գերիշխում են՝ ունենալով ավելի մեծ հարաբերական

²² Տես Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1: Ե., 2002, էջ 40:

²³ Տես Հ. Քոթանջյան, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «ՀԲ», 2009, հմ. 3:

բարձրություն, ինչը նույնպես վկայում է, որ հայկական ռազմարվեստը բարձր մակարդակի է: Դա է այն հիմնական պատճառներից մեկը, որ մեր արևելյան հարևանը խուսափում է ռազմական գործողությունների վերսկսումից: Դրա մասին բազմիցս խոսել են տարբեր զինվորականներ և քաղաքագետներ: Այսպես, 2010 թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանում ԱՄՆ-ի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ռոս Վիլսոնը ԱՄՆ-ի Ջորջթաունի համալսարանում ելույթի ժամանակ հայտարարել է. «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ուժային ճանապարհով լուծելու Ադրբեջանի ցանկացած փորձ ... լրջորեն կհարվածի Ադրբեջանի տարածաշրջանային շահերին: ... Ընդհանրապես չեմ կարծում, թե ռազմական գործողությունները հաջողություն կունենան: Ադրբեջանը չափազանց բարդ աշխարհագրություն ունի. հայերը բարձրադիր գտնում են: Ռազմական բյուջեի ավելացումը դեռ խնդրի լուծում չէ»²³:

Այսպիսով՝ աշխարհագրական գործոնների ճիշտ հաշվառմամբ ձեռք բերված հաղթանակները շատ ուսանելի են, դրանք այսօր էլ չեն կորցրել իրենց կիրառական նշանակությունը և կարող են նպաստել մարտական գործողությունների արդյունավետության մեծացմանը:

²³ ««Հայոց աշխարհ»». Ադրբեջանը չի կարող ռազմական ճանապարհով լուծել ղարաբաղյան հակամարտությունը», 01.12.2010 (<http://news.am/arm/news/39970.html>):

ВОЕННАЯ ГЕОГРАФИЯ

РОЛЬ ГЕОГРАФИЧЕСКОГО ФАКТОРА В ИСТОРИИ ВОЕННОГО ИСКУССТВА АРМЕНИИ

*А. Я. САЯДЯН, полковник, кандидат географических наук,
заместитель командира войсковой части*

РЕЗЮМЕ

Изучение истории военного искусства показывает, что при ведении боевых действий важное значение имел учет географических факторов. Армянскому нагорью присущи специфические особенности рельефа, как то: сильная изрезанность с наличием трудно преодолимых гор, глубоких каньонов, горных рек с сезонным гидрорежимом, вертикальная зональность, многообразии ландшафтов и мега-, мезо- и микроособенностями географического положения, которые существенно затрудняют ведение наступательных боевых действий с применением крупных сил, сконцентрированных на одном направлении. При этом центральная часть Армянского нагорья, с древнейших времен являющаяся ядром государственного образования армянского народа, представляет собой природную цитадель с ограниченным доступом извне. С учетом данной особенности и возможных маршрутов войск вероятного противника еще при династии Арташесидов

(II в. до н. э. – I в. н. э.) на окраинах Великой Армении были созданы четыре окраинные военно-административные единицы, так называемые «бдешхутюн», защищавшие от нашествия врага пути возможного проникновения врага (так называемые «дур»-ы – «ворота») и, соответственно, центральные провинции.

В трудах греческих, римских и армянских историографов древних времен и раннего средневековья представлены описания крепостей и битв, свидетельствующие об умении армян использовать природные условия в целях достижения военного успеха.

Необходимость учета географических условий не потеряла своей актуальности и при ведении современных боевых действий и планировании военных кампаний и операций. С учетом географических особенностей местности строится и система территориальной обороны, представляющей особую важность для государств, не имеющих достаточной глубины стратегического тыла.

MILITARY GEOGRAPHY

THE ROLE OF THE GEOGRAPHIC FACTOR IN THE HISTORY OF ARMENIAN MILITARY ART

*A. Y. SAYADYAN, Colonel, PhD in Geography,
Deputy Commander of the Military Unit*

SUMMARY

The study of the history of military art shows that in waging warfare the inclusion of geographical factors was of great importance. The Armenian plateau is characterized by specific topographic features, such as: severe irregularity with insurmountable mountains, deep canyons, mountain rivers with a seasonal hydrological regime, vertical zoning, diversity of landscapes and mega-, mezzo- and micro-peculiarities of the geographical location which largely complicate the conduct of offensive combat operations with the use of large forces concentrated in one direction. Meanwhile, the central part of the Armenian plateau, having been the kernel of state-building of the Armenian people since ancient times, is a natural fortress with limited access from the outside. In view of these features and possible routes of potential enemy forces still under the Artashesid dynasty (2nd century B.C. – 1st century A.D.) on the outskirts of Greater Armenia four outlying military-administrative units the so-called «bdeshkhutyun» and, accordingly, the central provinces were established defending against an enemy invasion the ways of possible penetration by the enemy (the so-called «door»-s - the «gates»).

The works by Greek, Roman and Armenian historiographers of ancient times and the early Middle Ages provide descriptions of forts and battles being evidence of Armenians' ability to use the natural conditions in order to achieve military success.

The need to consider geographic conditions has not lost its relevance also in the conduct of modern warfare and the planning of military campaigns and operations. Taking into account the geographic terrain the territorial defense system is built which is of special importance to the states not having enough depth of strategic rear.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

*Ա. Ս. ԲԵԳԼԱՐՅԱՆ, Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի
րեդեկլարավական անվտանգության և ռազմավարական վերլուծությունների
վարչության աշխատող*



ՀՀ ռազմական դոկտրինում որպես ՉՈՒ-ի մարտունակության ապահովման գրավականներից մեկը կարևորվում է անձնակազմի բարձր մակարդակի բարոյահոգեբանական պատրաստությունը¹: Այս հանգամանքը արդիական է դարձնում անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման համար զինվորական հոգեբանի հաստատության կայացման խնդիրը՝ այդ ոլորտում ՀՀ-ում տիրող իրավիճակի² և միջազգային փորձագետների հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությամբ և համապատասխան առաջարկությունների մշակմամբ:

ՉՈՒ-ի անձնակազմի անհրաժեշտ բարոյահոգեբանական վիճակի ապահովման, մասնավորապես՝ զինվորականների սոցիալ-հոգեբանական, ռազմահոգեբանական և այլ խնդիրներ առավել խորը և բազմակողմանիորեն ներկայացնելու համար կարևոր է հիմնվել զինվորական հոգեբանության ամենարդիական նվաճումների վրա, որոնք հատկապես ակնառու էին 20-րդ դարում՝ Եվրոպայում

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4, էջ 34:

² Տես «Խոշտանգում և վատ վերաբերմունք»: «Հելսինկյան ասոցիացիայի 2010 թ. զեկույցը Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի մասին», հ. 1: Ե., 2011, 59–71 (http://www.hahr.am/files/report2011_1.pdf), «Տեղեկանք զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին»: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ: Վանաձոր, 2010 (http://www.hcav.am/attachments_/a7d2b_%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84%20%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE%20%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%20%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%AB%20%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6.pdf), «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի ուղերձը» (<http://www.mil.am/files/S.Ohanyan-arm.pdf>), «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի ուղերձը» (<http://www.mil.am/files/A.Baghdasaryan-arm.pdf>), «Պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015» (Հանրային օգտագործման համար) (<http://www.mil.am/files/SDR-Arm.pdf>) և այլն:

(Գերմանիայում) և ԱՄՆ-ում: ԱՄՆ-ում դեռ 20-րդ դարի սկզբին հոգեբանները կարողացան համոզել զինվորական վերնախավին, որ անհրաժեշտ է հոգեբանական գիտափորձեր կատարել զորամասերում³: Որպես արդյունք՝ ամերիկյան բանակի զինծառայողները առաջին համաշխարհային պատերազմի ճակատամարտերում դրսևորեցին բարձր մարտական ոգի: Ներկայումս ԱՄՆ-ում գործում են հոգեբանությամբ զբաղվող մոտ 400 հազար մասնագետներ և մեծ թվով կազմակերպություններ, որոնք կատարում են նաև ռազմահոգեբանական հետազոտություններ: Դրանցից 80-ը փաստացի մտնում են ՁՈՒ-ի կառուցվածքի մեջ, իսկ մոտ 100 գիտահետազոտական կենտրոններ, տասնյակ համալսարաններ, մասնավոր հետազոտական կազմակերպություններ, մասնագիտացված հիվանդանոցներ ու լաբորատորիաներ գործում են Պենտագոնի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում: ԱՄՆ-ի ՁՈՒ-ի կազմում աշխատում են 8000 դիպլոմավորված հոգեբաններ (5000 զինվորական և 3000 քաղաքացիական): Ամեն տարի ծառայության են անցնում նվազագույնը 800 մասնագետ⁴:

Վերջին տարիներին ռազմահոգեբանական հետազոտությունների ակտիվացում է նկատվում նաև Ռուսաստանում և այլ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Այդ հետազոտությունները վերաբերում են զինվորական հոգեբանության առարկային և զինվորական կոլեկտիվներում հոգեբանական երևույթների ուսումնասիրման մեթոդներին՝ հետազոտության առարկա դարձնելով մարտի հոգեբանությունը, զինծառայողների պատրաստումը պատերազմին, նախազորակոչային տարիքի պատանիների սոցիալականացման հարցերը և բանակային կյանքին նրանց հարմարման խնդիրները, սպայակազմի հմտություններին ու կադրերի ընտրությանը վերաբերող հարցերը և այլն:

Ռ-ի ՁՈՒ-ում այսօր ներդրված է հոգեբանական միջոցառումների ամբողջական համակարգ՝ հոգեբանական տեսակետից ուղղված ուսումնական, ծառայողական և մարտական խնդիրների լուծմանը, որոնք որակվում են որպես «ռազմական գործունեության հոգեբանական ապահովում»: Թեև հոգեբանական ապահովման գործին մասնակցում են բազմաթիվ բարձր պաշտոններ զբաղեցնող զինվորականներ (հրամանատարներ, շտաբների պետեր, բժիշկներ և այլն), այդուհանդերձ, այդ հարցում հիմնական ծանրությունը կրում են զինվորական հոգեբանները: Ռուսաստանի ՁՈՒ-ում կա զինվորական հոգեբանի մոտ 2000 հաստիք⁵:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզանում զինվորական հոգեբանության բնագավառի զարգացմանը նպաստում են վերջին տարիներին հրատարակված մի շարք հայրենական գիտական աշխատություններ, այդ թվում՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում հրատարակված բազմաթիվ

³ Տես Նորման Լոուիլինդ, Հոգեբանությունը և զինվորը: Ե., 2007, էջ 7–11:

⁴ Տես Ք. Աբդուրախմանով և ծր. *Современные тенденции развития зарубежной военной психологии (на примере США)*. «Военная психология: методология, теория, практика». Учебно-методическое пособие. М., 1996 (<http://psy-lib.org.ua/urist/7-voen.html>):

⁵ Տես *А. Караяни*. Военный психолог. Хочу бить им... (<http://www.psynavigator.ru/articles.php?code=83>):

գիտական հոդվածները: Նաև սկսել են լուրջ կերպով քննարկվել ՁՈՒ-ում հոգեբանի հաստատության զարգացման հարցերը: Մեկ տարի առաջ ՀՀ Պաշտպանության նախարարի հրահանգով որոշ զորամասեր համալրվել են զինվորական հոգեբաններով⁶: Հարկ է նշել, որ այս հաստատության կարևորությունը ՀՀ-ում դեռևս գիտակցվում է ոչ պատշաճ մակարդակով: Մեծ է թերահավատությունը զինծառայողների շրջանում: Խաղաղ պայմաններում զինծառայողների համախմբման, զինվորական կոլեկտիվի ձևավորման գործընթացները պահանջում են զինվորական գործի նկատմամբ արհեստավարժ մոտեցում՝ այն բոլոր հոգեբանական գործոնների հաշվառմամբ, որոնք անուղղակի կերպով կարող են խոչընդոտել զինծառայողների ռազմատուսմանական պարապմունքների անցկացմանը, նրանց մասնագիտական գործունեությանը: Եվ քանի որ բանակը համալրվում է սոցիալական բոլոր շերտերի հաշվին, պետք է սպասել, որ զորակոչիկները իրենց հետ բանակ կարող են բերել այն բոլոր ոչ ցանկալի դրսևորումները, որոնք նկատվում են քաղաքացիական բնակչության համապատասխան շերտերում⁷: Այդ հիմնախնդիրներից բացի, բանակում առկա են զուտ իրեն և համընդհանրական հաստատություններին հատուկ պրոբլեմներ, որոնք կարող են վտանգել ՁՈՒ-ի մարտունակությունը: Չինվորականների սոցիալ-հոգեբանական պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը կարող է ներառել միայն ստանդարտ իրավիճակները և առաջարկել դրանց լուծման ստանդարտ տեխնոլոգիաներ: Սակայն բարդ իրավիճակներում պահանջվում է անհատական մոտեցում: ՈՒստի գորքերի մարտունակության պահպանման, զինվորական ստորաբաժանումներում բարոյահոգեբանական բարեհաջող մթնոլորտի ձևավորման և կանոնադրական հարաբերությունների պահպանման առումով հույժ կարևոր են զինծառայողների հոգեվիճակների խոր ուսումնասիրությունն ու կառավարումը:

Այդ համատեքստում կարևոր են ինչպես սոցիալ-հոգեբանական ու տեղեկութահոգեբանական աշխատանքի կազմակերպումը, այնպես էլ դրանց արգասաբերության ապահովման համար փոխկապված բնույթի միջոցառումների իրականացմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ստեղծման խնդիրը, ինչը հնարավորություն կտա՝

- համարժեք կերպով հակազդելու հավանական հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը,
- պահպանելու անձնակազմի բարձր մակարդակի բարոյահոգեբանական վիճակը:

Ընդամին պետք է առաջնորդվել այն նկատառումով, որ ժամանակակից պատերազմը ոչ միայն զինված բախում է, այլև բարոյական ոգու, հայացքների, սկզբունքների պայքար: ՈՒստի կարևոր գործոն է հասարակական գիտակցութ-

⁶ Տես *Օֆիլյա Կամավոյան*, Չինվորն է բանակի հերոսը: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 27.01.2011 (http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20110127_12&flag=am):

⁷ Տես *Արդակ Խաչատրյան*, Սոցիալական աշխատանքի ինստիտուտը և բանակի սոցիալական պաշտպանության համակարգը: Սոցիոլոգիայի ֆակուլտետի տարեգիրք: Ե., 2009, էջ 115–118:

յան ոլորտում հաղթանակի ձեռքբերումը, այսինքն՝ հակառակորդի խմբային գիտակցության վրա ներգործության միջոցով յուրային կամքի պարտադրումն է նրա հասարակության, այդ թվում՝ ԶՈՒ-ի անձնակազմի, գիտակցության կառավարման նպատակով: Մասնավորապես՝ ժամանակակից պայմաններում, երբ տեղեկատվությունը և դրա կառավարման միջոցները դառնում են հաղթանակի ինքնուրույն գործոն, առանձին մարդկանց և զորամասերի հոգեբանական հնարավորությունների վրա ազդեցության դերն զգալիորեն մեծանում է⁸:

Չորքի պատշաճ բարոյական վիճակը և մարտական ոգին այն միջոցներն են, որոնք կարող են պարտությունը վերափոխել հաղթանակի⁹: Բանակը պարտված չէ այնքան ժամանակ, քանի դեռ այն չի տոգորվել պարտության գիտակցությամբ: Հարավկովկասյան տարածաշրջանում տիրող բարդ ռազմաքաղաքական իրավիճակի հաշվառմամբ, հատկապես՝ այն հանգամանքի, որ Ադրբեյջանը Հայաստանի դեմ վարում է լայնամասշտաբ տեղեկության պատերազմ, անհրաժեշտ է մշտապես ուշադրության կենտրոնում պահել հոգեբանական գործոնները, որոնք հզոր քաղաքական ու դիվանագիտական զենք են¹⁰:

Բացի այդ, այսօր Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի իրավիճակում, որը բնորոշվում է որպես «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն», և Ադրբեյջանի դեկավարության ռազմատենչ հայտարարություններն ու սանձազերծած սպառազինությունների մրցավազքը, զինադադարի հաճախակի խախտումները վկայում են, որ պատերազմը կարող է ցանկացած պահի վերսկսվել, ինչը մեր զինծառայողներից պահանջում է մարտական վարպետության հարաճուն կատարելագործում, բարձր մարտական ոգու և զգոնության պահպանում, հակառակորդի հարձակմանը հուժկու՝ նրան անընդունելի վնասներ պատճառելով հակահարված տալուն մշտական պատրաստություն: Նման իրավիճակում ստրեսսածին ներգործություններից պաշտպանվելու համար զինծառայողներին, մասնագիտական գիտելիքներից բացի, անհրաժեշտ են հոգեբանական աջակցություն, իրադրությանը հարմարվելու հոգեբանական կարողություն և համապատասխան հոգեբանական գիտելիքներ¹¹:

Որքան էլ ձևի առումով տարբեր լինեն բոլոր ժամանակների ու ժողովուրդների մարտերը, պայքարի գաղափարը մնում է նույնը. կռվող կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ուժի կիրառման միջոցով իր կամքին ենթարկելու հակառակորդին: Ռուս հայտնի ռազմագետ, պրոֆեսոր գեներալ Ն. Գոլովինը «Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկություն-

⁸ Տես Վ. Հ. *Մարզաբյան*, Մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հարաբերակցության հարցի շուրջ: «ՀԲ», 2010, հմ. 4:

⁹ Տես *Միխայիլ Արաջանյան*, Տեղեկատվական-հոգեբանական մշակումներ ռազմաքաղաքական նպատակների համար, 13.12.2007 (http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2258):

¹⁰ Տես Վ. Հ. *Մարզաբյան*, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 243:

¹¹ Տես Չ. *Ասպրյան*, Մարտական գործողությունների ժամանակ առաջացած ստրեսները, դրանց նախանշանները և հետևանքները: «Հոգեբանություն և կյանք», 2001, հմ. 1:

ների հետազոտություն» աշխատության մեջ, հենվելով հանրահայտ ամերիկացի գիտնական ՌԻ. Ջեմսի «Հոգեբանություն» հիմնարար աշխատության վրա, առանձնացնում է մարտում երկու գերակա հոգեբանական գործոնների՝ «հաղթելու ձգտման» և «ինքնապահպանման բնագրի» պայքարը, որոնք մարտիկների մշտական ուղեկիցներն են: Մարտին բնորոշ վտանգը հատուկ պայմաններ է ստեղծում մարտիկի հոգեկան գործունեության համար. որքան ուժեղ է վտանգի ներգործությունը, այնքան մեծ է ինքնապահպանման բնագրի ազդեցությամբ մարտից խուսափելու ձգտումը: Միայն հաղթանակի ոգին է համախմբում մարտիկներին հայրենիքին անձնագոհաբար ծառայելու գաղափարի շուրջ: ՌԻստի զինվորի հաղթական ոգին բարձր պահելու համար անհրաժեշտ է ամենօրյա աշխատանք, որպեսզի նա արդեն ենթագիտակցաբար՝ հուզականի մակարդակում, կարողանա հաղթահարել մարտադաշտում հանդիպող վտանգները:

Ն. Գոլովինը առանձնացնում է խաղաղ պայմաններում մարտիկի պատրաստման հետևյալ խնդիրները.

«1. մարտիկի մեջ այնպիսի հատկությունների պատրաստում, որոնք կարողանալին օգնել նրան ինքնապահպանման բնագրի դեմ պայքարում.

ա) համերաշխության ամրապնդման համար՝ կարգապահություն, սեր զորամասի նկատմամբ, ընկերություն զինվորական պատիվ և այլն,

բ) ինքնուրույն գործունեության ունակություն,

գ) մարտիկի մեջ վտանգին ընտելացման և հնարամտության սերմանում,

2. մարտում մարդու գործունեության համար անհրաժեշտ ամեն ինչի այնքան հաստատուն յուրացում, որ մարտիկը ճակատամարտում կարողանար իր աշխատանքը կատարել անգամ դատողության նվազման դեպքում, այսինքն՝ ավտոմատիկորեն:

Այս բոլոր խնդիրները կարող են կատարվել միայն դաստիարակությամբ: ՌԻստի կարելի է ասել, որ զինվորական մարդը պետք է լինի ամենից առաջ ռազմականորեն դաստիարակված»¹²:

Քանի որ ներկայումս սպառնալից շրջան կան չի լինում, կան էլ լինում է շատ կարճատև¹³, իսկ պատերազմական շրջանում հնարավոր չէ լիարժեք կերպով ծավալել բարոյահոգեբանական ապահովման աշխատանքները, ապա վերը նշված սկզբունքները պետք է ամբողջությամբ իրագործվեն խաղաղ շրջանում: Մասնավորապես՝ հույժ կարևոր է մեր զինծառայողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի փառավոր անցյալին, ռազմական ավանդույթներին, սերմանել հպարտություն նախնիների արիությամբ և տոկունությամբ¹⁴:

Խաղաղ շրջանում զինվորական կուլեկտիվներում ծագում են տարաբնույթ

¹² Ն. Ն. Գոլովին, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1998, հմ 1:

¹³ Տես Յու. Գ. Խաչատրյուով, Պաշտպանությանը պետության և նրա Ձինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2009, հմ. 3:

¹⁴ Այս մասին ավելի հանգամանորեն տես նաև Հ. Ս. Էնթանջյան, Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո: «ՀԲ», 2009, հմ. 1-2:

հոգեբանական խնդիրներ: Այսպես, զինվորական հոգեբանության բնագավառի տարբեր երկրների մասնագետների, հետազոտողների աշխատություններում նշվում է, որ բանակը հասարակության սոցիալական հաստատություններից մեկն է, և բանակային կյանքը ծառայողների համար պարունակում է բազմաթիվ ռիսկեր: Բանակն իր բնույթով համընդհանրական հաստատություն է, իսկ ձևական հաստատությունները մեծ ընդհանրության են հասնում շնորհիվ ձևական նորմերի: Այդ տեսանկյունից զորակոչիկների մուտքը բանակ ենթադրում է պետության մյուս քաղաքացիներից նրա առանձնացում՝ ըստ որոշակի արտաքին հատկանիշների:

Կարևոր խնդիր է զորակոչիկների արագ հարմարումը բանակային կենսակերպին: Այդ հարմարումը հեշտացնելու համար անհրաժեշտ է ցուցաբերել համապատասխան հոգեբանական աջակցություն, քանի որ հոգեբանական խնդիրները չհաղթահարվելու դեպքում զորամասում ի հայտ են գալիս միջանձնային հարաբերություններում լարվածություն, բարդ հոգեվիճակներ, ինչը բացասական ազդեցություն է գործում ՉՈՒ-ի մարտունակության մակարդակի վրա: Անհրաժեշտություն է առաջանում նաև հեշտացնելու զինվորական սոցիալականացումը, հարթելու կամ թուլացնելու ներանձնային ու միջանձնային, ներխմբային և միջխմբային գծությունները: Հույժ կարևոր է կոլեկտիվում ձևավորել ընդհանուր շահի գիտակցումը, քանի որ մարտում հաղթանակի հասնելու համար հաճախ պահանջվում է իրեն զոհաբերելու, այսինքն՝ հանուն կոլեկտիվ շահերի իր անձնական շահերից հրաժարվելու, պատրաստակամություն:

ՀՀ-ում վերջին մի քանի տարիների զորակոչին վերաբերող տվյալների վերլուծության համաձայն՝ կա ոչ բարեհաջող ընտանիքներում դաստիարակված նորակոչիկների թվաքանակի աճման միտում, այսինքն՝ որոշ ընտանիքներում առկա են սոցիալ-կենցաղային խնդիրներ, և բավարար ուշադրություն չի հատկացվում երեխաների դաստիարակությանը: Նման երիտասարդները, զորակոչվելով բանակ, մի շարք բացասական սոցիալ-հոգեբանական երևույթների առաջացման պատճառ են դառնում¹⁵: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե որքանով է կարևոր հոգեբանի հաստիքը ՉՈՒ-ում սոցիալ-հոգեբանական երևույթների ու պրոցեսների մշտազննման և դինամիկայի գնահատման, անձնակազմի յուրաքանչյուր անդամի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառման, ոչ կանոնադրական հարաբերությունների հանգեցնող պատճառների ու պայմանների հայտնաբերման և դրանց պատեհաժամ կարգավորմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման տեսանկյունից¹⁶:

Թեև արդեն ներդրված է զինվորական հոգեբանի հաստատությունը ՀՀ ՉՈՒ-ում, այդուհանդերձ կան խնդիրներ՝ կապված առկա հաստիքները որակյալ մասնագետներով համալրելու հետ: Ներկայումս զինվորական հոգեբանների պատրաստումը կազմակերպված է Խ. Աբովյանի անվան հայկական պետական

¹⁵ Տես Վ. Հ. Մարգարյան, Հ. Ա. Մարտիրոսյան, Զինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական պատճառները: «ՀԲ», 2010, հմ. 2:

¹⁶ Տես նույն տեղում:

մանկավարժական համալսարանի «Հոգեբանություն և սոցիալական մանկավարժություն» ֆակուլտետում: Այստեղ զինվորական հոգեբանների պատրաստման գործընթացն ուղղված է այն բանին, որ նրանք գործերում կարողանան հստակորեն կատարել իրենց մասնագիտական գործառնությունները, մասնավորապես՝

- պարզել անձնակազմի յուրաքանչյուր անդամի հոգեբանական հատկությունները,
- ուսումնասիրել և վերլուծել ստորաբաժանումներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական երևույթները,
- մշակել գործնական առաջարկություններ՝ ուղղված զինվորական կարգապահության ամրապնդմանը և իրավախախտումների կանխմանը,
- հոգեբանական օգնություն ցույց տալ նյարդահոգեկան անկայունության հատկանիշներ ունեցող զինծառայողներին,
- հոգեբանական առումով մասնակցել անձնակազմի մասնագիտական ընտրագատմանը,
- հոգեբանական օգնություն ցույց տալ զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին,
- մեթոդապես ապահովել սպաների, ենթասպաների, սերժանտների հետ անցկացվող հոգեբանամանկավարժական պարապմունքները,
- կազմակերպել միջոցառումներ՝ ուղղված անձնակազմի պաշտպանությանը հավանական հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից, և այլն¹⁷:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ այսօր զարգացած բանակ ունեցող պետություններում հոգեբանական աշխատանքը կարևոր գործընթաց է: Եվ ըստ այդմ՝ ՀՀ ՁՈՒ-ում հոգեբանի հաստատության զարգացման հարցերը բավականին արդիական են: Վերջին շրջանում ՀՀ ՁՈՒ-ում տեղի ունեցող որոշ բացասական միջադեպերի հաշվառմամբ անհրաժեշտ է թվում զինվորական հոգեբանի հաստատության զարգացման նկատմամբ՝ հաստատութենական ու հայեցակարգային մոտեցման ցուցաբերումը: Մասնավորապես՝ առաջարկում ենք միայն պարտադիր զինվորական ծառայություն անցած, բանակային կյանքին «ներսից» ծանոթ մասնագետ հոգեբաններից ձևավորել աշխատանքային խումբ, որը մշակի զինվորական հոգեբանի հաստատության զարգացման պետական ծրագիր: Աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում հոգեբանական գիտության տեսանկյունից քննարկման առարկա պետք է լինեն զինծառայողների հոգեվիճակների, գորքերի մարտական պատրաստվածության, մարտունակության, զինվորական ստորաբաժանումներում բարոյահոգեբանական մթնոլորտի ուսումնասիրության և համապատասխան ծրագրերի մշակման հարցերը: Կարծում ենք, որ ճիշտ կլինե՞ր նաև Մանկավարժական համալսարանում զինվորական հոգեբանների պատրաստման համար ընտրությունը կատարել միայն պարտադիր զինվորական ծառայություն անցած երիտասարդների շրջանից:

¹⁷ Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը, էջ 16:

Պետք է նկատի ունենալ, որ բանակը ոչ միայն զինված մարդկանց հանրույթ է, այլ առաջին հերթին միևնույն գաղափարի շուրջ համախմբվածների միասնություն. այն է՝ նույն նպատակներին ծառայող, նույն իդեալներին նվիրված, արժանապատվության նույն ակունքներից սնվող անձանց կուռ միասնություն¹⁸: Հետևաբար անհրաժեշտ է ապահովել բոլոր օղակների ներդաշնակ համագործակցությունն ու զինծառայողների միջև փոխաջակցությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության դժվարությունների, զրկանքների և տարբեր վտանգների հաղթահարմանը, և դրանով իսկ՝ Հայրենիքի երաշխավորված պաշտպանությանը:

¹⁸ Տես Մ. Գ. Գրիգորյան, Հայ զինվորի անձնավորության ձևավորման տասնամյա ուղին: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

О НЕОБХОДИМОСТИ РАЗВИТИЯ ИНСТИТУТА ВОЕННОГО ПСИХОЛОГА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*А. С. БЕГЛАРЯН, сотрудник Управления информационной безопасности
и стратегических анализов Аппарата совета национальной безопасности*

РЕЗЮМЕ

Психологическая работа в войсках является основой для обеспечения высокого уровня морально-психологического состояния военнослужащих, необходимого компонента для достижения успеха как в укреплении боеспособности войск в мирное время, так и в боевых действиях – в период войны.

Армия является зеркалом общества, в котором в обостренной форме отражаются негативные явления, присущие данному обществу. На них накладываются и те отрицательные процессы, которые свойственны армии как тоталитарной организации с определенным ограничением прав и свобод военнослужащих.

Для обеспечения нормальной жизнедеятельности войск насущной необходимостью являются по-возможности раннее вскрытие конфликтных ситуации на межличностном и межгрупповом уровнях и устранение их причин, определение особенностей психики военнослужащих и прогнозирование вероятных поведенческих проявлений, учет особенностей процесса социализации военнослужащих в армейских условиях и т. д. Все это требует профессионального подхода к решению данных проблем, чем и подтверждается необходимость внедрения и развития в ВС института военных психологов.

С учетом того, что в ВС РА лишь в последнее время стало уделяться серьезное внимание проблемам психологической работы на профессио-

нальном уровне, предлагается создать комиссию из специалистов в области военной психологии, прошедших срочную службу и знающих армейскую жизнь «изнутри», и возложить на нее обязанности по разработке основных направлений и передовых методов деятельности военных психологов.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

THE NEED FOR DEVELOPING THE INSTITUTE OF MILITARY PSYCHOLOGIST IN THE RA ARMED FORCES

*A. S. BEGLARYAN, Employee of the Department of Information Security
and Strategic Analysis, Staff of the National Security Council*

SUMMARY

The psychological work in the Armed Forces is the basis for ensuring the high level of morale of the military, an essential component for achieving success in strengthening the fighting efficiency of troops both in peacetime and during hostilities – in wartime.

The army is the mirror of the society in which the negative phenomena specific to that community are acutely reflected. Those are superposed by the negative processes that are peculiar to the Army as a totalitarian organization with a certain restriction of the rights and freedoms of the military.

To ensure the normal functioning of the troops the possibly earlier reveal of the conflict situations at the interpersonal and intergroup levels and the elimination of their causes, the determination of psyche peculiarities of the military and the prediction of probable behavioral manifestations, the account of the characteristics of the military's socialization process in army conditions etc. are of urgent necessity. All this requires a professional approach to the solution of these problems and this confirms the need for the introduction and development of the institute of military psychologists in the Armed Forces.

Given the fact that in the RA Armed Forces only recently a serious attention have been paid to the problems of psychological work at the professional level, it is proposed to establish a commission of experts in the field of military psychology having got statutory service and knowing the army life «from within» and to impose responsibilities on it for the development of main fields and the best practices of military psychologists.

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ – ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ.
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԺԵԸՎՈՐՈՒՄԸ**

*Տ. Ս. ՄԻՄՅԱՆ, քանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի արտասահմանյան
գրականության ամբիոնի դոցենտ*

Ներկայումս Ադրբեջանի ղեկավարությունը ՀՀ և ԼՂՀ հասցեին ավելի ու ավելի հաճախ է հնչեցնում պատերազմը վերսկսելու և զինված պայքարի միջոցով Ղարաբաղյան հակամարտությունն իր օգտին լուծելու սպառնալիքներ: Դրանք ուղեկցվում են պետության ինտենսիվ ռազմականացմամբ և հասարակական կարծիքի նախապատրաստմամբ պատերազմի՝ ակտիվ քարոզչական աշխատանքի միջոցով, որը նպատակատուղված է ազգային գիտակցության մեջ հայի՝ որպես թշնամու կերպարի արմատավորմանը¹: Այս տեսակետից նպատակահարմար է ուսումնասիրել առաջին համաշխարհային պատերազմից հետո ռևանշիստական տրամադրությունների ձևավորումը Գերմանիայում և այն պատերազմական – հակապատերազմական դիսկուրսը^{*}, որը ծավալվեց գեղարվեստական գրականության մեջ ու հրապարակախոսական նյութերում: Ըստ այդմ՝ փորձենք վերլուծել ազգայնամուտների պատերազմամետ և հումանիստների՝ հակապատերազմական գրական դիսկուրսը, քանի որ նացիստներն իրենց քարոզչական գործունեության մեջ մեծ տեղ էին տալիս հասարակական կարծիքի վրա գրականության, գեղարվեստական ու հրապարակախոսական նյութերի նպատակային ազդեցությանը:



**1. Հակապատերազմական – պատերազմական դիսկուրսի
պայմանական սկզբնակետերը**

Հայտնի է, որ պատերազմը գովաբանող ռազմաշունչ տեքստերը նորություն չէին եվրոպական իրականության համար: Երրորդ ռայխը շատ գաղափարներ ու տրամադրություններ է ժառանգել Կայսերական Գերմանիայից: Այս առումով ուշագրավ է Հ. Մանի «Պատկեր և ուսմունք» (1939) հոդվածը, որում ուր-

¹ Տես Հ. Ս. Քոթլինջյան, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան: Ե., 2009, էջ 68, 79 – 80:

^{*} Դիսկուրս (անգլ. discourse < լատ. discursus՝ գրույց, խոսակցություն)՝ խոսքը, գրույցը որպես լեզվաբանական ուսումնասիրության օբյեկտ (տես Ղ. Պ. Крысин. Толковый словарь иноязычных слов. М., 2000, с. 236):

վագծվում է գերմանական պատմության համար մի շատ կարևոր գաղափար. «Մի ժամանակ նա (Օ. Բիսմարկը.–Տ. Մ.) ստեղծում է պետություն, որը, ամբողջովին հակառակ լինելով գերմանական անցյալին, պիտի ձեռք բերեր ամուր սահմաններ: Նա այդ պետությունն անվանում է «ապահովված» և իր ուժերին համապատասխան՝ գերմանացիներին դաստիարակում «Փոքր Գերմանիայի» համար, կոչ անում նրանց, որ վերջնականապես դառնան միասնական ազգային ընտանիք: Նրանց հազարամյա սովորություններից մեկն էր սավառնել անորոշ հեռաստաններում, ամբողջ աշխարհը համարել գերմանական՝ ոչինչ լինելով իրենց տանը: Հենց սա էր ուզում Բիսմարկը տալ, սովորեցնել: Սահմանափակվել և դառնալ լիովին կայացած ազգ...: Այժմ ակնհայտ է, որ դա նրանց չհաջողվեց: Այսպիսով Բիսմարկը փորձում էր ապամիֆականացնել Կայսերական Գերմանիայում «ամուր հավատքն այն ուժի նկատմամբ, որը կոչվում էր «կայսրություն»»²:

Պատմությունը ցույց տվեց, որ բիսմարկյան մտավախությունը հիմնավորված էր. նացիստները գերմանական հասարակական գիտակցության մեջ տեղ գտած առասպելությունները (օրինակ՝ «Արյուն և հող», «Ժողովուրդն առանց տարածքի») սկսում են իրականացնել՝ իրենց «կայսերական» ձգտումներն ուղղելով դեպի Արևելք (*Drang nach Osten*): Գերմանիան փորձում է դա անել նոր տարածքների, մասնավորապես՝ ռուսական տափաստանների հաշվին:

«Փոքր Գերմանիայի» առասպելությամբ Երրորդ ռայխում դարձել էր արդեն անընդունելի, քանի որ սկսել էր քարոզվել անծայրածիր աշխարհակալ Գերմանիայի գաղափարը: Բայց դա իրականացնելու համար հարկավոր էր զարգացնել այնպիսի ուսմունք, որով ի դերս լինեի բոլոր ազգերի հավասարության թեզը: Նման ուսմունքի հիմքում դրվեց հակահրեական ու ռասիստական արժեքաբանությունը, որը Վիեննայում սերմանվում էր դեռ 1900-ական թվականներից: Հենց այստեղ ձևավորվեցին հակահրեական ու ռասիստական արժեքներ ընդունողները, որոնք Հաբսբուրգյան պետության թուլացման հարցում մեղադրեցին հրեաներին: Այս արժեքաբանությունը գերմանական հասարակության մեջ ներթափանցեց տարբեր «ճանապարհներով»՝ գրքերի, հանդեսների, դասախոսությունների ու ելույթների միջոցով: Վերջինս էլ եղավ առավելապես «ակտիվ» եղանակը, քանի որ Հիտլերն իր հակահրեական գաղափարներն սկսեց բանավոր տարածել Վիեննայի սրճարաններում:

1910-ական թթ. նման գաղափարներ հնչեցին նաև Իտալիայում: Պատերազմի բացահայտ կոչ է Ֆ. Մարինետիի՝ 1909 թ. փետրվարի 20-ին «Ֆիզարո» թերթում հրապարակված մանիֆեստը, որում ասված էր. «Մենք ուզում ենք գովերգել պատերազմը. միայն այն կարող է մաքրել աշխարհը: Կեցցե՛ն սպառազինումը, սերը դեպի Հայրենիք, անիշխանության քայքայիչ ուժը»³:

² Генрих Манн. Фрагменты из книги «Обзор века», гл. «Артур Шницлер». «В защиту культуры». Сборник статей. М., 1986, с. 361.

³ Ф. Т. Маринетти. Первый манифест футуризма. «Называть вещи своими именами: Программные выступления мастеров западно-европейской литературы XX века». Под общ. ред. Л. Г. Андреева. М., 1986. с. 160.

Նացիստներն այս ֆուտուրիստական գաղափարները բավական արդյունավետ կերպով ներառեցին իրենց քարոզչության «քերականության» մեջ: Դա առավելապես դրսևորվեց նացիստական շքերթների ժամանակ ռազմական տեխնիկայի նկատմամբ ժողովրդի մեջ հատուկ ակնածանքի սերմանման ձևով: Հ. Մանը գերմանական ժողովրդի ողբերգություն է համարում այն, որ նացիստները զանգվածներին գրավեցին ոչ թե «ազատություն», այլ «զգաստ» բառով⁴: Ինչ վերաբերում է ռազմական տեխնիկային, ապա այս առումով հետաքրքրական է Հ. Մանի «Հոգևոր աշխարհի կառուցումը» (1935) հոդվածը, որում հրապարակախոս-արձակագիրը նկատում է. «Կարգապահությամբ, «տեխնիկականացմամբ» հրճվող ու հիացող ժողովուրդը, որն ամեն ինչ ստորադասում է այդ գործոններին, չի կարող ստեղծել ոչ մի լավ բան: Մյուս ժողովուրդները չեն կիսում այդ հիացմունքը, և գերմանացիներն սկսում են նրանց դիտել իբրև թշնամիների: Այդ ամենը բերում է տխուր հանգուցալուծման»⁵:

Այդ ժամանակաշրջանում գաղափարական պայքարը այնքան սկզբունքային էր, որ Ման եղբայրները երկար տարիներ գծոված են եղել: Թ. Մանը իր «Ապաքաղաքականի դիտարկումներ» (1918) ակնարկներում հանդես եկավ որպես ազգայնամոլական գաղափարների ջատագով, ինչը հիմք դարձավ եղբայրների միջև հարաբերությունների սառեցման համար: Թ. Մանը իր հայացքները վերանայեց Վայմարյան Հանրապետության արտաքին գործերի նախարար, պացիֆիստ Վալտեր Ռատենաուի սպանությունից հետո և արդեն մեկ տարի անց «Գերմանական Հանրապետության մասին» (1923) հոդվածում քննադատեց գերմանական ազգայնամոլությունը⁶, իսկ 1930-ական թթ. զինվորագրվեց նացիստական ամբողջատիրական վարչակարգի տապալման գործին՝ հանդես գալով («Գերմանական ուղերձ. Կոչ բանականությանը» (1930), «Ուշադրություն, Եվրոպա» (1935), 1939 թ. մայիսի 8-ի ելույթը Նյու Յորքում կայացած գրողների համաշխարհային կոնգրեսում (1939), «Եղբայր Հիտլերը» (1939), «Ճակատագիր և խնդիր» (1943), «Գերմանիան և գերմանացիները» (1945)) հրապարակումներով: Այսպես. մացիզմի հիմնարար քննադատությանն են նվիրված, օրինակ, «Մարիոն և աճաբարը» պատմվածքը* (1930), «Դոկտոր Ֆաուստուս» վեպը (1947):

Նկատենք, որ ազգայնամոլական շարժումները միշտ հիմնվում են ազգային արժեքների վրա, ինչը ենթադրում է հայացք դեպի անցյալ, անցյալի առասպելացում՝ ներկայում լայն զանգվածներին քարոզելու և ոգեշնչելու համար:

⁴ Տես *Genrix Mann*. *Путь немецких рабочих*. «В защиту культуры», с. 64:

⁵ *Genrix Mann*. *Построение духовного мира*. «В защиту культуры», с. 55.

⁶ Տես *Thomas Mann*. *Von Deutscher Republik*. *Politische Schriften und Reden in Deutschland*. Frankfurt am Main, 1984, SS. 118–159:

* Թ. Մանի պատմվածքի վերնագիրը թարգմանված է «Մարիոն և կախարհը» (տես «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 7: Ե., 1981, էջ 208): Սակայն ըստ պատմվածքի բովանդակության այն նպատակահարմար ենք համարում թարգմանել «Մարիոն և աճաբարը» (գերմաներեն *Zauberer* բառի երկրորդ իմաստով՝ «աճաբար»):

2. Պատերազմական–հակապատերազմական դիսկուրսի
ընդհանուր բնութագիրը

Նացիզմի հիմնարար տեքստերը՝ Ա. Հիտլերի «Իմ պայքարը» (1926–1927), Ա. Ռոզենբերգի «20-րդ դարի միֆը» (1930) հիմնված էին իրենց նախորդների՝ Պ. դը Լազարդի, Գ. Ռ. Շյոնեբերգի, Հ. Ս. Չեմբեռլենի և Յո. Լանցի աշխատությունների վրա*, որոնցում հիմնավորվում էին ազգայնամոլական, հակահրեական, հակաժողովրդավարական մոտեցումները**, իսկ կիզակետում գերմանական ազգի ընտրյալ լինելու գաղափարն էր:

Նացիստները բավական ուժեղ դիմադրության հանդիպեցին գրական *դիսկուրսում*, ինչը դրսևորվեց տարբեր գրական ժանրերում: Այս տեղեկատվական պայքարն ընթացավ տեքստ–հակատեքստ, պատերազմական–հակապատերազմական վեպեր հակադրության համատեքստում:

Նշենք, որ նացիստական գաղափարախոսություն սերմանող վեպեր գրվել են ոչ այնքան Երրորդ ռայխի, որքան Վայմարյան Հանրապետության շրջանում, անգամ դրանից էլ վաղ՝ մոտավորապես 1910-ական թվականներին⁷:

Այս թեմատիկան արժարժվեց նաև «Արյան ու մարմնի» (Լյուդվիգ Գանգ-հոֆեր, Հերման Շտեր, Հերման Լյոնս), Վայմարյան շրջանի պատերազմական, պարտիզանական ու քաղաքացիական պատերազմի, այսպես կոչված «զինվորական ազգայնականության» (*Soldatische Nationalismus*) գրականության մեջ⁸:

Այս առումով հարուստ են նաև 1920-ական թվականներին գրված վեպերը. օրինակ՝ Էռնեստ Յունգերը 1920 թ. տպագրում է իր «Պողպատե տարափ. հետախույզների դեկավարի օրագրից» վեպը, որտեղ պատերազմը ներկայացված է որպես հիմնական մաքրող բնական ուժ: Այս դրույթը վուլգար էվոլյուցիոնիզմի հետևանք է, այն է՝ ինչպես բնության, այնպես էլ մարդկային հասարակության մեջ թույլերը պետք է վերանան, որպեսզի տեղի ունենա կենսաբանական

* Նկատենք, որ այս աշխատություններում արտահայտված գաղափարները նացիստների «ուղեղներն» ընդունում էին ոչ միանշանակ կերպով: Նրանք հաճախ խմբագրում էին այդ գաղափարները, ենթարկում վերաբնութային: Օրինակ՝ Հիտլերը սեղանի մոտ արտասանած իր ճառում (1941 թ. դեկտեմբերի 13, շաբաթ՝ կեսօրին) ասել է. «Չեմբեռլենի սխալն այն էր, որ քրիստոնեությունն ընկալում էր իբրև հոգևոր աշխարհ» (տես *Генри Пикер. Застольные разговоры Гитлера. Смоленск, 1998, с. 22* (http://lib.aldebaran.ru/author/piker_genri/piker_genri_zastolnye_razgovory_gitlera/)):

** Հարկ ենք համարում նշել, որ 19-րդ դարում ազգայնական տրամադրությունները «ակտիվ» էին ոչ միայն Գերմանիայում, այլ նաև Ֆրանսիայում: Հատկապես ուշագրավ է Միխայել Յայսմանի աշխատությունը՝ *Michael Jeismann. Das Vaterland der Feinde: Studien zum nationalen Feindbegriff und Selbstverständnis in Deutschland und Frankreich 1792-1918. Stuttgart, 1992*:

⁷ Այս մասին ավելի հանգամանորեն տես օրինակ՝ Ադոլֆ Բարտելյի «Ժողովուրդը ժողովրդի դեմ» (1912), Հանս Գրիմի «Ժողովուրդը առանց տարածքի» (1926), Հանս Ֆրիդրիխ Բլանկի եռագրությունը («Հայն Հոյեր» (1922), «Բերենդ Ֆոք» (1923), «Ստեյնզո Ռոտկինսոն» (1924)) լույս տեսավ 1934-ին՝ «Նախահայրերի ասքը» խորագրով, Էրվին Գվիդո Կոլբենհայերի «Պարացելտուս» (1917-1926), Վիլ Վեսպերսի «Ամուր ցեղը» (1931) վեպերը:

⁸ Տես *Wolfgang Beutin. Deutsche Literaturgeschichte: Von den Anfängen bis zur Gegenwart. 6. Verb. Und erw. Aufl., Stuttgart, 2001, S. 441*:

տեսակի, մեր պարագայում՝ արիական ռասայի անխոչընդոտ վերելք: Վեպում զինվորը նկարագրված է որպես «արխետիպային (օրինակելի) կռվող»⁹, որը պետք է կարողանա հետևել իր բնագոյներին, ինչն էլ կձևավորի նրա աշխարհը: Այդ աշխարհի բաղադրիչ տարրերից են՝ արյան ծարավը, ընկերությունը, տիրելու ձգտումը: Վեպում անհատապաշտական-անիշխանական բնագող հակադրված է քաղաքացիական աշխարհի խաղաղասիրական սկզբունքներին: Է. Յունգերն իդեալականացրել է պատերազմը. անգամ տեսնելով դրա սարսափելի կողմերը՝ պատերազմին վերագրել է իշխանության ձևավորման գործառույթ:

Ինչպես իրավացիորեն նկատում է Անդրեաս Ջուրխալը, ազգայնամոլական պատերազմական վեպերի մեծ մասը նվիրված է ազգի փառաբանմանը և ռազմաճակատում ձեռք բերված գիտելիքի ու փորձի փոխանակմանը՝ միավորված ընկերություն քեմայի շուրջ (Ֆ. Շաուվեկերի «Ժողովրդի ծագումը» (1930), Վ. Բոյմելբուրգի «Ալրադացների գայրացած խումբը» (1930))¹⁰:

Նույն ժամանակահատվածում գրվել են նաև հակապատերազմական վեպեր. Է. Մ. Ռեմարկի «Արևմտյան ռազմաճակատում անփոփոխ է» (1929), «Վերադարձ» (1931), «Երեք ընկեր» (1936), Ե. Գլեզերի «1902 թվականի ծնվածները» (1936), Լ. Ռենի «Պատերազմ» (1928) երկերը:

1930-ական թվականներին ծավալված վիպական դիսկուրսում էական դեր ունի Առնոլդ Ցվայգի (1887–1968) «Սպիտակ մարդկանց մեծ պատերազմը» վիպերգությունը, որում հեղինակը պատերազմի քննադատությունը ներկայացրել է ոչ թե պատերազմական գործողությունների դաժանության համապատկերով, ինչպես դա արել է Ռեմարկը (օրինակ՝ «Արևմտյան ռազմաճակատում անփոփոխ է»), այլ դաժանություններն ու վայրագությունները մեկնաբանել է քաղաքական պատճառաբանվածության համատեքստում¹¹:

Պատերազմական – հակապատերազմական դիսկուրսի չափորոշիչների առումով առանձնահատուկ կարևոր է Հ. Մանի «Գրողը և պատերազմը» (1932) հոդվածը, որում, մասնավորապես, ասված է. «Իրական արժեք ներկայացնող և Եվրոպայում հաջողություն վայելող ոչ մի գրքում պատերազմը ճոխացված, գունազարդված չէ: Չգիտեմ՝ արդյոք որևէ երկրում կան ռազմական կուսակցության գրողներ: Եթե այո՝, ապա նրանք գրող են միայն այդ կուսակցության համար, իսկ մնացածն ստեղծագործում է ամբողջ աշխարհի համար»¹²: Ասվածից եզրակացնում ենք, որ եթե գրական տեքստերը որևէ ռազմական կուսակցության պատվեր են, ապա դրանք փակ տեքստեր են, տեղային, լայն մեկնաբանման հնարավորությունը սահմանափակող: Այս խնդիրն ավելի խոր է մեկնաբանել Է. Հենինգուելը՝ 1937 թ. հունիսին Ամերիկյան գրողների 2-րդ կոնգրեսում «Գրողը և պատերազմը» (1937) ելույթ-հոդվածում. «Գոյություն ունի

⁹ Stu «Deutsche Literatur in Schlaglichtern». Hrsg. Von Bernd Balzer und Volker Mertens. Mannheim, 1990, S. 403:

¹⁰ Տես նույն տեղում:

¹¹ Տես նույն տեղում:

¹² *Генрих Манн. Немцы решают (По какому пути пойдут немцы). «В защиту культуры»*, с. 40.

քաղաքական միայն մեկ համակարգ, որը չի կարող տալ լավ գրողներ. դա ֆաշիզմն է, որովհետև ֆաշիզմը հանցագործների կողմից հնչեցվող սուտ է: Գրողը, որը չի կարողանում խաբել, ֆաշիզմի ժամանակ չի կարող ապրել ու աշխատել: Ֆաշիզմը սուտ է և այդ իսկ պատճառով էլ դատապարտված է գրական անպտղության: ...Ես սկսել եմ խոսել այն մասին, թե որքան դժվար է լավ ու ճշմարտանման գրելը: ... Շատ վտանգավոր է գրել պատերազմի մասին ճիշտը, և շատ վտանգավոր՝ ջանք թափել ճշմարտությունը գտնելու համար»¹³:

3. *Պատերազմական դիսկուրսի չափորոշիչներն ու արձագանքը՝
ըստ Հ. Հեսսեի և Է. Մ. Ռեմարկի վեպերի*

Հ. Հեսսեի «Ճանապարհորդություն դեպի Արևելք» պատմվածքում երաժշտի և Լուկասի գրույցի ընթացքում վերջինս նշում է, որ առաջին համաշխարհային պատերազմի մասին գրվել են շատ գրքեր, որոնցում նկարագրվում են պայքարողներ, այրվող գյուղեր ու անտառներ, «բզկտված մարմիններ ու փշրված գանգեր»¹⁴, բայց Լուկասը անհնար է համարում պատերազմը նկարագրող գրքերի հաջողությունն առանց գրողի՝ պատերազմը ներսից, խորապես վերապրելու¹⁵: Լուկասը մարմնավորել է «ոչ թե մի ընթերցողի կամ ինքն իրեն, կամ էլ, լավագույն դեպքում, մարտական ընկերների», այլ «նրանց, ովքեր պատերազմում զոհվեցին»¹⁶: Այս խոսքը կարելի է համարել հեղինակի՝ պատերազմի մասին վեպեր գրելու չափանիշների հստակեցում, ամրագրում, նորմատիվ պնդում:

1920-ական թվականներին Օ. Շպենգլերի «Արևմուտքի մայրամուտը» երկհատոր աշխատությունը (1918–1922) և առաջին համաշխարհային պատերազմը եվրոպական մտավորականության միջավայրում առաջացրին հոռետեսական տրամադրություններ: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Հեսսեի «Կլինգգորի վերջին ամառը» (1920) պատմվածքի «Կործանման երաժշտություն» հատվածում բերված Կլինգգորի և հայ մոզի գրույցը. «Ես (Կլինգգորը.– *S. U.*) հավատում եմ միայն կործանմանը*: Մենք գնում ենք անդունդի եզրով՝ ուղեսայի մեջ նստած, բայց ձիերը խրտնած են: Մենք կանգնած ենք անկման շեմին («*Wir stehen im Untergang*»)...: Ամենուր նույնն է՝ մեծ պատերազմ, փոխակերպում արվեստում, արևմտյան պետությունների քայքայում: Մեր հին ու ծեր Եվրոպայում ամեն ինչ մեռավ՝ լավն ու իրենը: Մեր գեղեցիկ

¹³ *Эрнест Хемингуэй. Писатель и война. Избранные произведения в 2-х томах. Под ред. И. Кашкина. М., 1959* (http://ocr.krossw.ru/html/heminguey/heminguey-pisatel_war-ls_1.htm).

¹⁴ *Hermann Hesse. Die Morgenlandfahrt. «Gesammelte Schriften». Sechster Band. Suhrkamp Verlag, 1987, S. 39.*

¹⁵ Տես նույն տեղում, էջ 40:

¹⁶ Նույն տեղում:

* «Կործանում», «անկում» հասկացությունները Հեսսեն արտահայտում է շպենգլերյան բառապաշարով (տես *Hermann Hesse. Klingsors letzter Sommer. «Gesammelte Schriften». Dritter Band, S. 588*): «Ich glaube nur an eines: an den Untergang», ինչպես նկատում ենք՝ «*Untergang*» բառը խիստ կարևոր է: Այն տերմինի արժեք է ստանում՝ դառնալով եվրոպական մշակույթի անկման ցուցիչ (տես նույն տեղում, էջ 590):

բանականությունը դարձել է մոլորություն, փողը՝ թուղթ, մեր մեքենաները միայն կրակում ու պայթեցնում են, մեր արվեստը ինքնասպանություն է»¹⁷:

Պատմվածքում տիրապետող հռետեսական տրամադրությունները խորապես պատճառաբանված էին: Այս մասին 1938 թ. Հեսսեն գրում է իր «Հուշ Կլինգգորի ամռան մասին» հոդվածում: Այստեղ, մասնավորապես, ասված է, որ 1919 թ. ամռան «իր և աշխարհի համար եզակի և արտառոց էր», քանի որ «քառամյա պատերազմն ավարտվում է»: «Աշխարհը, շարունակում է Հեսսեն, թվում էր՝ բեկորների էր փշրվել, հազարավոր զինվորներ, ռազմագերիներ, քաղաքացիներ տարիներ շարունակ միասնականացված զինվորական հրամանները կատարելուց հետո վերադառնում են խիստ ցանկալի, բայց միևնույն ժամանակ վախեցնող ազատություն: Պատերազմը՝ աշխարհի կառավարողը, մեռավ ու թաղվեց: Մեզ՝ բաց թողնված ստրուկներիս, դատարկ սպասում էր փոփոխված և աղքատացած աշխարհը»¹⁸: Նման իրավիճակում ցանկալի է, որ պատերազմից վերադարձածը հնարավորինս մոռանա անցյալը, վերապրածը և իրեն գտնի նոր միջավայրում, այսինքն՝ սոցիալականաճա:

Հետպատերազմյան Գերմանիայում մոռացումը հարթ չի անցնում: Հեսսեի «Հուշ Կլինգգորի ամռան մասին» հոդվածի հիման վրա մենք կարող ենք փաստել, որ պատերազմից վերադառնում են «երիտասարդներ, որոնք դեռ ապրում էին երեխայական աշխարհում» և արդեն հասուն տղամարդիկ են¹⁹: Երիտասարդ-հասունները պատերազմում «անվերադարձ կորսված» տարիները համարում էին գողացված²⁰: Եթե երիտասարդները պիտի «լինեին զգոն՝ դաժան, զգայականությունից զուրկ ու գաղափարագուրկ աշխարհում ապրել կարողանալու համար», ապա ավագ սերունդը նույնպես ծանր իրավիճակում էր, քանի որ նրա «աշխարհի պատկերը, որն իր համար բարձրագույն արժեք էր, ծիծաղելիորեն անցյալ էր դառնում»²¹: Այս խնդիրը նկարագրված է Հեսսեի «Տափաստանի գայլը» (1927) վեպում:

4. Երիտասարդ-հասուն և հասուն-հասուն սերունդների բախումը հիշում-մոռացում հակադրության մեջ

Ինչպես արդեն նշեցինք, Գերմանիան չկարողացավ սահմանափակվել «Փոքր Գերմանիայի» գաղափարախոսության շրջանակներում: Ուժգուն ենք փաստել, որ Գերմանիայում առկա էր մի վիթխարի զանգված, որն ուներ ռևանշիստական տրամադրություն: Ավստրիացի գրող, Նոբելյան մրցանակակիր Էլիաս Կանետին իր «Հիտլերը՝ ըստ Շպեյերի», (1971) ակնարկում դիպուկ կեր-

¹⁷ Նույն տեղում, էջ 591-592: Մեջբերված թարգմանությունը մերն է, իսկ Աշոտ Ալեքսանյանի թարգմանությամբ՝ տես *Հիքման Հեսսե*, Բլինգգորի վերջին ամառը: «Ներսը և Դուրսը»: Ե., 1991, էջ 148:

¹⁸ Hermann Hesse. Erinnerung an Klingsors Sommer. «Gesammelte Schriften». Siebenter Band, SS. 409-410.

¹⁹ Տես նույն տեղում, էջ 410:

²⁰ Տես նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

պով նկատում է, որ Հիտլերը կարողացավ իր կողմը գրավել մեծ զանգվածների՝ օգտագործելով երկու կարևոր իրողություն, այն է՝ առաջին աշխարհամարտում կրած պարտությունը և Գերմանիայի համար Վերսալյան պայմանագրից բխող ծանր ու նվաստացուցիչ պարտավորությունները («Վերսալի դեմ ուղղված պայքարով նա հրապուրում է զանգվածներին և վերջիվերջո Գերմանիայում գրավում իշխանությունը»)²²:

Մարդասիրական գրականությունը կարևորում էր պատերազմի մոռացումը, բայց զանգվածները չէին ցանկանում այն մոռանալ: Հիտլերը «հիշեցնում» է նրանց՝ սկսելով երկրորդ համաշխարհային պատերազմը:

Հիշում – մոռացում խնդիրը լավագույնս նկարագրված է Ռեմարկի «Վերադարձ» (1931) վեպում, երբ գլխավոր հերոսը՝ Էռնեստը, այցելում է իր «հայտնի բարձրաստիճան զինվորական» քեռուն՝ Կառլին: Պատերազմից վերադարձած Էռնեստին դուր չեն գալիս մորեղբայրն ու նրա հյուրերը²³: Երիտասարդի և հասուն տարիքի տղամարդու միջև բախումը արժեքաբանական է: Կենցաղում քեռու զինվորական հագուստը առաջացնում է պատերազմից վերադարձածի հեզմանքը: Արժեքաբանական տարբերությունը երևում է ոչ միայն մենք – մենք (Էռնեստ – քեռի), այլև ես – նրանք (Էռնեստ – հրավիրված հյուրեր) հարաբերություններում: Պատերազմի մասնակից Էռնեստի և քեռու տանը հավաքվածների միջև գոյություն ունի մարմնական, արժեքաբանական և գոյաբանական խոր տարբերություն:

Նման տրամադրությունները տարածված էին գերմանական հասարակության լայն զանգվածներում: Առաջին աշխարհամարտից հետո Հ. Մանը «Գերմանացիները որոշում են» (1931) հոդվածում գերմանական հասարակության մեջ տիրող ռազմաշունչ տրամադրությունները իրավացիորեն բացատրում է այն հանգամանքով, որ «գերմանացիները չկարողացան իրենց մեջ հաղթահարել պատերազմը. պատերազմի գաղափարը մինչև այժմ կրում են իրենց մեջ, և նրանց հոգու խորքում պատերազմը երբեք չի դադարել»²⁴: Այս դատողությունները հաստատված են նաև Հերման Հեսսեի «Տափաստանի գայլը» վեպում (Հալլեր – պրոֆեսոր – Գյոթեի նկար միջադեպը):

Ռիշագրավ է, թե ինչպես է Հարրի Հալլերը բնութագրում պրոֆեսորին. «հավատում է գիտությանը, որին ծառայում էր, հավատում է գիտելիքի արժեքավորությանը, գիտելիքի կուտակմանը, որովհետև նա հավատում է առաջընթացին, զարգացմանը: Նա չի վերապրել պատերազմը, չի զգացել, թե ինչպես էլյնչտեյնը քայքայեց նախկին մտածողությունը (կարծում է, թե դա վերաբերում է միայն մաթեմատիկոսներին): Նա չի տեսնում, թե ինչպես է իր շուրջը հասունանում պատերազմը: Հրեաներին և կոմունիստներին համարում է ատելության օբյեկտ: Նա լավ, գաղափարագուրկ, զվարճացող, իրեն կարևոր համարող երեխա

²² Տե՛ս *Elias Canetti*. Das Gewissen der Worte: Essays. Frankfurt am Main, 1998, S. 184.

²³ Տե՛ս *Erich Maria Remarque*. Der Weg zurück. Köln, 1971, S. 104.

²⁴ *Геррих Манн*. Немцы решают ..., с. 40.

է: Նրան կարելի է նախանձել»²⁵: Ինչպես նկատում ենք, Հալլերի գնահատականները տրված են իրերի խորքը տեսնող հասուն մարդու տեսանկյունից՝ «վերևից»: Հասուն, մտածող անհատը տալիս է ինքնահավան, պատերազմ չտեսած երեխագիտնականի բնութագիրը: Երեխա-գիտնականն ի վիճակի չէ տեսնելու գերմանական հասարակության մեջ տեղի ունեցող գաղափարական տեղաշարժերը:

Հարրի Հալլեր-պրոֆեսոր երկխոսությունը չի կայանում ոչ միայն պրոֆեսորի տանը Հալլերի տեսած Գյոթեի կիտչային դիմանկարի պատճառով, այլև «ռազմամոլական ու պատերազմ հրահրող թերթը» գովերգելու համար: Պրոֆեսորը թերթի²⁶ Հարրի Հալլերի համանուն ազգանվամբ հողվածագրին համարում է «տհաճ ու անհայրենիք երիտասարդ»*, որը «ծաղրում է կայսրին և կարծիք հայտնում, որ իր հայրենիքը պատերազմի հրահրման գործում ոչ պակաս մեղավոր է, որքան թշնամի երկրները»²⁷:

5. Հ. Հեսսեի՝ *պատերազմական դիսկուրսի դեմ ուղղված պայքարի «Եղբայրության» մոդելը*

Հեսսեն իր «Ճանապարհորդություն դեպի Արևելք» (1932) պատմվածքում քննում է առաջին աշխարհամարտի հետևանքները: Պատումը վարողը՝ երաժիշտ, «Եղբայրության» անդամ Հ. Հեսսեն, գրել է. քանի որ «մեր միության** ջանքը և գործունեությունն այսօր մոռացվել կամ աշխարհի ծաղրանքի առարկա են դարձել, եկել է օրը վերաբացահայտման, և իմ գրառումները պետք է որոշ չափով նպաստեն դրան»²⁸: Մեջբերվածից եզրակացնում ենք, որ հեսսեական այս պատմվածքը կոչված է հիշեցնելու մշակութային «Եղբայրության», այսինքն՝ հոգևոր արժեքների, մշակույթի կարևորության մասին, քանի որ մարդիկ «նոր վերապրած ահավոր, տևական, սարսափելի պատերազմը (խոսքը առաջին աշխարհամարտի մասին է.– *S. U.*) մոռանալու փոխարեն փորձում են պատերազմական հետաքրքրաշարժ վեպերի միջոցով նորից վերհիշել, թե հենց իրենք ինչ

²⁵ Hermann Hesse. Der Steppenwolf. Frankfurt am Main. 1999, S. 93.

²⁶ Այս թերթը ազգայնամոլական քաղաքական գործիչ Ալֆրեդ Հուգենբերգին (1865–1951) էր (տես Friedrich Voit. Erläuterungen und Dokumente zu Hermann Hesse: Der Steppenwolf. Stuttgart, 2005, S. 35):

* Այս արտահայտությունն ունի ինքնակենսագրական հիմք: «Տափաստանի գայլը» վեպի մեկնաբանողներից մեկը՝ Հերիբերտ Կունը, մեջբերում է 24.10.1915 թ. «Քյոլնի թագերլատում» թերթում տպագրված մի անանուն հողվածից հատված, որտեղ քննադատության է ենթարկվում «հայրենագուրկ ու վախկոտ» Հեսսեն (տես Heribert Kuhn. Kommentar. Hermann Hesse. Der Steppenwolf, SS. 291–292):

²⁷ Hermann Hesse. Der Steppenwolf, SS. 94–95.

** Նկատենք, որ Հեսսեի նկարագրած մոդելը բնագրում ներկայացված է «Bund (միություն)» և «Kameradschaft (ընկերություն)» բառերով: Հեսսեական համատեքստից ելնելով՝ համարում ենք, որ «Kameradschaft» բառը ավելի ճիշտ է քարգմանել «եղբայրություն» (այս մասին ավելի հանգամանորեն տես *Տիգրան Մխչյան*, Եղբայրության կառուցվածքը (Հ. Հեսսեի «Ճանապարհորդություն դեպի Արևելք» պատմվածքի օրինակով): «Համատեքստ-2011»: Ե., 2010, էջ 26–32):

²⁸ Hermann Hesse. Die Morgenlandfahrt. «Gesammelte Schriften», S. 12.

դժբախտություններ են վերապրել ու պատճառել ուրիշներին»²⁹: Պատումը վաղուց պատերազմական վեպեր («*Kriegsromane*») ասելով նկատի ունի մացիստական պատերազմական վեպերը: Իսկ թե ինչու են աշխարհում մշակութային արժեքները դարձել «աշխարհի ծաղրանքի առարկա» («*Gelächter der Welt*») պայմանավորված էր մացիզմի քարոզվող հակահամամարդկային, հակամշակութային արժեքաբանական համակարգով:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ ազգայնամոլական պատերազմական դիսկուրսն սկիզբ է առել դեռ 19-րդ դարում: Պատերազմական–հակապատերազմական քննարկումը հատկապես սրվել է Վայմարյան Հանրապետության օրոք և Երրորդ ռայխի ստեղծման մախաշեմին: Պատերազմական դիսկուրսը ձևավորվել է հասարակագիտական ու ազգայնամոլական գեղարվեստական գրականության հիման վրա, ինչը ծնել է զանազան առասպելություններ: Ռեմարկի, Հեսսեի տեքստերը վկայում են, որ հակապատերազմական դիսկուրսը հակադրվել է պատերազմականին: Պատերազմական – հակապատերազմական դիսկուրսների հակադրությունը ցայտուն կերպով է արտահայտում 1920-ական թթ. գերմանական հասարակության մեջ, տարբեր սերունդների միջև (երիտասարդ–հասուն, հասուն–հասուն) առկա քաղաքական և արժեքաբանական պայքարը, որում թեև ժամանակավոր հաղթանակ տոնեցին պատերազմի կողմնակիցները, սակայն այն վերջիվերջո ավարտվեց նրանց մեծագույն պարտությամբ:

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

ВОЕННЫЙ – АНТИВОЕННЫЙ ДИСКУРС В ГЕРМАНИИ: ОЦЕНКА ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

*Т. С. СИМЯН, кандидат филологических наук, доцент кафедры
Зарубежной литературы Романо-германского факультета ЕГУ*

РЕЗЮМЕ

В настоящее время военно-политическое руководство Азербайджана интенсивно осуществляет милитаризацию государства в целях создания образа врага в лице армян и склонения общественного мнения к необходимости развязывания новой войны против РА и НКР. В этом аспекте представляется целесообразным изучение процесса формирования в общественном сознании Германии после Первой мировой войны реваншистских настроений, выразившихся в форме военного-антивоенного дискурса в научно-исторических и художественных материалах. Шовинистический военный дискурс с использованием различных мифологем, нацеленный на формирование у находящейся на стадии единения германской нации сознания собственного превосходства над другими нациями, начался еще в

²⁹ Նույն տեղում:

конце XIX в. Военные–антивоенные обсуждения особенно обострились в период Веймарской республики – на пороге создания Третьего рейха. Противопоставление военного–антивоенного дискурсов четко выражено в германском обществе 1920-1930-х годов в форме политической, социо-культурной борьбы между разными поколениями на уровне аксиологии, в которой сторонники войны хотя и праздновали временную победу, однако она в конце концов обернулась крупнейшим поражением.

MILITARY POLITICAL HISTORY

WAR–ANTIWAR DISCOURSE IN GERMANY: ASSESSMENT OF THE FIRST WORLD WAR

*T. S. SIMYAN, PhD, Associate Professor of the Chair of Foreign Literature,
Romano-Germanic Faculty, YSU*

SUMMARY

Currently, the military-political leadership of Azerbaijan intensively carries out militarization of the state in order to create an image of an enemy in Armenians and to induce the public opinion to the need to unleash a new war against the NKR and the RA. In this regard, it seems appropriate to study the process of shaping revanchist sentiments in Germany's public consciousness after the First World War expressed in the pattern of war-antiwar discourse in the academic-historical and fiction materials. Chauvinistic military discourse using different mythologems targeted at developing sense of superiority in German people being at the stage of unification over other nations began in the late nineteenth century. The war–antiwar debates became particularly acute under the Weimar Republic–on the verge of the establishment of the Third Reich. The contrast of the war-antiwar discourse is clearly expressed in the German society of 1920-1930-ies in the form of political, socio-cultural struggle between different generations at the level of axiology in which although the proponents of war celebrated a temporary victory, it eventually turned into a major defeat.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ՆԱԽԱՆՇԱՆԱԿՄԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ***

ՀԵՌՈՒՍՏԱՕՊՏԻԿԱԿԱՆ ԴԻՏՈՅ

ՏՕՎ-Մ

(«ԺԱՄՀԱՐ – Դ. Դ.» ՍՊԸ)



ՏՕՎ-Մ-ի տեխնիկական բնութագրերը

Տեսադաշտի անկյունները, աստիճան.

նեղ`

1° 27" x 1° 5"

լայն`

4° 50" x 3° 38"

Պատկերի չափը ՎՊՈՒ-44(55)-Մ տեսաընդունիչ սարքի
8 դյույմանոց հեղուկբյուրեղային մոնիտորին, մմ

68 x 197

ԼԿՄ մատրիցով մուտքային տեսախցիկի (գիշեր/ցերեկ)

զգայունակությունը, լյուքս

գունավոր պատկեր 0,01

սև-սպիտակ պատկեր 0,001

Լուծումակությունը.

հորիզոնական 600

ուղղաձիգ 500

Հեռուստաօպտիկական համակարգի

բազմապատիկությունը

F=500 մմ` 13,8

F=150 մմ` 4,11

Սպառվող հզորությունը, Վտ.

ցանցով 220 Վ, 400 Հց 50

ցանցով 27 Վ 50



* Ռազմական մախանշանակման արտադրանքի մնուշների տեխնիկական բնութագրերը բերված են ըստ` «Военная промышленность Министерства обороны Республики Армения», Е., 2011:

**ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ
ՕՊՏԻԿԱԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 2D02**

(«Լազերային տեխնիկա – Պիրկալ» ՓԲԸ)

Տեխնիկական բնութագրերը

Օպտիկամեխանիկական մոդուլ (ՕՄՄ)

1. 1/4” ձևաչափի «գիշեր-ցերեկ» գունավոր ԼԿՄ խցիկ.
փոփոխական տեսադաշտը.

լայն՝ 42°x56°,
մեղ՝ 1,2°x1,6°,

օպտիկական խոշորացումը 36x,
ակտիվ տարրերի քանակը 752x582:

2. 1/3” ձևաչափի ցածրմակարդականի միագույն
ԼԿՄ խցիկ.

տեսադաշտը 3,75°x5°,
ակտիվ տարրերի քանակը 752x582:

3. Լազերային հեռաչափ.

ալիքի երկարությունը, մմ
չափվող հեռավորությունների ընդգրկույթը, մ
չափման սխալը, մ

1064,
100, ..., 20000,
+/- 5,

4. Անկյունաչափային հենաշրջադարձային սարքվածք.

շրջադարձի ընդգրկույթը
տեղի անկյուն
շրջադարձի առավելագույն արագությունը
(ըստ երկու առանցքների), աստիճան/վրկ
կոորդինատների որոշման սխալը, անկ. րոպե

ազիմուտ +/-180°,
-30° +30°
մինչև 15
+/-5,4

ՕՄՄ-ի չափերը, մմ

326x295x228

զանգվածը, կգ

8,5

Օպերատորի բարձակ.

չափերը, մմ

300x230x107

զանգվածը, կգ

5

ներառում է պաշտպանված ամուր «Getac V100» կրովի համակարգիչ
10,4” հեղուկբյուրեղային ցուցասարքով, «XGA (1024x768)», զգայա-
րարական (սենսորային) էկրան.

Սնուցում.

• կուտակչային բլոկ՝ 24 Վ, 7 Ա·ժ,

– չափերը

203x196x137,

– զանգվածը, կգ

6,5

• փոփոխական հոսանքի ցանցից սնուցման տարբերակ

220 Վ, 50 Հգ:

Եռոտանի.

• չափերը աշխատանքային վիճակում.

– առավելագույն տրամագիծը, մմ

3 300

– առավելագույն բարձրությունը, մմ

1 650

• զանգվածը, կգ

8,2



ԳՅՈՒՐԱԿԻՐ ԳՈՊԼԵՐՅԱՆ ՌԱԳԻՈՏԵՂՈՐՈՇՈՒՄԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՊԳՈԼՍ-1

(ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ)

Տեխնիկական բնութագրերը



Մարդկանց հայտնաբերման հեռավորությունը, կմ	մինչև 2
Մեխանիկական միջոցների հայտնաբերման հեռավորությունը, կմ	մինչև 4
Հայտնաբերվող արագությունների ընդգրկույթը, կմ/ժ	3-90
Լուծելիությունը ըստ հեռավորության, մ	50
ըստ արագության, կմ/ժ	3
Անկյունային լուծելիությունը ըստ ազիմուտի	3°
Դիտադաշտի անկյունը	200°
Հաճախականությունների ընդգրկույթը	Ku
Հաղորդչի ելքային հզորությունը, դԲմ	20
Սպառվող հզորությունը, Վտ	30
Կշիռը (առանց սնուցման աղբյուրի), կգ	15

ԱՎՏՈՄԱՏ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՅՈՒՅՅ-ԱՆԿՅՈՒՆԱԶԱՓ (ԲՈՒՍՈԼ) ԱԱԲ-01

(«Երևանի օպտիկաֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ)

Տեխնիկական բնութագրերը



Անկյունային տեսադաշտը	0-83 դյույմ անկյուն (5°),
Խոշորացումը	8x
Շրջադիտակությունը, մմ	350
Անկյունների չափման սահմանները.	
հորիզոնական	60-00 դյույմ անկյուն (360°),
ուղղաձիգ	±4-00 դյույմ անկյուն (±24°),
Անկյունների չափման ճշգրտությունը	0-01 դյույմ անկյուն (3,6')
Մագնիսական ազիմուտի որոշման ճշգրտությունը	0-02 դյույմ անկյուն (7,2')
Էլեկտրասնուցումը, Վ.	
ներկառուցված կուտակչային մարտկոցով	3,7,
փոփոխական հոսանքի ցանցից	100 - 240,
հաստատուն հոսանքի ցանցից	11 - 30
Եզրաչափքերը, մմ.	
կողմնացույց-անկյունաչափի	187x127x135,
շրջադիտակի	430x105x90,
եռոտանու	960x150x100
Զանգվածը, կգ.	
կողմնացույց-անկյունաչափի	2,8,
շրջադիտակի	0,7,
եռոտանու	3,4:

**12,7x108-մմ ՀԵՌԱՀԱՐ ԳԻՊՈՒԿԱՀԱՐԱԿԱՆ ՀՐԱՅԱՆ
Կ-15**

(«Գառնի-լեռ» ԲԲԸ)



Տեխնիկական բնութագրերը

Տրամաչափը, մմ	12,7x108 (Ե-32)
գործառումը	երկայնական սահող փակադակ պտտոտակային փակմամբ
Հրաձգության տեսակը	միակի
Զանգվածը, կգ	18 (երկնդի նեցուկներով, առանց օպտիկական նշանոցի)
Հրացանի երկարությունը, մմ	1500
Փողի երկարությունը, մմ	1100
Փողը	4 ակոս` 420 մմ քայլով
Նշանոցը, օպտիկական	6* և ավելի
Մարտական արագաձգությունը, կրակոց/րոպե	16
Գնդակի սկզբնական արագությունը, մ/վ	810
Նշանառվական հեռահարությունը, մ	2000
Արդյունավետ հեռահարությունը, մ	1600

**ՄԵՐՉԱՄԱՐՏԻ ՀԱՄԱԶԱՐԿԱՅԻՆ ԿՐԱԿԻ
ԱՐՉԱԿՄԱՆ ԿԱՅԱՆՔ**


(«Գառնի-լեռ» ԲԲԸ)



Տեխնիկական բնութագրերը

Օգտագործվող զինամթերքը	ՏԲ-1, ՕԳ-7 նռնակներ կամ դրանց նմանակները
Առավելագույն հեռահարությունը, մ	1300
Հրաձգության բանելակարգը	համազարկային և միակի
ՈՒդդորդիչների քանակը, հատ	12
Համազարկով 12 կրակոցի կատարման ժամանակը, ոչ ավելի, քան, վրկ.	10
ՈՒդդորդիչների տրցակի շրջադարձի անկյունները.	
հորիզոնական՝	± 30°
ուղղաձիգ՝	-6°-ից մինչև +50°
ՈՒդդորդման հաղորդակը՝	ձեռքի
Կրակի կառավարման վահանակ՝	Էլեկտրական, շարժական
Հիմնական քարշակը՝	ՄՏԼԲ (թեթև զրահապատ քաղմանպատակ քարշակ), Գ.Ա.Զ-66

**ՉԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՌԵԱԿՏԻՎ ԱՐԿ
Ա-10 (ՆՌՍ-10)
(«Գառնի-լեռ» ԲԲԸ)**



Տեխնիկական բնութագրերը

Հրթիռային արկի առավելագույն հեռահարությունը, կմ	9,3
Հրթիռային արկի նվազագույն հեռահարությունը, կմ	1
Համատարած խոցման շառավիղը, մ	10
Հրթիռային արկի երկարությունը, մմ	993
Հրթիռային արկի տրամագիծը, մմ	82,5
Հրթիռային արկի կշիռը, կգ	10,55
Պայթյունից առաջացած ձագարածն փոսի շառավիղը, մ	0,7
Պայթյունից առաջացած ձագարածն փոսի խորությունը, մ	0,5
Կողային ցրում	1/50
Երկայնական ցրում	1/40
Պայթուցիչ	բեկորաֆուզասային

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մալրի, Զ. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մալրի,
Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

ՀԱՅ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգայնական – националистический; nationalist, nationalistic	բանելակարգ – режим; regime
ազգայնամուլ – националист, шовинист; nationalist, chauvinist	բարձակ – консоль; console, bracket
ազգայնամուլական – 1. националистический, шовинистический, 2. националист, шовинист; 1. nationalist, nationalistic, chauvinistic, 2. nationalist, chauvinist	բացազատում – развертывание; deployment
անդրհորիզոնային տեղորոշում – загоризонтная локация; transhorizon location	զադոնագրման տեխնիկա – шифровальная техника; encoding techniques
անիշխանություն – анархия; anarchy	զերակայություն – приоритет; priority
անհատապաշտական անիշխանական րնազդ – индивидуалистический анархический инстинкт; individualist anarchist instinct	զիտական ճեղքում – научный прорыв; scientific breakthrough
անվանացուցակ – номенклатура; nomenclature	զիտություն – наука; science
ապապետականացում – денационализация; denationalization	– կիրառական զիտություն – прикладная наука; applied science
առանցքային դեր – ключевая роль; key role	– հիմնարար զիտություն – фундаментальная наука; fundamental science
առաջավարություն – лидерство; leadership	զոյաբանական տարբերություն – онтологическое различие; ontological difference
առասպելոյթ – мифологема; mythologem	զործիքային բազա – приборная база; instrument base
արժեքաբանություն – аксиология; axiology	եզրաչափք – габарит; overall dimensions
բազմազանեցում – диверсификация; diversification	եռոտանի – тренога; tripod
բազմապատիկություն – кратность; multiplicity	երթուղավորում – маршрутизация; routing
	երկայնական սահող փակաղակ – продольно-скользящий затвор; longitudinally sliding gate
	երկճղի նեցուկ – сошка; bipod
	զզայարարական էկրան – сенсорный экран; touch screen
	զզայունակություն – чувствительность;

sensitivity
 զենք – оружие; arms, weapon
 – գերճշգրիտ զենք – 1. высокоточное оружие, 2. сверхточное оружие; 1. precision guided weapon, 2. ultraprecise weapon
 – խելացի զենք – интеллектуальное оружие; intelligent weapon
 զորք – войско; troops
 – հակառակորդի զորք – войско противника; enemy troops
 – յուրախն զորք – свое войско; friendly troops
 լողունակույթյուն – плавучесть; buoyancy, flotation
 խանգարում – помеха; interference
 խանգարումաստեղծիչ – постановщик помех; jammer
 խթանիչ – стимулятор; stimulator
 կայան – 1. станция, 2. база; 1. station, 2. base
 – զորակայան – военная база; military base
 – նազմակայան – ставка; headquarters
 կառավարում – управление, менеджмент; management
 – հավատարմագրային կառավարում – концессионное управление; concession management
 կերպափոխում – трансформация; transformation
 կիսապատրաստուր – полуфабрикат; half-finished product
 կողմնացույց-անկյունաչափ – буссоль; compass, aiming circle, boussole
 կրակ – огонь; fire
 – կրակի դիպուկություն – меткость огня; fire accuracy
 – համագրկային կրակ – залповый огонь; volley fire
 կրիչ բլոկ – несущий блок; bearing block
 կրկնիչ – 1. повторитель, 2. репитер;

repeater
 համակարգ – система; system
 – բազմաֆունկցիոնալ համակարգ – многофункциональная система; multifunctional system
 – ռադիոնուղեվարական համակարգ – радионавигационная система; radionavigation system
 համասանույթյուն – паритет; parity
 համատարած խցման գոտի – зона сплошного поражения; zone of total destruction
 հատվածայնություն – фрагментарность; fragmentariness
 հարացույց – парадигма; paradigm
 հեծելապարեկ – конный патруль; mounted patrol
 հենաշրջադարձային սարքվածք – опорно-поворотное устройство; rotary support
 հեռահաղորդակցական միջոց – телекоммуникационное средство; communication tool
 հեռուստաօպտիկական դիտոց – телеоптический визир; optical viewfinder
 հիմնադրամ – фонд; fund, foundation
 ձևաչափ – формат; format
 ճեղքումնային աշխատանք – прорывная работа; breakthrough work
 ճշգրտություն – точность; accuracy, precision, exactness
 մասնաբաժին – доля; share
 մարտաբեմ – театр военных действий; theatre of war, battleground
 միակի կրակոց – одиночный выстрел; single fire
 մշտագնում – мониторинг; monitoring
 մոնետարիստական լծակ – монетаристский рычаг; monetary lever
 մրցողականություն – состязательность; competitiveness

ներդրումային միջավայր – инвестиционная среда; investment environment
 նշանառական հեռահարություն – прицельная дальность стрельбы; sighting range
 նորամուծական գործընթաց – инновационный процесс; innovation process
 շրջադիտակ – перископ; periscope
 շրջադիտակություն – перископичность; periscopicity
 շրջանային տեսաձրում – 1. круговое обозревание, 2. круговое сканирование; 1. circular survey, 2. circular scanning
 չափորոշիչ – норматив; norm, standard
 ւառքառավածք – изделие; item, product
 ռազմականացում – милитаризация; militarization
 ստրեսածին ներգործություն – стрессогенное воздействие; stressful impact
 վերազգային կորպորացիա – транснациональная корпорация; transnational corporation
 տեսակարար կշիռ – удельный вес;

specific weight
 տեսանմանարկումային մոդելավորում – видеоимитационное моделирование; video simulation
 տնտեսություն – 1. хозяйство, 2. экономика; economy
 – գիտատար տնտեսություն – наукоемкая экономика; science intensive economy
 – նպատակային տնտեսություն – целевая экономика; target economy
 տրամաբանականություն – логичность; consistency
 տրցակ – 1. пакет, 2. пучок, связка; bundle
 ցուցասարք – дисплей; display
 ուղիղ տեսանելիություն – прямая видимость; direct view
 ուղղահիգ գոտիականություն – вертикальная зональность; vertical zoning
 ուղղորդման հաղորդակ – привод наведения; induction drive
 փուլավորված ալեհավաքային վանդակ – фазированная антенная решетка; phased antenna
 ֆիսկալ խրան – фискальный стимул; fiscal incentive

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

аксиология – արժեքաբանություն
 анархия – անիշխանություն
 база – 1. հիմք, 2. բազա, 3. կայան
 – военная база – գորակայան
 – приборная база – գործիքային բազա
 буссоль – կողմնացույց – անկյունաչափ
 вертикальная зональность – ուղղահիգ գոտիականություն
 видеоимитационное моделирование – տեսանմանարկումային մոդելավորում

войско – զորք
 – войско противника – հակառակորդի զորք
 – свое войско – յուրային զորք
 габарит – եզրաչափք
 денационализация – ապապետականացում
 диверсификация – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
 дисплей – ցուցասարք
 доля – մասնաբաժին

загоризонтная локация – անդրհորիզոնային տեղորոշում
 зона сплошного поражения – համատարած խոցման գոտի
 изделие – արտադրանք, պատրաստվածք
 инвестиционная среда – ներդրումային միջավայր
 индивидуалистический анархический инстинкт – անհատապաշտական անիշխանական բնագդ
 инновационный процесс – նորամուծական գործընթաց
 ключевая роль – առանցքային դեր
 конный патруль – հեծելապարեկ
 консоль – 1. բարձակ, 2. ծաղկապատվանդան
 кратность – բազմապատիկություն
 круговой – շրջանային
 – круговое обозрение – շրջանային տեսածրում
 – круговое сканирование – շրջանային տեսածրում
 лидерство – առաջավարություն
 логичность – տրամաբանականություն
 маршрутизация – երթուղավորում
 менеджмент – *см. управление*
 милитаризация – ռազմականացում
 мифологема – առասպելույթ
 монетаристский рычаг – մոնետարիստական լծակ
 мониторинг – մշտագնում
 наука – գիտություն
 – прикладная наука – կիրառական գիտություն
 – фундаментальная наука – հիմնարար գիտություն
 научный прорыв – գիտական ճեղքում
 националист – ազգայնամոլ, ազգայնամոլական
 националистический – 1. ազգայնական, 2. ազգայնամոլական

несущий блок – կրիչ բլոկ
 номенклатура – անվանացուցակ
 норматив – նորմատիվ, չափորոշիչ
 огонь – 1. կրակ, 2. հուր
 – залповый огонь – համազարկային կրակ
 – меткость огня – կրակի դիպուկություն
 одиночный выстрел – միակի կրակոց
 онтологическое различие – գոյաբանական տարբերություն
 опорно-поворотное устройство – հենաշրջադարձային սարքվածք
 оружие – զենք
 – высокоточное оружие – գերճշգրիտ զենք
 – интеллектуальное оружие – խելացի զենք
 – сверхточное оружие – գերճշգրիտ զենք
 пакет – 1. կապոց, սրցակ, 2. փաթեթ, թղթե տպարակ, 3. ծրար
 парадигма – հարացույց
 паритет – համամասնություն
 перископ – շրջադիտակ
 перископичность – շրջադիտակություն
 плавучесть – լողունակություն
 повторитель – կրկնիչ
 полуфабрикат – կիսապատրաստուր
 помеха – 1. խանգարում, 2. արգելք, խոչընդոտ
 – постановщик помех – խանգարումաստեղծիչ
 привод наведения – ուղղորդման հաղորդակ
 приоритет – 1. գերակայություն, 2. առաջնություն
 прицельная дальность стрельбы – նշանակական հեռահարություն
 продольно-скользящий затвор – երկայնական սահող փակարկակ
 прорывная работа – ճեղքումնային

աշխատանք
 прямая видимость – ուղիղ տեսանելի-
 րություն
 пучок – 1. տրցակ, 2. փունջ
 разворачивание – 1. ծավալում, 2. բա-
 ցազատում
 режим – 1. աշխատակարգ, 2. բանելա-
 կարգ, 3. վարչակարգ, 4. ռեժիմ
 репитер – կրկնիչ
 связка – 1. *см. пучок*, 2. կապոց
 сенсорный экран – զգայարարական
 էկրան
 система – համակարգ
 – многофункциональная система –
 բազմաֆունկցիոնալ համակարգ
 – радионавигационная система –
 ռադիոնավիգացիոնալ համակարգ
 связательность – մրցողականություն
 сошка – երկճիղի նեցուկ
 ставка – 1. հաստիքադրույք, 2. ռազմա-
 կայան, 3. դրողչեր
 станция – կայան
 стимулятор – խթանիչ
 стрессогенное воздействие – ստրես-
 սածին ներգործություն
 театр военных действий – ռազմա-
 կան գործողությունների թատերաբեմ,
 մարտաբեմ
 телекоммуникационное средство –
 հեռահաղորդակցական միջոց
 телеоптический визир – հեռուստա-

օպտիկական դիտոց
 точность – ճշգրտություն
 транснациональная корпорация –
 վերազգային կորպորացիա
 трансформация – կերպափոխում
 тренога – եռոտանի
 удельный вес – տեսակարար կշիռ
 управление – կառավարում
 – концессионное управление – հա-
 վատարմագրային կառավարում
 фазированная антенная решетка –
 փուլավորված ալեհավաքային վան-
 դակ
 фискальный стимул – ֆիսկալ խթան
 фонд – 1. հիմնադրամ, 2. ֆոնդ
 формат – ձևաչափ
 фрагментарность – հատվածայնույթ-
 րուն
 хозяйство – տնտեսություն
 чувствительность – զգայունակություն
 шифровальная техника – գաղտնա-
 գրման տեխնիկա
 шовинист – *см. националист*
 шовинистический – *см. национа-
 листический*
 экономика – տնտեսություն, էկոնոմի-
 կա
 – целевая экономика – նպատակա-
 յին տնտեսություն
 – наукоемкая экономика – գիտա-
 տար տնտեսություն

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

accuracy – ճշգրտություն
 aiming circle – *see compass*
 anarchy – անիշխանություն
 archetypal fighter – արխետիպային
 կռվող
 arms – 1. զենք, 2. զինանշան
 axiology – արժեքաբանություն
 base – 1. հիմք, 2. բազա, 3. կայան

– instrument base – գործիքային բազա
 – military base – զորակայան
 battleground – *see theatre of war*
 bearing block – կրիչ բլոկ
 bipod – երկճիղի նեցուկ
 boussole – *see compass*
 bracket – 1. *see console*, 2. փակագիծ
 breakthrough work – ճեղքումնային

աշխատանք
 bundle– 1. հանգույց, 2. տրցակ, 3. փաթեթ
 buoyancy– լողունակություն
 chauvinist– 1. see *nationalist* 2, 2. see *nationalist* 3
 chauvinistic– see *nationalist* 3
 circular– շրջանային
 – circular scanning– շրջանային տեսածրում
 – circular survey– շրջանային տեսածրում
 communication tool– հեռահաղորդակցական միջոց
 compass– կողմնացույց-անկյունաչափ
 competitiveness– մրցողականություն
 consistency– 1. տրամաբանականություն, 2. կայունություն, հետևողականություն, 3. խտություն
 console– բարձակ
 denationalization– ապապետականացում
 deployment– 1. ծավալում, 2. բացազատում, 3. կիրառում, օգտագործում
 direct view– ուղիղ տեսանելիություն
 display– ցուցասարք
 diversification– 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
 economy– տնտեսություն, էկոնոմիկա
 – science intensive economy– գիտատար տնտեսություն
 – target economy– նպատակային տնտեսություն
 encoding techniques– գաղտնագրման տեխնիկա
 exactness– see *accuracy*
 fire– կրակ
 – fire accuracy– կրակի դիպուկություն
 – single fire– միակի կրակոց
 – volley fire– համագարկային կրակ
 fiscal incentive– ֆիսկալ խթան
 flotation– 1. see *buoyancy*, 2. արժե-

թղթերի վաճառք շուկայում
 format– ձևաչափ
 foundation– 1. հիմք, 2. see *fund* 2, 3. հիմնադրում
 fragmentariness– հատվածայնություն
 fund– 1. ֆոնդ, 2. հիմնադրամ
 half-finished product– կիսապատրաստուր
 headquarters– ռազմական
 individualist anarchist instinct– անհատապաշտական անիշխանական բնագղ
 induction drive– ուղղորդման հաղորդակ
 innovation process– նորամուծական գործընթաց
 interference– 1. միջամտություն, 2. խանգարում
 investment environment– ներդրումային միջավայր
 item– 1. կետ, 2. առարկա, 3. պատրաստվածք
 jammer– խանգարումաստեղծիչ
 key role– առանցքային դեր
 leadership– առաջավարություն
 longitudinally sliding gate– երկայնական սահող փակադակ
 management– կառավարում
 – concession management– հավատարմագրային կառավարում
 militarization– ռազմականացում
 monetary lever– մոնետարիստական լծակ
 monitoring– 1. մշտագնում, 2. գաղտնագրում
 mounted patrol– հեծելապարեկ
 multiplicity– բազմապատիկություն
 mythologem– առասպելույթ
 nationalist– 1. ազգայնական, 2. ազգայնամոլ, 3. ազգայնամոլական
 nationalistic– see *nationalist*
 nomenclature– անվանացուցակ
 norm– 1. չափորոշիչ, 2. սահմանված

կարգ	հարություն
ontological difference– գոյաբանական տարբերություն	specific weight– տեսակարար կշիռ
optical viewfinder– հեռուստասպտիկական դիտող	standard– see <i>norm</i>
overall dimensions– եզրաչափք	station– 1. կանգառ, կայարան, 2. կայան
paradigm– 1. հարացույց, 2. նմուշ, օրինակ	stimulator– խթանիչ
parity– 1. իրավահավասարություն, 2. համամասնություն	stressful impact– ստրեսսածին ներգործություն
periscope– շրջադիտակ	system– համակարգ
periscopicity– շրջադիտակություն	– multifunctional system– բազմաֆունկցիոնալ համակարգ
phased antenna– փուլավորված ակտիվաբային վանդակ	– radionavigation system– ռադիոնավարական համակարգ
precision– see <i>accuracy</i>	theatre of war– մարտաբեմ
priority– 1. գերակայություն, 2. առաջնություն	touch screen– զգայարարական էկրան
product– 1. see <i>item</i> , 2. սպրանք, 3. արդյունք	transformation– կերպավորխում
regime– 1. աշխատակարգ, 2. բանեղակարգ, 3. վարչակարգ, 4. ռեժիմ	transhorizon location– անդրհորիզոնային տեղորոշում
repeater– կրկնիչ	transnational corporation– վերազգային կորպորացիա
rotary support– հենաշրջադարձային սարքվածք	tripod– եռոտանի
routing– երթուղավորում	troops– զորք
science– գիտություն	– enemy troops– հակառակորդի զորք
– applied science– կիրառական գիտություն	– friendly troops– յուրային զորք
– fundamental science– հիմնարար գիտություն	vertical zoning– ուղղաձիգ գոտիակալություն
scientific break through– գիտական ճեղքում	video simulation– տեսանմանարկումային մոդելավորում
sensitivity– 1. զգայունակություն, 2. զգայունություն	weapon– see <i>arms</i>
share– մասնաբաժին	– intelligent weapon– խելացի զենք
sighting range– նշանառվական հեռա-	– precision guided weapon– գերճշգրիտ զենք
	– ultra-precise weapon– գերճշգրիտ զենք
	zone of total destruction– համատարած խոցման գոտի

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուականատեսնախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր արդյունքները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և զաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՄՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Զ. Պեղրոսյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*
Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ս. Ավերիսյանի, Ա. Հ. Հակոբյանի,*
Ա. Մ. Մովսիսյանի, Լ. Հ. Պասպիկյանի
Համակարգչային ապահովումը՝ *Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի, Ն. Զ. Ծալորյանի*
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարոխանյան*

Լուսանկարչական ապահովումը՝
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության,
ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» պաշտոնաթերթի

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>
Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>
Էլ. փոստ՝ haykakan_banak@mail.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2011 թ.


Ստորագրվել է տպագրության 02.12.2011: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ+ 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 375:
Տառատեսակները՝ «Արիալ», «Թայմս» և «Բարբիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:



Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը
և Լեհաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Տ. Սեմոնյակը
ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի
Լեհաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ժամանակ,
որի ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն
ռազմական, ռազմատեխնիկական և գիտահետազոտական ոլորտներում
համագործակցության վերաբերյալ համաձայնագրի ստորագրման մասին.

Վարչավա, 2011 թ. սեպտեմբերի 7



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ